



ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույց

ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



Գայասանի Գելսինկյան
կոմիտե

ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույց



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Հայաստանի ՅԵԼԻՆԿԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Երևան 2009

Թարգմանությունը կատարվել է ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի
«Օրենքի միջոցով հանուն ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի» (Վեներտիկի
հանձնաժողով) «Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույց» հրատարակության բնագրից

Պատրաստվել և տպագրվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և
Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից

Հրատարակվել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և
մարդու իրավունքների գրասենյակի կողմից
Հասցեն՝ Ալ. Ույազդովսկի 19
00-557 Վարչավա
Լեհաստան
www.osce.org/odhr

© ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2007թ.

Սույն հրատարակության բովանդակությունը կարող է ազատորեն օգտագործվել և
պատճենվել կրթության և այլ ոչ առևտրային նպատակներով՝ երաշխավորելով,
որ որևէ նման վերարտադրումը կզուգորդվի ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ին հղումով:

Թարգմանիչներ՝ Արմինե Թուփսիկյան և Արմեն Վարոսյան
Հայերեն կազմի ձևավորող՝ Ա.Ուռուտյան
Տպագրված է Հայաստանում՝ «Ասողիկ» տպարանում:

Խաղաղ հավաքների ազատություն Ուղեցույց

Պատասխել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հավաքների ազատության հարցերով փորձագետների խորհրդի կողմից

Նինա Բելյակա
Ղևիդ Գուրբերգեր
Նիլ Ջարման
Մուատար Ս. Խայդարովա
Սերգեյ Օստաֆ
Վարդան Պողոսյան
Անջեյ Ժեպլինսկի
Ալեքսանդր Վաշկևիչ
Եվգենի Ժովտիս

Մայքլ Համիլթոն՝ Խորհրդի քարտուղար

Բովանդակություն

Նախաբան	7
Առաջաբան	9
Ներածություն	11
ԲԱԺԻՆ Ա. Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույց	14
ԲԱԺԻՆ Բ. Մեկնաբանող ծանոթագրություններ	22
Ներածություն	23
ՄԱՍ I. Խաղաղ հավաքների ազատություն	24
1. Խաղաղ հավաքների ազատության կարգավորումը	24
Հավաքների ազատության նշանակությունը (կետ 3-6)	24
Իրավական դաշտը (կետ 7-12)	25
Խաղաղ հավաքների ազատությունը այլ իրավունքների և ազատությունների համատեքստում (կետ 13-14)	28
«Հավաքի» հիմնական սահմանումն ու կատեգորիաները (կետ 15-21)	29
Խաղաղ և ոչ օրինական հավաքներ (կետ 22-23)	32
2. Ընդհանուր սկզբունքներ (կետ 24)	33
Հօգուտ հավաքների անցկացման կանխավարկած (կետ 25)	33
Խաղաղ հավաքները պաշտպանելու պետության պարտավորությունը (կետ 26-29)	34
Օրինականությունը (կետ 30-33)	36
Համաչափությունը (կետ 34-40)	36
Լավ վարչարարություն, որոշումների թափանցիկ կայացում և արդարադատության մատչելիություն (կետ 41-44)	39
Խտրականության բացառում (կետ 45-59)	40
3. Հավաքների ազատության սահմանափակումները (կետ 60)	46
Հավաքների ազատության նկատմամբ կիրառվող սահմանափակումների օրինական հիմքերը (կետ 61-74)	46
Ընդդեմ ահաբեկչության և ծայրահեղականության օրենսդրությունը (կետ 75-77)	51
Շեղում պարտավորությունների կատարումից պատերազմի կամ այլ արտակարգ իրավիճակների ժամանակ (կետ 78-79)	53
Սահմանափակումների տեսակները (կետ 80-90)	53

4. Ընթացակարգային հարցեր	58
Նախնական իրազեկում (կետ 91-94)	58
Իրազեկում, այլ ոչ թույլտվության խնդրանք (կետ 95-96)	59
Ինքնաբուխ հավաքներ (կետ 97-98)	60
Այլ բացառություններ նախնական իրազեկման պահանջից (կետ 99)	60
Համաժամանակյա միջոցառումներ (կետ 100-102)	61
Որոշումների կայացման և դրանց հիմնավորվածության ստուգման գործընթացը (կետ 103-111)	62
ՄԱՍ II. Խաղաղ հավաքների ազատության օրենսդրական կարգավորումը	65
Ներածություն (կետ 112-114)	65
5. Իրավադատի մարմինների աշխատակիցների իրավունքներն ու դարձակառնությունները կետ 115-116	67
Ուսուցում (կետ 117-119)	67
Հասարակական կարգի պահպանությունը. պատշաճ գործելակերպի ընդհանուր սկզբունքները (կետ 120-131)	68
Խաղաղ ոչ օրինական հավաքների կարգավորումը (կետ 132-135)	72
Խաղաղ հավաքներ, որոնք վերածվում են ոչ խաղաղ հավաքների (կետ 136)	74
Հավաքների ցրումը (կետ 137-140)	74
Ուժի գործադրումը (կետ 141-145)	76
Պատասխանատվություն և հաշվետվողականություն (կետ 146-148)	79
6. Կազմակերպչի դարձակառնությունները	81
Կազմակերպիչը (կետ 149-150)	81
Հավաքի խաղաղ բնույթի ապահովումը. դրական գործելակերպի սկզբունքները (151-155)	81
Հավաքների հսկումը (կետ 156-160)	83
Պատասխանատվությունը (կետ 161-162)	85
7. Մարդու իրավունքների մոնիթորինգ իրականացնողները, լրացվածի ջոջոցներն ու այլ շահագրգիռ կողմեր	86
Մարդու իրավունքների պաշտպանները, դիտորդներն ու մոնիթորինգ իրականացնողները (կետ 163 -167)	86
Լրատվամիջոցները (կետ 168 -169)	89
Այլ շահագրգիռ կողմեր (կետ 170-171)	89
Հավելված Ա. Մեջբերված գործեր	91
Հավելված Բ. Հիմնական եզրույթների անգլերեն-հայերեն բառարան	95
Հավելված Գ. Փորձագիտական խումբ	101
Ծանոթագրություններ	105
ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի մասին	119
Հայաստանի Հանրապետության օրենքը «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին»	121

Նախաբան

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակն ուրախ են ներկայացնել «Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույցի» հայերեն թարգմանությունը, որն առաջին անգամ հրատարակվել էր ԺՀՄԻԳ-ի կողմից 2007 թ. մարտին, ապա՝ հաստատվել նաև Եվրոպայի խորհրդի Օրենքի միջոցով հանուն ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից:

Հուսով ենք՝ Ուղեցույցի հայերեն թարգմանությամբ նպաստել, որ տեղական միջոցառումներին և ծրագրերին նոր թափ հաղորդելու միջոցով հավաքների ազատության մասին Հայաստանի օրենսդրությունը և պրակտիկան համապատասխանեցվեն ԵԱՀԿ-ի նկատմամբ պետության ստանձնած պարտավորություններին և միջազգային այլ չափանիշների:

Ուղեցույցը նախատեսված է որպես գործնական ձեռնարկ, որը կարող են օգտագործել տարբեր սուբյեկտներ, այդ թվում՝ օրենսդրություն մշակողները, քաղաքական գործիչները, իրավաբանները, ոստիկանները, տեղական պաշտոնյաները, արհեստակցական միությունները, հավաքների կազմակերպիչները և մասնակիցները, ոչ կառավարական կազմակերպությունները և հավաքների ազատության ու ոստիկանության գործողությունների մոնիթորինգ իրականացնողները:

ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը ակտիվորեն օժանդակել են Հայաստանի օրենսդիր մարմնին՝ մշակելու խաղաղ հավաքների մասին այնպիսի օրենսդրություն, որը համահունչ լինի միջազգային չափանիշներին: Օժանդակությունը հիմնականում ցուցաբերվել է «ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և 2004 թվականից ի վեր օրենքում առաջարկված տարբեր փոփոխությունների վերաբերյալ իրավական մեկնաբանությունների, փորձագիտական խորհրդատվության և բաց հանդիպումների տեսքով:

Նպատակ է դրվել՝ համագործակցել և աջակցել, որ միջազգային չափանիշներով թուլյատրվող սահմաններում մշակվեն տեղական լուծումներ:

Միջազգային չափանիշներին նոր օրենսդրության համապատասխանության վերջնական փորձությունը լինելու է դրա իրագործումը: Ուստի, մի շարք փորձագիտական եզրակացություններում խորհուրդ է տրվել մշակել օրենքի կատարման նկատմամբ մոնիթորինգի և համապատասխան տվյալների հավաքման մեխանիզմներ:

Չետևելով այդ խորհրդին՝ ԺՅՄԻԳ-ը, ԵԱՅԿ երևանյան գրասենյակը և Եվրոպայի խորհուրդն օժանդակել են Հայաստանի հելսինկյան կոմիտեին՝ իրագործելու հավաքների ազատության մոնիթորինգի ոլորտում իրավապաշտպանների կարողությունների զարգացման աշխատանքներ:

Ծրագրի հիմնական նպատակներից է խթանել ազգային և տեղական մակարդակով հավաքների ազատության պաշտպանությունը և ապահովումը կատարելագործելու ուղիների վերաբերյալ երկխոսությունն իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև:

Համոզված ենք, որ այդ գործընթացում լուրջ դերակատարում կունենա «Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույցի» հայերեն թարգմանությունը:

Դեսպան Յանեշ Լենարչիչ
ԺՅՄԻԳ *síorben*

Դեսպան Սերգեյ Կապինոս
ԵԱՅԿ երևանյան գրասենյակի
ղեկավար

Առաջաբան

Խաղաղ հավաքների իրավունքը էական պայման է մարդու մյուս իրավունքների, օրինակ՝ արտահայտվելու ազատության իրավունքը իրականացնելու համար: Որպես ժողովրդավարության ճշմարիտ հիմք՝ հավաքների ազատության իրավունքը երաշխավորվում է մարդու իրավունքներին վերաբերող բոլոր հիմնական պայմանագրերում, ինչպես նաև 1991 թ. Կոպենհագենում ԵԱՀԿ մասնակից պետությունների ստանձնած պարտավորությամբ: Մեր գրասենյակը ցուցաբերել և ցուցաբերում է օրենսդրական աջակցություն մասնակից պետություններին, որպեսզի նրանք հնարավորություն ունենան խաղաղ հավաքների ազատությանը վերաբերող իրենց օրենսդրությունները համապատասխանեցնելու ԵԱՀԿ հանդեպ ստանձնած պարտավորություններին և միջազգային չափանիշներին: *Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույցը* այս օժանդակության մի նոր անկյունաքար է: Այս փաստաթուղթը տեղադրված է ԺՂՄԻԳ-ի *Legislationline.org* տվյալների բազայում: Օրենսդիրները տվյալների այդ բազայի միջոցով կարող են ծանոթանալ այլ երկրների օրենսդրություններին, ինչը կարող է օգնել հավաքների ազատության իրականացումը կարգավորող իրենց օրենսդրության մշակմանը:

Չնայած միջազգային չափանիշներն առաջարկում են ընդհանուր հստակ շրջանակ, սակայն օրենսդիր և գործադիր մարմինների համար ներպետական համակարգում օրենքի միջոցով և գործնականում խաղաղ հավաքների ազատության իրավունքը կարգավորող ուղեցույցները սակավաթիվ են: Լավ օրենքները չեն կարող ինքնաբերաբար հանգել գործնական բարելավումների: Այն երկրներում, ուր ընդունվել է հատուկ օրենսդրություն խնդրո առարկայի վերաբերյալ, կարելի է մի շարք դեպքերում նկատել ռիսկերի կրճատման միտում՝ կապված այսպես կոչված «վարչահրամայական մոտեցման» հետ, որին բնորոշ են առավել մեծ կարգավորումը, վերահսկողությունը և բյուրոկրատական խոչընդոտները: Օրինակ՝ զանգվածային ցույցերն ու հանրահավաքները միշտ չէ, որ դիտվում են այն առօրեական տարրերի շարքում,

որոնք ձևավորում են բազմակարծության վրա հիմնված ժողովրդավարություն: Դրանք հաճախ իշխանությունների կողմից համարվում են կասկածելի՝ հանգեցնելով ավելի մեծ կանոնակարգման և վերահսկողության: Այս միտումը, անշուշտ, նպաստում է քաղաքացիական հասարակության և կառավարության միջև գոյություն ունեցող անջրպետի մեծացմանը: Կարճ ասած՝ կարծում են, որ ԵԱՀԿ տարածաշրջանում հանդիպող որոշ օրենդրական համակարգեր և գործելակերպեր արտացոլում են այն համոզմունքը, որ հենց ինքը՝ պետությունը, այնպես է կանոնակարգում նշված ազատությունը, որ հաճախ դա հանգեցնում է այդ ազատության *դե ֆակտո* մերժման: Այս հանգամանքը հուշեց ԺՅՄԻԳ-ին, որ այն մշակի ուղեցույց՝ նպատակ ունենալով ձևակերպել այն նվազագույն չափանիշները, որով հավաքների ազատության իրավունքը կարգավորելիս պետք է առաջնորդվեն ազգային իշխանությունները: *Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույցը* նախատեսված է և՛ օրենսդիրների, և՛ օրենքների իրականացման գործում պատասխանատու գործադիրների համար:

Որպեսզի կիրառելի լինի տարբեր երկրների համար, Ուղեցույցն ապահովում է ոչ թե համապարփակ լուծում անխտիր յուրաքանչյուր երկրի համար, այլ արտացոլում է լավագույն միջազգային փորձը: Ուստի ԺՅՄԻԳ-ը ստեղծեց Փորձագետների խորհուրդ և հրավիրեց չորս կլոր սեղան-քննարկումներ, որպեսզի Ուղեցույցի մշակումը իրոք մասնակցային և ամփոփ լիներ: Կլոր սեղաններն օգնեցին հասկանալու օրենքի և իրական կյանքի հանգուցակետում նկատվող միտումները: 2006 թ. ընթացքում ԵԱՀԿ մասնակից պետությունների մեծ մասից 150 գործադիր և գիտաշխատող մասնակցեցին կլոր սեղան-քննարկումներին:

Այս գործընթացի ավարտին ԵԱՀԿ մասնակից պետությունների և ավելի լայն հասարակայնության համար մենք սիրով ներկայացնում ենք սույն Ուղեցույցը: Այն պարունակում է գործուն մեխանիզմներ, որոնց արժեքը պարբերաբար բարելավման արդյունքում կմեծանա: Ուղեցույցը սահմանում է օրենսդրության իրականացման պարամետրերը միջազգային չափանիշներին համապատասխան և բերում մասնակից առանձին պետությունների լավագույն փորձից վերցված հիմնական սկզբունքների կիրառման օրինակներ: Յուրաքանչյուրը շատերը՝ իրավաբաններ, ոստիկանության աշխատողներ, կառավարության պաշտոնյաներ, դատավորներ, գիտնականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, կօգտագործեն այն և իրենց փորձառությամբ կնպաստեն սույն փաստաթղթի հետագա բարելավմանը:

Ներածություն

Խաղաղ հավաքների ազատություն. Ուղեցույցը՝ Մեկնաբանող ծանոթագրություններով, մշակվել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) Հավաքների ազատության գծով փորձագետների խորհրդի կողմից՝ խորհրդակցելով Եվրոպայի խորհրդի՝ «Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի» (Վենետիկի հանձնաժողովի) հետ: Վենետիկի հանձնաժողովի անդամների մեկնաբանությունները հաշվի են առնվել փաստաթղթի մշակման նախնական փուլում¹:

Մեկնաբանող ծանոթագրություններն Ուղեցույցի անբաժանելի մասն են: Այդ երկու փաստաթղթերը պետք է դիտարկվեն միասին:

Ուղեցույցը սկզբում մշակվել է ԺՀՄԻԳ-ի կողմից և ծառայել որպես հետագա լրամշակումների հիմք: Այն տեղադրվել է ԺՀՄԻԳ-ի կայքում և բաժանվել նրանց, ովքեր ներդրում են ունեցել մշակման գործընթացում, մասնավորապես՝ Թբիլիսիում, Բելգրադում, Ալմաթիում և Վարշավայում անցկացված կլոր սեղան-քննարկումների մասնակիցներին: Ընդհանուր առմամբ 2006 թ. ընթացքում ԵԱՀԿ մասնակից պետություններից 29-ի ներկայացուցիչներ՝ շուրջ 150 մասնակից, մասնակցել են տեղի ունեցած կլոր սեղան-քննարկումներին: Դրանք ամենատարբեր շահեր ներկայացնող մարդիկ էին՝ ոստիկանության պաշտոնյաներ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների անդամներ, նախարարներ, հավաքների կազմակերպիչներ, գիտնական-մեկնաբանողներ և պրակտիկ իրավաբաններ: Ուղեցույցում և դրան կցված ծանոթագրություններում հաշվի են առել վերոնշյալ միջոցառումների մասնակիցների՝ կլոր սեղան- քննարկումների ընթացքում, ինչպես նաև հետագայում արված դիտողությունները: Առանց նման ներդրման, որն ամենատարբեր համատեքստերում գործնական փորձառության արտացոլումն է, սույն փաստաթուղթը կլիներ ոչ համապարփակ:

Հավաքների ազատության իրավական կարգավորումը բարդ խնդիր է: Հարցերի (և՛ ընթացակարգային, և՛ նյութաիրավական) լայն շրջանակ պետք է քննարկվի, որպեսզի լավագույնս ապահովվի ազատությունից օգտվելու իրավունքը: Ավելին՝ ԵԱՀԿ տարածքում կարգավորման հարցին ուղղված մոտեցումները խիստ տարբերվում են միմյանցից՝ սկսած մեկ ամփոփ օրենքի ընդունումից մինչև տարբեր օրենքներում հավաքների ազատության մասին դրույթներ ներմուծելը՝ ներառյալ ոստիկանության լիազորությունները կարգավորող օրենքը, քրեական և վարչական օրենսգրքերը, հակաահաբեկչական օրենսդրությունը, ընտրական օրենսդրությունը և նույնիսկ ճարտարապետական նորմերը: Ընդունելով տարբերությունները երկրների միջև (մասնավորապես ժողովրդավարական ավանդույթների, օրենքի գերակայության և անկախ դատական իշխանության հետ կապված)՝ Ուղեցույցը և դրա հավելված հանդիսացող ծանոթագրությունները պատրաստի լուծումներ չեն առաջարկում, փոխարենը՝ պարզաբանում են առանցքային հարցեր և քննարկում դրանց լուծման հնարավոր ուղիները:

Ուղեցույցը և դրա հավելված հանդիսացող ծանոթագրությունները հիմնված են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային պայմանագրերի², պետությունների զարգացող պրակտիկայի (որն, *ի թիվս այլոց*, արտահայտվում է դատարանների կայացրած վճիռներում)³, միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների վրա և ընդգծում է այդ չափանիշների նվազագույն հստակ սահմանը, որի հետ պետական իշխանությունները պետք է հաշվի նստեն խաղաղ հավաքների ազատության գործընթացը կարգավորելիս: Ուղեցույցը և դրա հավելված հանդիսացող ծանոթագրությունները տարբերվում են այն տեքստերից, որտեղ փորձ է արվում կողիֆիկացնել նորմերը և ամփոփել համապատասխան նախադեպային իրավունքը:

Դրա փոխարեն Ուղեցույցը կոչված է նպաստելու ամենաբարձր չափանիշների զարգացմանը և, հետևաբար, տրամադրում է լավագույն փորձի օրինակներ (մի քանի պետություններում ձեռնարկված հաջողված քայլեր կամ միջոցառումներ, որոնք շուշափելիորեն օգնել են հավաքների ազատության իրավունքի պաշտպանությանը):

Հավաքների ազատությունից օգտվելու իրավունքը կարգավորելիս կարևոր նշանակություն ունի լավ մշակված օրենսդրությունը, որը հնարավորություն կտա սահմանելու իշխանությունների լիազորությունները: Որպես օրենքի մշակման գործընթացի անբաժանելի մաս՝ պահանջվում է, որ կառավարությունը և օրենսդրության մշակման գործընթացում ներգրավված այլ անձինք խորհրդակցեն այն անհատների և խմբերի հետ (ներառյալ մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունները), որոնց վերաբերում է այդ օրենքը: Եվ չնայած սույն Ուղեցույցը և դրա հավելված հանդիսացող ծանոթագրությունները տեղեկացնելու են հավաքների ազատությանն առնչվող օրենսդրության մշակման մեջ ներգրավված անձանց և մարմիններին, դրանք նաև ուղղված են այդ օրենսդրության իրականացման պատասխանատուներին (համապատասխան վարչական և իրավապահ մարմիններ) և նրանց, ում վերաբերում է օրենքը:

Ուղեցույցը և դրա հավելված հանդիսացող ծանոթագրություններն ուղղված են տարբեր ոլորտների գործադիր մարմիններին և անձանց. օրենսդիրներին, քաղաքական գործիչներին, իրավաբաններին, ոստիկանության աշխատակիցներին, տեղական իշ-

խանութիւններին, արհմիութիւններին, հավաքների կազմակերպիչներին և մասնակիցներին, հասարակական կազմակերպութիւններին (Յ4) և հավաքների ազատութեան ու հասարակական կարգի ոստիկանական պաշտպանութեան մոնիթորինգ իրականացնող կազմակերպութիւններին:

Չնայած Ուղեցույցի բովանդակութիւնը ներկայացվում է բաժին Ա-ում, սակայն բաժին Բ-ում ներկայացված Մեկնաբանող ծանոթագրութիւնները անհրաժեշտ են ոչ միայն այս սկզբունքները ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար, այլև բերում են լավագոյն փորձի օրինակներ, ինչն ավելի արժեքավոր է դարձնում տվյալ փաստաթուղթը: Բաժին Բ-ի մաս I-ը (գլուխ 1-4) ներկայացնում է հավաքների ազատութեան կարևորութիւնը և ուրվագծում դրա բաղկացուցիչ մասերը: Այն պարունակում է մի շարք ընդհանուր սկզբունքներ, որոնցով պետք է առաջնորդվել հավաքների ազատութիւնը կարգավորելիս (գլուխ 2), ներկայացնում սահմանափակումների օրինական հիմքերը և տեսակները (գլուխ 3) և քննութեան է առնում համապատասխան ընթացակարգային հարցեր (գլուխ 4): Մաս II-ը (գլուխ 5-7) ունի ավելի գործնական ուղղվածութիւն և քննութեան է առնում հավաքների ազատութեանն առնչվող օրենսդրութեան իրականացումը: Այն ներկայացնում է իրավապահ մարմինների (գլուխ 5), միջոցառումների կազմակերպիչների (գլուխ 6) իրավունքներն ու պարտականութիւնները, այլ շահագրգիռ կողմերի դերը (գլուխ 7): Հավելված Ա-ն ներառում է վկայակոչած նախադէպերի ցանկը, իսկ հավելված Բ-ն՝ տերմինաբանութեան բացատրական բառարանը (անգլերենից հայերէն թարգմանութեամբ): Բացատրական այս բառարանը ներկայացնում է այն հիմնական տերմիններն ու հասկացութիւնները, որոնք օգտագործվում են Ուղեցույցում և Մեկնաբանող ծանոթագրութիւններում: Հավելված Գ-ն պարունակում է ԺՅՄԻԳ-ի հավաքների ազատութեան հարցերով փորձագետների խորհրդի անդամների համառոտ կենսագրականները:

Ուղեցույցը և դրա հավելվածը հանդիսացող ծանոթագրութիւնները առկա են ԺՅՄԻԳ-ի կայքում, ինչպէս նաև ԺՅՄԻԳ-ի իրավական բազայում. www.legislationline.org, որտեղ կարելի է գտնել հանրահավաքների վերաբերյալ ազգային օրենսդրութիւններ և թեմային առնչվող այլ իրավական փաստաթղթեր:

Ուղեցույցը և դրա հավելվածը հանդիսացող ծանոթագրութիւնները գործում փաստաթղթեր են, որոնք անկասկած կլրամշակվեն ժամանակի ընթացքում: ԺՅՄԻԳ-ը ողջունում է Ուղեցույցի վերաբերյալ դիտողութիւններն ու առաջարկութիւնները, որոնք կարող են ուղարկվել assembly@odhr.pl էլեկտրոնային հասցեով:

ԲԱԺԻՆ Ա.

Խաղաղ հավաքների
ազատություն

Ուղեցույց

Խաղաղ հավաքների ազատության կարգավորումը

Հավաքների ազատության կարևորությունը: Հավաքների ազատությունը կարող է ծառայել տարբեր նպատակների, ներառյալ տեսակետների արտահայտումը և ընդհանուր շահերի պաշտպանությունը: Խաղաղ հավաքների ազատությունը կարող է լինել կարևոր տարր մշակույթի պահպանման և զարգացման, ինչպես նաև փոքրամասնությունների ինքնության պահպանման գործընթացում: Այն նաև ճանաչվում է որպես գործող ժողովրդավարության հիմքերից մեկը, իսկ դրա պաշտպանությունը անհրաժեշտություն է հանդուրժող հասարակության ստեղծման համար, որտեղ տարբեր հավատ, վարվելակերպ կամ սկզբունքներ ունեցող խմբերը կարող են խաղաղ գոյակցել:

Հավաքի սահմանումը

- ա. Սույն Ուղեցույցի համատեքստից ելնելով՝ հավաքը մարդկանց խմբի՝ համընդհանուր նպատակը արտահայտելու համար նպատակադրված և ժամանակավոր ներկայությունն է հասարակական վայրում, որը շենք կամ կառույց չէ:
- բ. Սույն սահմանումը չպետք է մեկնաբանվի այնպես, որ բացառի պաշտպանության տարածումը այլ տիպի խաղաղ հավաքների վրա, ինչպիսիք են պետական կամ մասնավոր տարածքներում կամ կառույցներում անցկացվող հավաքները: Չնայած բոլոր տիպի խաղաղ հավաքները ենթակա են պաշտպանության՝ շենք կամ կառույց չհանդիսացող հասարակական վայրերում տեղի ունեցող հանրային հավաքները առաջ են բերում առանձնահատուկ կարգավորման խնդիրներ, հետևաբար և համարվում են որպես սույն Ուղեցույցի քննարկման առարկա:

Պաշտպանության ենթակա են միայն խաղաղ հավաքները: Հավաքները համարվում են խաղաղ, եթե դրա կազմակերպիչներն ունեն խաղաղ մղումներ: «Խաղաղ» տերմինի մեկնաբանությունը ներառում է մի վարքագիծ, որը կարող է բարկացնել կամ վիրավորել անձանց, ովքեր ընդդիմանում են տվյալ հավաքի տարածած գաղափարներին և պահանջներին կամ նույնիսկ այնպիսի վարքագիծ, որը միտումնավոր արգելում կամ խոչընդոտ է հանդիսանում երրորդ անձանց գործունեության համար: Մասնակցությունը հանրային հավաքներին պետք է լինի կամավոր:

Վեց ղեկավար սկզբունքներ

Սկզբունք 1: Հօգուտ հավաքների անցկացման կանխավարկած: Որպես հիմնարար իրավունք՝ խաղաղ հավաքների ազատությունը, այնքանով որքանով հնարավոր է, պետք է իրականացվի առանց կարգավորման: Այն ամենը, ինչ ուղղակիորեն չի արգելվում օրենքով, պետք է ենթադրվի որպես թույլատրելի, ուստի հավաքվել ցանկացողները դրա համար պարտավոր չեն ձեռք բերել թույլտվություն: Հօգուտ հավաքների անցկացման կանխավարկածը պետք է հստակորեն սահմանվի օրենքով:

Սկզբունք 2: Խաղաղ հավաքները դաժադանելու ղեռնարկի դադարում: Պետությունը պարտավոր է ստեղծել համապատասխան մեխանիզմներ և ընթացակարգեր՝ գործնականում ապահովելու խաղաղ հավաքների իրականացումը և բացառելու դրանց անհարկի բյուրոկրատական կանոնակարգումը:

Սկզբունք 3: Օրինականությունը: Կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է օրինական հիմք ունենա՝ սահմանված լինի օրենքով: Օրենքն իր հերթին պետք է համահունչ լինի միջազգային իրավունքով սահմանված՝ մարդու իրավունքների նորմերին: Այն պետք է լինի բավարար հստակ, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան գնահատել, թե արդյո՞ք իրենց վարքագիծը կհանգեցնի օրենքի խախտմանը, և ի՞նչ հետևանքներ կունենա նման խախտումը:

Սկզբունք 4: Համաչափությունը: Հավաքների ազատության նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է լինի համաչափ: Օրինական նպատակին հասնելիս իշխանությունները պետք է մշտապես նախապատվությունը տան հնարավորինս նվազագույն միջամտության կիրառմանը:

Հավաքների ցրումը կարող է լինել միայն ծայրահեղ միջոց: Այսպիսով, համաչափության սկզբունքը պահանջում է, որ իշխանությունները չկիրառեն սահմանափակումները՝ որպես ընդունված, ստանդարտ կարգ, որն արմատապես կփոխի միջոցառման բնույթը, ինչպիսին է, օրինակ՝ երթերի երթուղիների փոփոխությունն այնպես, որ երթն ընթանա քաղաքի ծայրամասերով: Իրավական սահմանափակումների համատարած կիրառումը համընդգրկուն դառնալու միտում ունի և չի համապատասխանում համաչափության ելայնը, որովհետև հաշվի չի առնում խնդրո առարկա դեպքի առանձնահատուկ հանգամանքները:

Սկզբունք 5: Լավ վարչարարություն: Հանրությունը պետք է իմանա, թե որ մարմինն է պատասխանատու հավաքների ազատության կարգավորման մասին որոշում կայացնելու համար, և սա պետք է հստակորեն ամրագրվի օրենքում: Կարգավորիչ մարմինը պետք է ապահովի համապատասխան հուսալի տեղեկատվության մատչելիությունը հասարակության համար, պետք է լինի հասանելի և գործի թափանցիկ:

Սկզբունք 6: ԽՏՐԱԿԱՆՈՒՅՈՒՄԻ ՔԱՑԱՌՈՒՄ:

- ա) Խաղաղ հավաքների ազատության իրավունքը հավասարապես պետք է իրականացվի բոլորի կողմից: Հավաքների ազատությունը կարգավորելիս պատասխանատու մարմինները պետք է բացառեն խտրականության դրսևորումը որևէ անձի կամ խմբի նկատմամբ, որևէ հիմքով, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքը, ծնունդը կամ այլ կարգավիճակներ: Հանրահավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու ազատությունը պետք է երաշխավորվի անհատների և կազմակերպությունների, փոքրամասնությունների և բնիկների խմբերի, քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (ապատրիատներ, փախստականներ, օտարերկրյա քաղաքացիներ, ապաստան որոնողներ, միգրանտներ և զբոսաշրջիկներ), կանանց և տղամարդկանց, ոչ լրիվ իրավունակություն ունեցող անձանց, ներառյալ՝ հոգեկան հիվանդություն ունեցողները:
- բ) Օրենքը պետք է ճանաչի խաղաղ հավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու երեխայի իրավունքը: Պատշաճորեն հարգելով երեխայի զարգացող կարողությունները՝ երեխայի՝ հավաքներ անցկացնելու իրավունքը կարող է սահմանափակվել՝ հավաքների կազմակերպիչների համար սահմանելով, օրինակ, նվազագույն տարիք, պահանջելով ծնողների կամ օրինական խնամակալների համաձայնությունը:
- գ) Ոստիկանության և զինվորական անձնակազմի՝ հավաքների ազատության իրավունքը չպետք է սահմանափակվի, եթե նման սահմանափակման պատճառներն ուղղակիորեն կապված չեն ծառայողական պարտականությունների կատարման հետ, իսկ սահմանափակումը պետք է կիրառվի միայն այն չափով, որը միանշանակ անհրաժեշտ է մասնագիտական պարտականությունները կատարելու համար:

Հավաքների ազատության սահմանափակումները

1. Սահմանափակման օրինական հիմքերը: Սահմանափակման օրինական հիմքերը ամրագրված են մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում և դրանք չպետք է լրացվեն հավելյալ հիմքերով ազգային օրենսդրություններում:

2. Հավաքների անցկացման ժամանակի, տեղի և կարգի սահմանափակումները: Կարգավորիչ մարմինն ունի հավաքների անցկացման նկատմամբ սահմանափակումների կայն շրջանակ կիրառելու հնարավորություն: Որպես կանոն՝ պետք է ապահովել, որ հավաքն անցկացվի թիրախ լսարանի տեսանելիության և լսելիության գոտում:

Ընթացակարգային հարցեր

1. Նախնական իրազեկում: Նախնական իրազեկմանը վերաբերող օրենսդրական դրույթները պետք է պահանջեն ներկայացնել ոչ թե թույլտվության խնդրանք, այլ իրազեկում հավաքների անցկացնելու մտադրության մասին: Իրազեկման գործընթացը չպետք է լինի բարդացված, լի բյուրոկրատական քաշքշուկներով: Ներկայացված իրազեկմանը պատասխանելու ժամկետը չպետք է անհարկի երկարաձգվի, սակայն իշխանության պատասխանատու մարմինների համար, մինչև ծանուցման մեջ նշված՝ հավաքի անցկացման ժամկետը, պետք է ժամանակ հատկացվի միջոցառումը պլանավորելու և նախապատրաստելու, ինչպես նաև արագացված կարգով դատարան բողոք ներկայացնելու համար՝ կազմակերպիչների կողմից պահանջվող սահմանափակման օրինականությունը վիճարկելու դեպքում: Երբ իշխանությունները որևէ շտապ առարկություն չեն ներկայացնում՝ ի պատասխան իրազեկմանը, հանրահավաքի կազմակերպիչները պետք է հնարավորություն ունենան շարունակել պլանավորված գործողությունները՝ ըստ իրազեկման մեջ նշված ժամկետների և առանց որևէ սահմանափակման:

2. Ինֆոմաբոլիս հավաքներ: Օրենքը պետք է հստակ բացառություն սահմանի այն դեպքի համար, երբ նախնական իրազեկում ներկայացնելը գործնականում հնարավոր չէ: Նույնիսկ եթե նախնական իրազեկում չներկայացնելու ողջամիտ հիմքերը բացակայում են, իշխանությունները կրկին պետք է պաշտպանեն և նպաստեն ցանկացած ինֆոմաբոլիս հավաքի անցկացմանը այնքան ժամանակ, քանի դեռ այն կրում է խաղաղ բնույթ, իսկ կազմակերպիչները, որոնք անտեսել կամ հրաժարվել են կատարել նախնական իրազեկման օրինական պահանջը, հետագայում կարող են պատասխանատվության ենթարկվել:

3. Համաժամանակյա հավաքներ: Երբ միաժամանակ նույն ժամին և նույն տեղում երկու և ավելի հավաք անցկացնելու մասին իրազեկումներ են ներկայացվում, դրանց պետք է հնարավորինս աջակցություն ցուցաբերվի: Եթե կազմակերպվում են հակընդդեմ ցույցեր, շեշտը պետք է դրվի հիմնական միջոցառման խոչընդոտումը կանխելուն ուղղված՝ պետության պարտավորության վրա:

Խաղաղ հավաքների ազատության օրենսդրության կիրառումը

1. Միջոցառմանը նախորդող լուսնավորումը իրավադատի մարմինների հետ:

Այնտեղ, որտեղ առկա են հավանական կամ առանձնահատուկ անվտանգության մտահոգություններ (օրինակ՝ բազմամարդ կամ խիստ վիճահարույց հարցերի շուրջ կազմակերպված հավաքների դեպքում), նախքան միջոցառումն սկսելը կազմակերպիչներին առաջարկվում է ձեռնարկվելիք անվտանգության միջոցների շուրջ պայմանավորվել իրավապահ մարմինների հետ: Նման քննարկումները կարող են ընթանալ ոստիկանության կամ կարգադրիչների տեղաբաշխման, հասարակական կարգի ոստիկանական պաշտպանության հետ կապված մտահոգությունների շուրջ:

2. Բանակցությունների և/կամ միջնորդության օգտագործումը հավաքներին առնչվող վեճերի կարգավորման նպատակով:

Եթե առաջարկվող հավաքը, դրա անցկացման ժամը, վայրը և կարգը վիճարկելի են, և կազմակերպիչները, պատասխանատու կարգավորիչ մարմինը, իրավապահ մարմինները կամ այլ կողմեր, որոնց իրավունքները կարող են շոշափվել, որևէ լուծում չեն գտնում, ապա առաջարկվում է սկսել բանակցություններ կամ միջնորդավորված երկխոսություն, որը կօգնի հասնելու փոխադարձ ընդունելի որոշման: Բանակցությունների կամ միջնորդավորված երկխոսության հարցում կարող են աջակցել իշխանությունների և կազմակերպիչների հետ որևէ առնչություն չունեցող անհատներ և կազմակերպություններ:

3. Հասարակական կարգի դահիճանությունը:

Պետությունը պետք է խաղաղ հավաքի մասնակիցներին պաշտպանի ցանկացած անձից կամ խմբից (սադրիչներ և հակընդդեմ ցույցերի մասնակիցները), որոնք փորձում են ամեն գնով խափանել կամ արգելք հանդիսանալ միջոցառմանը: Պատշաճ անվտանգության և ապահովության (ներառյալ երթևեկության ու ամբոխի կառավարումը) բոլոր ծախսերը պետք է կատարեն պետական իշխանությունները: Պետությունը պետք է նախատեսի լրացուցիչ դրամական միջոցներ՝ ապահովելու հասարակական կարգի պատշաճ ոստիկանական պահպանումը: Առևտրային նպատակ չհետապնդող հանրահավաքների կազմակերպիչները պարտավոր չեն ձեռք բերել պետական ապահովագրություն իրենց միջոցառումների համար:

4. Ուժի գործադրումը:

Ուժի գործադրումը պետք է կարգավորվի ներպետական օրենսդրությամբ: Օրենսդրությունը պետք է սահմանի ուժի գործադրման հիմնավորման հանգամանքները (ներառյալ պատշաճ վաղ նախազգուշացում ապահովելու անհրաժեշտությունը), ինչպես նաև ուժի գործադրման ընդունելի մակարդակը՝ ընդդեմ տարբեր սպառնալիքների: Իշխանությունները պետք մշակեն արձագանքման միջոցառումների շրջանակ և իրավապահ մարմիններին զինեն ուժի տարբերակված կիրառման հնարավորություն ապահովող տարբեր զենքերով և զինամթերքով: Ձեռնարկվող

միջոցները համապատասխան իրավիճակներում պետք է ներառեն ոչ մահացու, անաշխատունակության հանգեցնող զենքերի օգտագործմանը:

5. Ոստիկանության աշխատակիցների դասասխանավությունը և հաշվեկռուկականությունը: Եթե գործադրված ուժը օրենքով թույլատրված չէ կամ գերազանցում է թույլատրելի սահմանը, ոստիկանության աշխատակիցները պետք է ենթարկվեն քաղաքացիական և/կամ քրեական պատասխանատվության: Նրանք նաև պետք է ենթարկվեն պատասխանատվության, երբ չեն միջամտում կանխելու իրավապահ մարմինների այլ աշխատակիցների կողմից հավելյալ ուժի գործադրումը: Երբ բողոքներ են ստացվում իրավապահ մարմինների վարքագծի մասին, կամ եթե իրավապահ մարմինների գործողությունների արդյունքում անձը լրջորեն վիրավորվել կամ զրկվել է կյանքից, ապա պետք է անցկացվի արդյունավետ պաշտոնական հետաքննություն:

6. Կազմակերպիչների դասասխանավությունը: Հավաքների կազմակերպիչները չպետք է ենթարկվեն պատասխանատվության՝ պարտականությունները չկատարելու (եթե այդ ուղղությամբ գործադրել են ողջամիտ ջանքեր), հավաքների մասնակից չհանդիսացողների կամ սադրիչների, ինչպես նաև առանձին անձանց գործողությունների համար, փոխարենը՝ ծագում է յուրաքանչյուր մասնակցի անհատական պատասխանատվության հարցը, եթե նրանք կատարում են իրավախախտում կամ չեն իրականացնում իրավապահ մարմինների աշխատակիցների օրինական պահանջները:

7. Հավաքների հսկումը: Չնայած ոստիկանությունն ընդհանրապես պատասխանատու է հասարակական կարգի պահպանության համար, առաջարկվում և խրախուսվում է, որ հավաքների կազմակերպիչները տեղաբաշխեն կարգադրիչներ («կամավորների խմբեր»՝ ըստ ՀՀ օրենսդրության) մեծ կամ վիճահարույց հանրահավաքի ժամանակ: Կարգադրիչներն անձինք են, որոնք աշխատում են հանրահավաքների կազմակերպիչների հետ, պատասխանատու են միջոցառման նկատմամբ օրինականորեն գործադրվող սահմանափակումների պահպանմանն աջակցելու համար: Կարգադրիչները չպետք է ունենան իրավապահ մարմինների լիազորություններ և ուժ չպետք է գործադրեն: Նրանց նպատակն է հանրահավաքի մասնակիցներին մղել համագործակցության: Նախքան հավաքը՝ կարգադրիչները պետք է անցնեն պատշաճ ուսուցում և ստանան խորացված ցուցումներ: Հանրահավաքի կազմակերպիչներն են պատասխանատու կարգադրիչների գործողությունների համար: Խորհուրդ է տրվում նաև, որ կարգադրիչները հստակորեն տարբերակվեն մյուս մասնակիցներից:

8. Սոնիթորինգ իրականացնողները: Ելնելով սույն Ուղեցույցի նպատակներից՝ «մոնիթորինգ իրականացնողներ» ասելով՝ հասկանում ենք անկուսակցական երրորդ անձինք կամ խմբեր, որոնց առաջնային նպատակն է դիտարկել և գրանցել տեղի ունեցածը: Հանրահավաքների մոնիթորինգը կարող է ապահովել տեղի ունեցածի անկողմնակալ և օբյեկտիվ նկարագրությունը, ներառյալ՝ մասնակիցների և իրավապահ մարմինների վարքագծի փաստացի արձանագրումը: Չնայած հավաքների ազատու-

թյան աջակցության ու պաշտպանության պատասխանատվությունն առաջին հերթին ընկնում է պետության վրա՝ ՀԿ-ները կարևոր դեր են խաղում մարդու իրավունքների խնդիրներին աջակցելու գործում: Հետևաբար, հավաքների ազատության համատեքստում իրավապաշտպաններին պետք է տրվի ազատ գործելու հնարավորություն:

9. ՁԼՄ-ների մասչելիությունը: Լրագրողները կարևոր դեր են խաղում հանրահավաքների անկախ լուսաբանման գործում: Որպես այդպիսին՝ նրանք պետք է տարբերվեն մասնակիցներից, իսկ իշխանությունները հնարավորության սահմաններում նրանց համար պետք է ապահովեն մատչելիություն:

ԲԱԺԻՆ Բ.

ՄԵԿՆԱՔԱՆՈՂ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներածություն

1. Սույն Մեկնաբանող ծանոթագրություններն առանձին չեն դիտարկվում և կազմում են Ուղեցույցի բաղկացուցիչ մասը: Դրանք ոչ միայն կարևոր են Ուղեցույցը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար, այլև ներառում են լավագույն փորձի օրինակներ՝ փաստաթուղթը դարձնելով առանձնահատուկ:
2. Մեկնաբանող ծանոթագրությունների մաս I-ը (գլուխ 1-4) ներկայացնում է հավաքների ազատության կարևորությունը և ուրվագծում դրա պարամետրերը: Այն պարունակում է մի շարք ընդհանուր սկզբունքներ, որոնցով պետք է առաջնորդվել հավաքների ազատությունը կարգավորելիս (գլուխ 2), ներկայացնում է սահմանափակումների օրինական հիմքերն ու տեսակները (գլուխ 3) և քննության է առնում համապատասխան ընթացակարգային հարցերը (գլուխ 4):

Մաս II-ն (գլուխ 5-7) ունի ավելի գործնական ուղղվածություն և քննության է առնում հարցեր, որոնք վերաբերում են հավաքների ազատությանն առնչվող օրենսդրության իրականացմանը: Այն սահմանում է իրավապահ մարմինների աշխատակիցների (գլուխ 5), հավաքների կազմակերպիչների (գլուխ 6) իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի դերը (գլուխ 7): Հավելված Ա-ում ներկայացված է սույն փաստաթղթում վկայակոչված նախադեպերի ցանկը, իսկ հավելված Բ-ն՝ տերմինաբանության բացատրական բառարանը (անգլերենից հայերեն թարգմանությամբ): Այս բացատրական բառարանը ներկայացնում է այն հիմնական տերմիններն ու հասկացությունները, որոնք օգտագործվում են Ուղեցույցում և Մեկնաբանող ծանոթագրություններում: Հավելված Գ-ում ներկայացված է ԺՅՄԻԳ-ի հավաքների ազատության հարցերով փորձագետների խորհրդի անդամների համառոտ կենսագրականները:

ՄԱՍ Ի.

Խաղաղ հավաքների ազատություն

1. Խաղաղ հավաքների ազատության կարգավորումը

Հավաքների ազատության նշանակությունը

3. Ուղեցույցի և Մեկնաբանող ծանոթագրությունների ամբողջ տեքստում «*խաղաղ հավաքների ազատություն*» տերմինն ունի նախապատվություն «խաղաղ հավաքների իրավունք» տերմինի նկատմամբ: Դրանով շեշտադրվում է, որ հավաքվելու ցանկացած իրավունքի հիմքում ընկած է առավել հիմնարար ազատություն, որի էությունն այն է, որ այն պետք է իրականացվի առանց որևէ միջամտության⁴: Մասնակցությունը հանրահավաքներին պետք է լինի բացառապես կամավորական հիմունքներով⁵:
4. Խաղաղ հավաքները կարող են ծառայել տարբեր նպատակների, ներառյալ տեսակետների արտահայտում և ընդհանուր շահերի պաշտպանություն, տոնակատարության, հիշատակի օրվա, պիկետների և բողոքի ակցիաների անցկացում: Խաղաղ հավաքների անցկացումը կարող է կրել և՛ խորհրդանշական, և՛ գործնական բնույթ: Այն կարող է դառնալ կարևոր տարր մշակույթի պահպանման և զարգացման, ինչպես նաև փոքրամասնությունների ինքնության պահպանման գործում: Խաղաղ հավաքների ազատությունը⁶ լրացվում է այլ իրավունքներով և ազատություններով, ինչպիսիք են՝ միավորումների ազատությունը, պետության տարածքում կապերի հաստատման և պահպանման իրավունքը⁷, արտահայտվելու ազատությունը⁸, մտքի, խղճի, դավանանքի ազատությունը⁹: Որպես այդպիսին՝ հավաքների ազատությունն ունի հիմնարար կարևորություն անձի զարգացման, արժանապատվության, յուրաքանչյուր անհատի կայացման, հասարակության

առաջընթացի և բարգավաճման համար¹⁰:

5. Այն նաև համարվում է գործող ժողովրդավարության հիմքերից մեկը: Ի լրումն միջազգային չափանիշներին համապատասխան ընտրությունների անցկացմանը՝ խաղաղ հավաքների մասնակցությանն աջակցելը հասարակության բոլոր անդամների համար կարող է հնարավորություն ընձեռել արտահայտելու մյուսների հետ ընդհանուր իրենց կարծիքները: Որպես այդպիսին՝ խաղաղ հավաքների ազատությունը ուղղակի ժողովրդավարության ձևերից մեկն է: Այն նպաստում է քաղաքացիական հասարակության ներսում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, քաղաքական առաջնորդների և կառավարության միջև երկխոսության ծավալմանը: ՁԼՄ-ների կողմից պատշաճ լուսաբանվելու դեպքում հանրահավաքների մասին կտեղեկանան ամբողջ աշխարհում, իսկ այն երկրներում, որտեղ ՁԼՄ-ների թիվը սահմանափակ է կամ սահմանափակում կա նրանց գործունեության վրա, հավաքների ազատությունը կենսական նշանակություն ունի նրանց համար, ովքեր ցանկանում են ուշադրություն հրավիրել տեղական խնդիրների վրա: Հավաքների տեղեկատվական այս պոտենցիալը ընդգծում է, թե որքան կարևոր է հավաքների ազատությունը փոփոխություններին նպաստելու և շահերի պաշտպանության գործում: Հետևաբար, պետությունները պետք է ընդունեն, որ հավաքների ազատությունն ունի խոր և երկարաժամկետ դրական արդյունքներ: Իրականում խաղաղ հավաքների պաշտպանությանն ուղղված ծախսերը զգալիորեն ավելի քիչ են, քան ճնշումների արդյունքում հասարակական կարգի խախտման դեմ կիրառվող ոստիկանական գործողությունների վրա կատարվող ծախսերը:
6. Ի հավելումն ժողովրդավարության շահերին ծառայելուն՝ ազատ հավաքվելու հնարավորությունը էական նշանակություն ունի հանդուրժող հասարակություն ստեղծելու գործում, որտեղ տարբեր (հնարավոր է՝ հակամարտող) դավանանք, գործելակերպ, սկզբունքներ ունեցող խմբերը կարող են խաղաղ գոյակցել:

Իրավական դաճոջ

7. **Հավաքների ազատության կարգավորումը ազգային օրենսդրության մեջ:** Խաղաղ հավաքների ազատությունը պետք է ապահովվի սահմանադրական երաշխիքներով: Սահմանադրությունը պետք է նվազագույնը պարունակի հավաքների ազատությունը երաշխավորող իրավունքներ և այդ իրավունքները պաշտպանելու պարտականություններ: Սահմանադրությունը պետք է ունենա նաև դրույթ, որը կերաշխավորի նրանում պարունակող իրավունքների կիրառման արդար ընթացակարգեր: Սակայն սահմանադրության դրույթները ընդհանուր են և չեն կարող ապահովել կոնկրետ ընթացակարգեր, ինչը կարող է ճանապարհի հարթել չարաշահումների համար, իսկ իշխանություններին տալ գործողությունների չհիմնավորված ազատության լայն հնարավորություն:
8. Արդյունքում շատ երկրներ, ի լրումն սահմանադրական երաշխիքների, ընդունել են հանրահավաքներին վերաբերող հատուկ օրենսդրություն: Նման օրենսդրու-

թյունը չպետք է խոչընդոտի խաղաղ հավաքների սահմանադրական իրավունքի իրականացումը, այլ ավելի շատ պետք է ուղղված լինի աջակցելու և ապահովելու դրանց պաշտպանությունը: Այս առումով շատ կարևոր է, որ ցանկացած կոնկրետ օրենք խուսափի կարգավորիչ հավելյալ, բյուրոկրատական համակարգի ստեղծումից, որը կփորձի սահմանափակումներ նախատեսել բոլոր դեպքերի համար և դրանով խախտել հիմնարար իրավունքները: Շատ երկրներում այս երևույթը իրական վտանգ է և Վենետիկի հանձնաժողովի¹¹ կողմից ներկայացվել է որպես հատուկ մտահոգություն: Խելամտորեն մշակված օրենսդրությունը, սակայն, կարող է նպաստել, որ իշխանությունները խուսափեն հավաքների ազատության չափից ավելի կարգավորումից:

9. Հավաքների ազատությունը կարգավորող ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխանի այդ պետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերին, որոնց հիման վրա էլ որոշվում է ներպետական այս կամ այն օրենսդրական դրույթի օրինականությունը: Ներպետական օրենքները նաև պետք է մեկնաբանվեն և իրականացվեն միջազգային և տարածաշրջանային համապատասխան սկզբունքներին համահունչ:

10. Միջազգային և սարածաբանային փաստաթղթերը: Այս մասում ներկայացվող իրավունքի աղբյուրները այն կարևորագույն փաստաթղթերից են, որոնց օրենսդրությունները վերանայելիս վկայակոչում է ժՅՄԻԳ-ը: Հավաքների ազատությանը վերաբերող համաշխարհային և տարածաշրջանային չափանիշները բխում են երկու իրավական փաստաթղթերից. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ)¹² և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), ինչպես նաև դրանց կից Կամընտիր արձանագրությունները¹³: Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան նույնպես հատուկ կարևորություն ունի Ամերիկյան պետությունների կազմակերպության անդամ պետությունների համար¹⁴:

11. Այս պայմանագրերի կարևորությունը մասամբ բխում է համապատասխան մոնիթորինգային մարմինների կողմից մշակված իրավական պրակտիկայից. դրանք են՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը: Միջազգային պրակտիկայում ընդունված նախադեպային իրավունքի նորմերը կարևոր նշանակություն ունեն սույն չափանիշները մեկնաբանելիս, և հավաքների ազատության մասին ներպետական օրենքներն իրականացնող պատասխանատուները պետք է խորությամբ ըմբռնեն դրանք: Հետևաբար, առաջարկվում է, որ կառավարություններն ապահովեն կարևոր նախադեպային գործերի ճշգրիտ թարգմանությունների մատչելիությունը իշխանության համապատասխան մարմինների և, իհարկե, ավելի լայն շրջանակների համար¹⁵:

12. Ստորև բերվում է խաղաղ հավաքների ազատության իրավունքին վերաբերող մի քանի առանցքային դրույթներ (պետք է նշել, որ որոշ դեպքերում կիրառվում են մարդու իրավունքների ոլորտի այլ փաստաթղթեր)¹⁶.

Հոդված 20 (1), Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների և միություններ կազմելու իրավունք ունի¹⁷:

Հոդված 21, Ձաղափացիական և ֆաղափական իրավունքների մասին միջազգային դաճնագիր

Ճանաչվում է խաղաղ հավաքների իրավունքը: Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության:

Հոդված 11, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաճոյանության եվրոպական կոնվենցիա

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Հոդված 15, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա

Խաղաղ, անգեն հավաքների իրավունքը ենթակա է ճանաչման: Ոչ մի սահմանափակում չի կարող կիրառվել այդ իրավունքի իրականացման վրա, բացառությամբ այնպիսի սահմանափակումների, որոնք իրականացվում են օրենքին համապատասխան, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական

հասարակությունում՝ ի շահ ազգային անվտանգության և հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանության, հասարակության առողջության կամ բարոյականության, կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության:

ԵԱՀԿ Կոդեքսի փաստաթուղթ

9.2 [Մասնակից պետությունները վերահաստատում են, որ] յուրաքանչյուր ոք ունենալու է խաղաղ հավաքների և ցույցերի իրավունք: Ցանկացած սահմանափակում, որը կարող է կիրառվել այդ իրավունքների իրականացման վրա, պետք սահմանված լինի օրենքով և համապատասխանի միջազգային չափանիշներին:

Խաղաղ հավաքների ազատությունը այլ իրավունքների և ազատությունների համատեքստում

13. Շատ կարևոր է, որ հավաքների ազատությանը վերաբերող օրենքների իրականացման և դրանց մշակման մասնակիցները պատշաճ ուշադրության արժանացնեն այս պայմանագրերում ամրագրված իրավունքների և ազատությունների փոխկապակցվածությանը: Հավաքների ազատության նկատմամբ միասնական մոտեցման ընդունման անհրաժեշտությունն ընդգծվում է, այսպես կոչված, «իրավունքների ոչնչացման» դրույթներում, որոնք արտացոլված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀԳ) հոդված 30-ում, ԲԲԻՄԴ-ի հոդված 5-ում, ՄԻԵԿ-ի հոդված 17-ում:

Հոդված 30, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Սույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընձեռված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակաուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատություններն ի չիք դարձնելուն:

Հոդված 5, Զաղափացիական և ֆաղափական իրավունքների մասին միջազգային դաեմագիր

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, մարդկանց խումբ կամ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով:

**Չողված 17, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների
դաճաճանության եվրոպական կոնվենցիա**

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Կոնվենցիայով:

14. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վրա սահմանափակումների կիրառումը համարվում է նաև ազատ արտահայտվելու, մտքի, խղճի և դավանանքի ազատությունների հնարավոր խախտում: Երբ ծագում են խնդիրներ՝ կապված վերոնշյալ այլ իրավունքների հետ, դրանք պետք է քննության առնվեն այն իրավունքի պաշտպանության տեսանկյունից, որն ուղղակի առնչություն ունի փաստերի հետ (*lex specialis*), իսկ մյուս իրավունքները պետք է դիտարկվեն որպես օժանդակ (*lex generalis*)¹⁸: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտարարել է, որ կոնվենցիան պետք է ընթերցվի ամբողջության մեջ, և ցանկացած առանձին հոդվածի կիրառումը չպետք է հակասի կոնվենցիայի ընդհանուր տրամաբանությանը¹⁹:

«Հավաքի» հիմնական սահմանումն ու կառուցողիները

Ուղեցույցում հավաք հասկացությունը սահմանվում է որպես ընդհանուր շահեր արտահայտելու նպատակով²⁰ մի խումբ անձանց նպատակային և ժամանակավոր ներկայություն շենք և շինություն չհանդիսացող հասարակական վայրերում:

15. Հավաքը, ըստ սահմանման, պահանջում է առնվազն երկու մարդու ներկայություն: Այնուամենայնիվ, անհատական բողոք ներկայացնողը, որն իրականացնում է արտահայտվելու ազատության իր իրավունքը, որի ժամանակ իր ֆիզիկական ներկայությունը այդպիսի արտահայտման կարևորագույն մասն է կազմում, պետք է հնարավորություն ունենա ստանալու նույնպիսի պաշտպանություն, ինչպիսին ստանում են միասին հավաքված և հավաքի մաս կազմող անձինք:
16. Խաղաղ հավաքների ազատությունը ներառում է մի շարք գործողություններ, որոնք տեղի են ունենում որոշակի տարածքում: Դրանք, այսպես կոչված, ստատիկ հավաքներ են (ժողովներ, զանգվածային ակցիաներ, ցույցեր, հանդիպումներ, նստացույցեր, պիկետներ և այլն)²¹ կամ կարող են ընդունել շարժական հա-

վաքների ձև (չքերթներ, թաղման, հարսանեկան արարողություններ, ուխտագնացություն և այլն)²²: Այս օրինակներն ամփոփ չեն և հնարավոր է՝ ներպետական օրենսդրությունը շեշտադրում կատարի հավաքների ավելի ամփոփ և լայն մեկնաբանման անհրաժեշտության վրա, ինչպես արված է Ղազախստանի և Ֆինլանդիայի օրենքների՝ ստորև ներկայացվող հատվածներում: Այս օրենքները նաև ամրագրում են, որ «Ժամանակավոր» տերմինը չպետք է խանգարի բողոքի ճամբարների կամ այլ ոչ մշտական շինությունների տեղակայմանը²³:

Չոդված 1, «Ղազախստանի Հանրապետությունում խաղաղ ժողովներ, հանրահավաքներ, երթեր, լիցեզներ և ցույցեր կազմակերպելու և անցկացնելու կարգի մասին» օրենքի ուժ ունեցող նախագահի հրամանագիրը (1995 թ.)

... հանրային, խմբային և անձնական շահերից բխող արտահայտման ձևերը և բողոքները, որոնք վերաբերում են հանրահավաքներին, ժողովներին, երթերին և ցույցերին, պետք է ներառեն նաև հացադուլները հանրային վայրերում, յուրտերի, վրանների և այլ շինությունների տեղակայումը, պիկետի անցկացումը:

Հավաքների մասին Ֆինլանդիայի օրենքը (1999 թ.)

Հանրային ժողովներում կարող են օգտագործվել ցուցապաստառներ, բարձրախոսներ, տարբերանշաններ, սովորական ժողովների ժամանակ օգտագործվող այլ սարքավորումներ և տեղակայվել ժամանակավոր կառուցվածքներ: Այդ միջոցառումների ընթացքում կազմակերպիչները պետք է հետևեն, որ մասնակիցներին, չմասնակցող, ունկնդրող անձանց կամ շրջապատին չհասցվի որևէ վնաս կամ ոչ ողջամիտ անհարմարություններ:

17. Սույն Ուղեցույցը կիրառելի է շենքեր և շինություններ չհանդիսացող, բոլորի օգտագործման համար թույլատրելի հասարակական վայրերում (հանրային զբոսայգիները, հրապարակները, փողոցները, պողոտաները, մայթերը, ճեմափողոցները և այլն)²⁴ անցկացվող հավաքների համար:
18. Հանրահավաքների մասնակիցներն այնքան իրավունք ունեն օգտագործելու նմանատիպ տարածքները ողջամիտ ժամկետներում, որքան այլք: Հանրային տարածքները հավասարապես պետք է տրամադրվեն օրինական օգտագործման՝ հանրային բողոքներ և, ընդհանրապես, հավաքների ազատության իրավունքն իրականացնելիս, այնպես, ինչպես տրամադրվում են ամենօրյա օգտագործման նպատակով (օրինակ՝ հետիոտների և փոխադրամիջոցների երթևեկության համար): Այս սկզբունքը հստակորեն ձևակերպվել է Իսրայելի Գերագույն դատարանի վճռում 1979 թ.:

Իսրայելի Գերագույն դատարանի վճիռ. «Սաարն ընդդեմ ներհին գործերի նախարարության և ոստիկանության» գործով (1979 թ.)²⁵

... «երթևեկության» նկատառումներն իրականացնելիս միշտ պետք է հավասարակշռություն պահպանել ժողովների և երթեր անցկացնել ցանկացող քաղաքացիների շահերի և այն քաղաքացիների շահերի միջև, որոնց իրավունքները շոշափվում են այդ ժողովների և երթերի պատճառով: Այնպես, ինչպես քաղաքի փողոցում ցույց անցկացնելու իմ իրավունքը սահմանափակվում է նույն փողոցն ազատ անցնելու իմ ընկերոջ իրավունքով, այնպես էլ քաղաքի փողոցն անցնելու նրա իրավունքը սահմանափակվում է ժողովներ և երթեր անցկացնելու իմ իրավունքով: Մայրուղիներն ու փողոցները նախատեսված են քայլելու և մեքենա վարելու համար, բայց դա դրանց օգտագործման միակ նպատակը չէ: Նրանք նաև նախատեսված են երթերի, շքերթների, թաղումների և նման միջոցառումների համար:

19. Հանրային այլ օբյեկտները, որոնք շենքեր և կառույցներ են (հանրային սեփականություն հանդիսացող դահլիճներ, մարզադաշտեր կամ պետական շենքերի սրահներ), պատշաճ տարածքներ են հանրային հավաքներ անցկացնելու համար այն չափով, որ չափով դրանք տրամադրվում են նմանատիպ գործողությունների համար: Նման օբյեկտների օգտագործումը կարգավորվում է առողջապահության և անվտանգության ոլորտների համապատասխան օրենքներով (տե՛ս 45-59 կետը):
20. Ավելին՝ հավաքների և ժողովների անցկացման համար, իհարկե, կարող են օգտագործվել նման միջոցառումներ անցկացնելու տարողություն ունեցող մասնավոր սեփականություն հանդիսացող օբյեկտները, սակայն սեփականատերը կարող է տրամադրել տարածքը նրանց, ում ցանկանում է պահպանելով համապատասխան առողջապահական և անվտանգության օրենքների պահանջները և խտրականության բացառման գործող օրենքները (տե՛ս 45-59 կետը)²⁶: Չնայած խաղաղ հավաքների ազատությունը տարածվում է և՛ հանրային, և՛ մասնավոր հավաքների վրա²⁷ հավաքների նպատակով մասնավոր սեփականության օգտագործումը առաջ է բերում այնպիսի հարցեր, որոնք տարբերվում են հանրային սեփականության օգտագործումից ծագած հարցերից: Այս առումով շենքերի ներսում անցկացվող հավաքները սույն Ուղեցույցի քննարկման շրջանակներից դուրս են: Այնուամենայնիվ, օրենքների ընդհանուր դրույթները, որոնք վերաբերում են հասարակական կարգի պահպանությանը, քրեական օրենսդրությանը, շատ հաճախ կիրառելի են նաև մասնավոր սեփականության նկատմամբ: Սա երաշխավորում է համապատասխան գործողությունների իրականացում, եթե մասնավոր սեփականություն անցկացվող միջոցառումները վնաս են հասցնում հասարակության այլ անդամներին:
21. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ մի շարք երկրներում եղել է հանրային տարածքները մասնավորեցնելու նկատելի միտում: Սա առաջ է բերում լուրջ մտահոգություն նման տարածքների կանոնակարգման և հավաքների, արտա-

հայտվելու, չհամաձայնելու իրավունքի իրականացումն ապահովելու վերաբերյալ, ուստի արժանի է ուշադրության²⁸: Արտահայտվելու ազատության վերաբերյալ «Appleby and others ընդդեմ Միացյալ Թագավորության» գործում (2003 թ.) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրեց, որ արտահայտվելու ազատության արդյունավետ իրականացումը «կախված չէ պարզապես չմիջանդակ Պետության պարտականությունից, այլ կարող է պահանջել պաշտպանության դրական միջոցառումներ, նույնիսկ անհատների միջև հարաբերությունների ոլորտում» (տե՛ս ստորև ներկայացված հատվածը)²⁹: Մասնավոր սեփականություն հանդիսացող տարածքներում հավաքների ազատությունը կարող է պաշտպանության արժանանալ, եթե խաթարվել է իրավունքի ելությունը:

Քաղվածք «Appleby and others ընդդեմ Միացյալ Թագավորության» գործից³⁰

Այն դեպքում, երբ ... մասնավոր սեփականության մատչելիության արգելումը ունենում է կանխարգելիչ դրսևորում արտահայտվելու ազատության արդյունավետ իրականացման նկատմամբ, կամ երբ, կարելի է ասել, խաթարվել է իրավունքի ելությունը, դատարանը չի կարող բացառել, որ կարող է ծագել Պետության դրական պարտավորությունը՝ զույթային իրավունքները կանոնակարգելու միջոցով պաշտպանել Կոնվենցիայով սահմանված իրավունքները: Որպես օրինակ կարող է լինել ամբողջ քաղաքը, որտեղ համայնքային կառույցները վերահսկվում են մասնավոր կազմակերպությունների կողմից:

Խաղաղ և ոչ օրինական հավաքներ

22. **Խաղաղ հավաքներ:** Միայն խաղաղ հավաքներն են պաշտպանվում հավաքների ազատության իրավունքի շրջանակներում: Հավաքները համարվում են խաղաղ, եթե կազմակերպիչներն ունեն խաղաղ մտադրություն³¹: Սա ինքնին պետք է ենթադրվի, քանի դեռ չկա համոզիչ և ակնհայտ փաստարկ, առ այն, որ կոնկրետ միջոցառման կազմակերպիչները և մասնակիցները կիրառում են ուժ, պաշտպանում կամ բորբոքում են բացահայտ բռնություն: «Խաղաղ» տերմինը պետք է մեկնաբանվի որպես մի վարքագիծ, որը կարող է բարկացնել կամ վիրավորել այն անձանց, որոնք ընդդիմանում են հավաքի կողմից ներկայացվող գաղափարներին և պահանջներին³², և նույնիսկ այնպիսի վարքագիծ, որը միտումնավոր խոչընդոտում կամ խանգարում է երրորդ անձանց գործունեությունը³³: Այսպես օրինակ՝ այն հավաքները, որոնք ներառում են զուտ պասիվ դիմադրություն՝ նստացույցի տեսքով են, պետք է բնութագրվեն որպես խաղաղ³⁴: Եթե խաղաղ լինելու այս հիմնարար չափանիշը պահպանվում է, ապա այն պետական իշխանությունների մոտ առաջացնում է դրական պարտականություն (տե՛ս կետ 26-29), որը բխում է խաղաղ հավաքների ազատության իրավունքից: Խաղաղ հավաքները պատշաճորեն կարող են ենթակա լինել սահմանափակումների՝ որոշ հանգամանքներում:

Ոչ օրինական հավաքներ

23. Այն հավաքները, որոնք համարվում են ոչ խաղաղ, նույնպես ոչ օրինական են՝ վերահաս բռնության համոզիչ և ակնհայտ վտանգի պատճառով: Այնուամենայնիվ, խաղաղ հավաքները հնարավոր է նույնպես լինեն ոչ օրինական մի քանի պատճառով. (1) հավաքը չի համապատասխանել ներպետական օրենսդրությամբ սահմանված պարտադիր նախապայմաններին (որոնք իրենց հերթին պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին), կամ (2) բովանդակային առումով այն հետապնդում է ոչ օրինական նպատակ (տե՛ս կետ 135): Խաղաղ, բայց ոչ օրինական հավաքների կարգավորումը բարձրացնում է կարևոր հարցեր նրանց համար, ովքեր ունեն օրենքի կիրառման պարտականություն: Այս հարցը մանրամասն քննարկվում է 132-135-րդ կետում:

2. Ընդհանուր սկզբունքներ

24. Հավաքների ազատությանը վերաբերող օրենսդրության մշակման, մեկնաբանման և կիրառման բոլոր փուլերում պետք է առանձնահատուկ ուշադրության արժանացնել ստորև քննարկվող ընդհանուր սկզբունքները: Նրանք, ում հանձնարարված է մեկնաբանելու և կիրառելու օրենքը, պետք է հստակ պատկերացում ունենան այս սկզբունքների մասին: Այս նկատառումներով երեք սկզբունքներ՝ կանխավարկած հոգուտ հավաքների անցկացման, խաղաղ հավաքները պաշտպանելու պետության պարտավորությունը և համաչափությունը, պետք է հստակորեն ամրագրվեն հավաքների ազատությունը կարգավորող օրենսդրության մեջ:

Հօգուտ հավաքների անցկացման կանխավարկած

25. Որպես հիմնարար իրավունք՝ հավաքների ազատությունը, այնքանով, որքանով հնարավոր է, պետք է իրականացվի առանց կարգավորման: Այն, ինչը հստակորեն չի արգելվում օրենքով, պետք է ենթադրվի որպես թույլատրելի, և նրանք, ովքեր ցանկանում են հավաքվել, չպետք է թույլտվություն պահանջեն այդ անելու համար: Հօգուտ հավաքների ազատության կանխավարկածը պետք է հստակորեն սահմանվի օրենքով: Շատ երկրների օրենսդրություններում այն սահմանվում է սահմանադրական երաշխիքների ձևով, բայց նաև կարող է ամրագրվել կոնկրետ հավաքները կարգավորող օրենքով (ստորև տե՛ս հատվածներ Ռումինիայի և Հայաստանի օրենսդրություններից): Նման դրույթները չպետք է մեկնաբանվեն դատարանների և իշխանության այլ մարմինների կողմից այն տեսանկյունից, որ հանգեցնեն իրավունքի սահմանափակման³⁵: Ավելին՝ պետության պարտավորություն է կիրառել համապատասխան մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք չեն ստեղծի անհարկի բյուրոկրատական քաշքշուկներ և գործնականում կապահովեն հավաքների ազատության իրականացումը: Իշխանության համապատաս-

խան մարմինները պետք է օժանդակեն անհատներին և խմբերին, ովքեր ուզում են կազմակերպել և անցկացնել խաղաղ հավաքներ:

Հոդված 36. Ռումինիայի Սահմանադրություն

Հավաքների ազատություն

Հանրային ժողովները, ցույցերը, երթերը կան ցանկացած այլ հավաքներ ազատ են և կարող են կազմակերպվել և անցկացվել միայն խաղաղ ճանապարհով՝ ընդհանրապես առանց որևէ զենքի օգտագործման:

Հոդված 1, «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (2004 թ.)

Օրենքի նպատակը և կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակը Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) և իրավաբանական անձանց խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է:

խաղաղ հավաքները դաժադանելու դեռություն դարձվողությունը

26. Պետությունն ունի պոզիտիվ (դրական) պարտավորություն ակտիվորեն պաշտպանելու խաղաղ հավաքները (տե՛ս կետ 115-148)³⁶, և դա պետք է հստակ ձևակերպում ստանա հավաքների ազատությանն ու ոստիկանության լիազորություններին վերաբերող ցանկացած ներպետական օրենսդրական ակտի մեջ: Այս դրական պարտավորությունը պահանջում է, որ պետությունը խաղաղ հավաքների մասնակիցներին պաշտպանի ցանկացած անձից և խմբից (*մերառյալ սադրիչները և հակընդդեմ հավաքների մասնակիցները*), որոնք փորձում են որևէ կերպ խանգարել կամ խոչընդոտել դրանք:
27. Ժողովրդավարության համար խաղաղ հավաքների ազատության կարևորությունը շեշտվեց կետ 6-ում: Դրանից ելնելով՝ համապատասխան անվտանգության ու ապահովության ծախսերը (մերառյալ երթևեկության և մարդկային զանգվածի կառավարումը) ամբողջովին պետք է ծածկվեն պետական իշխանությունների կողմից: Պետությունը հասարակական կարգի պատշաճ պահպանության համար չպետք է գանձի որևէ լրացուցիչ դրամական միջոցներ: Ավելին՝ ոչ առևտրային հանրահավաքների մասնակիցներից չպետք է պահանջել ձեռք բերել քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն՝ իրենց կողմից կազմակերպված միջոցառման համար: Այդպիսի ապահովագրության ձեռք բերման ծախսը կարող է մարդկանց հետ պահել հավաքվելու ազատու-

թյան իրենց իրավունքի իրականացման ցանկությունից և շատ կազմակերպիչների համար կարող է իրոք լինել ոչ մատչելի: Մաքրության ապահովումը միջոցառումից հետո նմանապես սովորաբար ընկնում է համայնքային իշխանությունների վրա: Հավաքի կազմակերպչին, հատկապես՝ շահույթ չհետապնդող հավաքների դեպքում, չպետք է պարտադրվի վճարել մաքրության ապահովման ոչ ողջամիտ կամ ոչ մատչելի գումար: Սակայն միջոցառման առևտրային հովանավորության փաստը չպետք է օգտագործվի իշխանությունների կողմից որպես մաքրության պահպանման ոչ ողջամիտ ծախսեր պարտադրելու հիմնավորում:

Հոդված 18, «Հավաքների, ժողովների, ցույցերի, երթերի, ղիկեցների մասին» Ռուսաստանի Դաշնության օրենք (2004 թ.)

Հասարակական միջոցառման անցկացումն ապահովելու նպատակով հասարակական կարգի պահպանումը, փողոցային երթևեկության, սահմանափակ և բժշկական ծառայությունների կարգավորումը պետք է իրականացվեն [իշխանությունների կողմից] անվճար հիմունքներով:

28. Խաղաղ հավաքների պաշտպանության պետության պարտավորությունը հատկապես կարևոր է, երբ հավաքներ անցկացնող կամ անցկացնել փորձող անձինք պաշտպանում են այնպիսի տեսակետ, որը ժողովրդականություն չի վայելում, քանի որ կարող է մեծացնել ընդդիմանալու և բռնության դիմելու հնարավորությունը: Սակայն հասարակական կարգի հնարավոր խախտումը, որը կարող է ծագել խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ ցուցաբերած թշնամանքի արդյունքում, չպետք է օգտագործվի որպես խաղաղ հավաքի վրա սահմանափակման կիրառման հիմնավորում: Ի հավելումն խաղաղ հավաքների պաշտպանության պետության դրական պարտավորությունը պետք է նաև տարածվի միաժամանակ անցկացվող ընդդիմադիր հավաքների վրա (որոնք հաճախ անվանում են հակընդդեմ հավաքներ)³⁷: Հետևաբար, պետությունը պետք է առանձնացնի համապատասխան ոստիկանական ուժեր՝ աջակցելու ցույցերի և համաժամանակյա այլ հավաքների անցկացումը թիրախ լսարանի տեսանելիության և լսելիության գոտում (տես կետ 82-100):
29. Խաղաղ հավաքների պաշտպանության պարտավորությունը նաև ենթադրում է հանրահավաքների ժամանակ իրավապահ մարմինների աշխատակիցների գործելակերպի պատշաճ ուսուցում, նրանց գործելակերպում այնպիսի մշակույթի և փիլիսոփայության ձևավորում, որի արդյունքում պատշաճորեն առաջնահերթությունը կտրվի մարդու իրավունքների պաշտպանությանը³⁸: Սա նշանակում է լինել ոչ միայն տեխնիկապես հմուտ մարդկային զանգվածի կառավարման գործում, որը նվազագույնի կհասցնի մասնակիցներին պատճառվող հնարավոր վնասի ռիսկը, այլ նաև լինել իրազեկ, հասկանալ խաղաղ հավաքների անցկացմանը հնարավորինս աջակցություն ցուցաբերելու իրենց պատասխանատվությունը:

Օրինականությունը

30. Կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է ունենա ֆորմալ հիմք հիմնական օրենսդրությունում: Օրենսդրությունն իր հերթին պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի անհատը հնարավորություն ունենա գնահատելու՝ արդյոք իր վարքագիծը կհանգեցնի՞ օրենքի խախտման և նախատեսի նման խախտման հնարավոր հետևանքները³⁹: Ներպետական օրենսդրության մեջ հստակ սահմանումների ներմուծումը շատ կարևոր է օրենքի հեշտ ըմբռնման ու կիրառման համար՝ բացառելու այն գործողությունների կարգավորումը, որոնք կարգավորման կարիք չունեն: Այսպիսով, սահմանումները պետք է լինեն ո՛չ շատ բարդ, ո՛չ շատ ընդհանուր ձևակերպումներով:
31. Չնայած կանխատեսելիության պահանջը անպայմանորեն չի նշանակում հավաքների ազատության մեկ միասնական օրենքի ընդունման անհրաժեշտություն՝ այն պահանջում է հավաքների ազատությունը կարգավորելու համար վկայակոչվող տարբեր օրենքների միջև հետևողականության պահպանում: Խաղաղ հավաքների ազատությունը կարգավորող ցանկացած օրենք չպետք է կրկնի այլ օրենքում արդեն գոյություն ունեցող դրույթները, որպեսզի օգնի ապահովելու իրավական դաշտի ընդհանուր հետևողականությունն ու թափանցիկությունը:
32. Ինչքան օրենսդրությունը կոնկրետ է, այնքան այնտեղ օգտագործվող լեզուն պետք է ճշգրիտ լինի: Սահմանադրական դրույթները իրենց ընդհանուր բնույթի պատճառով կարող են լինել ոչ այնքան հստակ, որքան այլ օրենսդրական ակտերը⁴⁰: Օրենսդրության դրույթները, որոնք հայեցողաբար լիազորություններ են շնորհում կարգավորիչ մարմիններին, պետք է մանրամասն ձևակերպվեն: Պետք է ստեղծվեն հստակ ցուցումներ կամ չափանիշներ, որոնք կկարգավորեն նման լիազորությունների իրականացումը և կսահմանափակեն հնարավոր վիճարկելի մեկնաբանությունը:
33. Օժանդակության նկատառումներով, ցանկացած նախնական սահմանափակում պետք է բերվի պաշտոնական գրավոր տեսքի և դրա մասին պետք է տեղեկացվի միջոցառման կազմակերպչին: Ավելին՝ իշխանության համապատասխան մարմինները պետք է ապահովեն, որ միջոցառման ընթացքում գործադրվող ցանկացած սահմանափակում ամբողջովին համապատասխանի օրենքին և գործող օրենսդրությանը: Հավաքներից հետո օրենքով չնախատեսված պատժամիջոցների և տուգանքների կիրառումն արգելվում է⁴¹:

Համաչափությունը

34. Հավաքների ազատության նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է անցնի համաչափության թեստ⁴²: Ընդունելով, որ պիտանելիության տեսանկյունից առկա է միջամտությունների լայն շրջանակ, միշտ պետք է նախապատվությունը տրվի նվազագույն միջամտությանը՝ իշխանությունների հետապնդած օրինական նպատակին հասնելու համար⁴³:

35. Կարգավորիչ մարմինը պետք է տեղյակ լինի, որ ունի մի շարք սահմանափակումներ կիրառելու իրավասություն և պարզապես ընտրություն չպետք է կատարի չմիջամտելու կամ արգելելու միջև (տե՛ս կետ 80-82): Ցանկացած սահմանափակում պետք է սերտորեն կապված լինի բարձրացված կոնկրետ մտահոգության հետ և պետք է մանրամասն մշակվի իշխանությունների հետապնդած կոնկրետ նպատակներին համապատասխան: Պետությունը պետք է ցույց տա, որ ցանկացած սահմանափակում ծառայում է հիմնարար շահի, որը չի կարող իրականացվել սահմանափակումների բացակայության պայմաններում: Համաչափության սկզբունքը, հետևաբար, պահանջում է, որ իշխանությունները կանոնավոր, հետևողական չկիրառեն սահմանափակումներ, որոնք հիմնովին կփոխեն միջոցառման բնույթը (օրինակ՝ ստիպել նախանշված երթուղիներով երթերի անցկացումը քաղաքի ծայրամասային փողոցներում):
36. Այս կամ այն կոնկրետ սահմանափակման կիրառման համաչափության հարցը պահանջում է հաշվի առնել մի շարք գործոններ.
- իրավունքի բնույթը,
 - սահմանափակման նպատակի կարևորությունը,
 - սահմանափակման բնույթն ու ծավալները,
 - սահմանափակման և դրա նպատակի միջև եղած կապը,
 - նպատակին հասնելու սահմանափակման ավելի մեղմ միջոցների առկայությունը⁴⁴:
37. «Համաչափության սկզբունքը հավասարակշռության հասնելու միջոց է: Այն ուղղակի չի համակշռում իրավունքը և դրան միջամտելու պատճառը: Փոխարենը այն համակշռում է միջամտության բնույթը և աստիճանը միջամտության պատճառի հետ»⁴⁵: Համաչափության սկզբունքը պահանջում է հավաքների անցկացման վրա ազդող առանձին հանգամանքների լրիվ և անաչառ գնահատման իրականացում: Ի հավելումն դրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ որպես հիմնավորում՝ ազգային իշխանությունների կողմից ներկայացված պատճառները՝ ի աջակցություն համաչափության որևէ պահանջի, պետք է լինեն «էական և բավարար» և պետք է հիմնվեն «համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա»⁴⁶: Կասկածներն ու ենթադրությունները բավարար չեն կարող լինել⁴⁷:

Հասված «Հավաքների ազատության մասին» Ադրբեյջանի Հանրապետության օրենսդր. հոդված 7(III)-(IV) (1998 թ.)

Հավաքների ազատության սահմանափակումը պետք է համաչափ լինի հետապնդած նպատակներին: Այդ նպատակին հասնելու համար սահմանափակումը չպետք է գերազանցի անհրաժեշտի և բավարարի սահմանները ... հավաքների ազատության սահմանափակման համար ձեռնարկված միջոցները պետք է լինեն խիստ անհրաժեշտ այն նպատակին հասնելու համար, որի պատճառով կիրառվել է սահմանափակումը:

38. Որպես հետևանք՝ իրավական սահմանափակման ավտոմատիկ կիրառումը, օրինակ՝ հավաքների անցկացման համար հարմար որոշակի ժամերին և վայրերում բոլոր ցույցերի արգելումը, ամբողջական կիրառման վերածվելու միտում ունի և այդպիսով չի բռնում համաչափության քննությունը, քանի որ հաշվի չի առնում յուրաքանչյուր առանձին դեպքի կոնկրետ հանգամանքները:
39. Առանձին հանրահավաքների անցկացման ժամանակը, տեղը և կարգը այնուամենայնիվ կարող են կանոնակարգվել այլ մարդկանց իրավունքներին և ազատություններին ոչ ողջամիտ միջամտությունը կանխելու նպատակով: Սա արտացոլում է պատշաճ հավասարակշռության հաստատում մի կողմից՝ հավաքների միջոցով իրենց տեսակետներն արտահայտելու մարդկանց իրավունքի և մյուս կողմից՝ հավաքին չմասնակցող անձանց վրա անհարկի հոգս չբարդելու շահագրգռվածության միջև: Նման կարգավորումը պետք է հիմնված լինի հավաքի կողմից տարածվող ուղերձի բովանդակության վրա:
40. Եթե իշխանությունները, հաշվի առնելով համապատասխան գործոններ, ունեն պատշաճ հիմքեր եզրակացնելու, որ անհրաժեշտ է կիրառել սահմանափակումներ հավաքի անցկացման ժամի և տեղի, այլ ոչ՝ միջոցառման անցկացման ձևի վրա, ապա պետք է ապահովեն հարմարավետ այլընտրանքային ժամ կամ վայր⁴⁸: Ցանկացած այլընտրանք պետք է ապահովի հնարավորություն, որպեսզի հավաքի նախանշած ուղերձը արդյունավետ տարածվի հասցեատերերին, այլ խոսքով՝ պետք է լինի նպատակային լսարանի տեսանելիության և լսելիության գոտում (տե՛ս կետ 100 -102):

Չողված 13(4), «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2004 թ.)

4. Եթե իրազեկման քննարկման ժամանակ լիազոր մարմինը գտնում է, որ առկա է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ վերջին պարբերությամբ նախատեսված զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու հիմք, ապա լիազոր մարմինը պարտավոր է կազմակերպչին առաջարկել զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման այլ օրեր (իրազեկման մեջ նշված վայրում և ժամին) և այլ ժամեր (իրազեկման մեջ նշված վայրում և օրը) կամ միջոցառման ձևին վերաբերող այլ պայմաններ (իրազեկման մեջ նշված վայրում և ժամին):

Լավ վարչարարություն, որոշումների թափանցիկ կայացում և արդարադատության մասշեղիություն

41. Հանրությունը պետք է իրազեկ լինի, թե որ մարմինն է պատասխանատու հավաքների ազատության կարգավորման մասին որոշում կայացնելու համար և սա հստակորեն պետք է ամրագրվի օրենքում: Կարևոր է, որ որոշում կայացնող մարմնի լիազորությունները դրվեն նրա վրա պատշաճորեն, քանի որ նրանք, ովքեր ստիպված են կրել հրապարակային հավաքների հետ կապված ոչ միանշանակ ընկալվող որոշումներ կայացնելու պատասխանատվությունը, հաճախ ենթարկվում են հասարակական ուժեղ ճնշման (հանրային ճնշումն ունի պոտենցիալ՝ մղելու այնպիսի որոշման, որը չի արտացոլում սույն Ուղեցույցով սահմանված՝ մարդու իրավունքների սկզբունքները): Որոշ իրավահամակարգերում հավաքների կարգավորման մասին որոշումների կայացումը կարող է պատշաճ համարվել, եթե ընդունվի մեկ ուրիշ մարմնի կողմից, այլ ոչ այն իշխանական մարմնի, որին հանձնարարված է օրենքի կիրառումը: Լիազորությունների նման սահմանազատումը կարող է օգնել օրենքի կիրառման պատասխանատուներին՝ դարձնելով նրանց պակաս խոցելի աննպաստ որոշման փոփոխությանն ուղղված ճնշման դիմաց:
42. Կարգավորիչ մարմինը պետք է ապահովի հասարակության համար՝ հանրահավաքների վերաբերյալ համապատասխան հուսալի տեղեկատվության⁴⁹ մատչելիությունը: Շատ երկրներ արդեն ունեն կոնկրետ տեղեկատվության մատչելիության, որոշումների թափանցիկ կայացման, լավ վարչարարության մասին օրենսդրություն: Այդ օրենքները պետք է կիրառվեն հավաքների ազատությունը կարգավորելիս:
43. Ընթացակարգային թափանցիկությունը պետք է ապահովի, որ խաղաղ հավաքների ազատությունը չսահմանափակվի երևակայական կամ նույնիսկ իրատեսական ռիսկերի հիման վրա, որոնք հնարավորության դեպքում՝ նախքան միջոցառումը կարելի էր պատշաճորեն նվազեցնել: Եվրամիության Հիմնարար իրավունքների խարտիայի հոդված 41-ը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի պատշաճ վարչական կառավարման իրավունք:

Չոդված 41, Եվրամիության Հիմնարար իրավունքների խարտիա (հոչակված է 7 դեկտեմբերի 2000 թ.)

1. Յուրաքանչյուր անձ Եվրամիության հաստատությունների և մարմինների հետ հարաբերվելիս ունի ողջամիտ ժամանակահատվածում անկողմնակալ, արդար վերաբերմունք ստանալու իրավունք:
2. Այդ իրավունքը ներառում է.
 - յուրաքանչյուր անձի լաված լինելու իրավունքը՝ նախքան նրա նկատմամբ կկիրառվի որևէ միջոց, որ անբարենպաստ ազդեցություն կունենա նրա վրա,

- յուրաքանչյուր անձի՝ իր մասին տեղեկատվության մատչելիությունը ապահովելու իրավունքը՝ հարգելով հանդերձ կոնֆիդենցիալության, մասնագիտական և գործարար գաղտնիության օրինական շահերը,
- իշխանությունների՝ կայացրած որոշման պատճառաբանությունը ներկայացնելու պարտականությունը:

44. Խաղաղ հավաքների վերաբերյալ օրենսդրությունը պետք է ուրվագծի հստակ կարգավորիչ ընթացակարգ և սահմանի միջոցառման կազմակերպիչների և կարգավորիչ իշխանությունների միջև փոխգործողության կարգ: Այն պետք է սահմանի ժամանակային պատշաճ սահմանափակումներ՝ սկսած առաջարկվող միջոցառման անսաթվից և կարգավորման գործընթացում յուրաքանչյուր փուլի համար համարժեք ժամանակահատվածի տրամադրումից:

ԽՏՐԱԿԱՆՈՒՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

45. Խաղաղ հավաքների ազատությունը պետք է հավասարապես իրականացվի յուրաքանչյուրի կողմից: Առանց որևէ խտրականության՝ մարդու իրավունքների կիրառման սկզբունքն ընկած է մարդու իրավունքների չափանիշների մեկնաբանման հիմքում: ԶԶԻՄԴ-ի հոդված 26-ը և ՄԻԵԿ-ի հոդված 14-ը պահանջում են, որ յուրաքանչյուր պետություն պետք է, առանց որևէ խտրականության, ապահովի իր իրավասության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն պայմանագրերով ճանաչված մարդու իրավունքների իրականացումը⁵⁰:

46. ՄԻԵԿ-ի հոդված 14-ը չի նախատեսում խտրականության բացառումը՝ որպես առանձին իրավունք, այլ դիտում է այն որպես լրացում կոնվենցիայի մյուս հիմնարար դրույթներին և դրան կից արձանագրություններին: Այսպիսով, հոդված 14-ը կիրառելի է, երբ խնդրո առարկա հարցերը (և նաև սահմանափակման հիմքերը) ընկնում են կոնվենցիայի մեկ կամ ավելի այլ իրավունքների տիրույթը⁵¹: ԵԱԶԿ անդամ պետությունները և ՄԻԵԿ-ը ստորագրող կողմերը քաջալերում են վավերացնել Արձանագրություն 12-ը (տե՛ս ստորև), որն արգելում է խտրականության դրսևորումը:

ՄԻԵԿ-ի Արձանագրություն 12, Հոդված 1. ԽՏՐԱԿԱՆՈՒՅԱՆ ԸՆՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՈՒՄԸ

1. Օրենքով սահմանված որևէ իրավունքի իրականացումը պետք է ապահովի առանց որևէ հիմքի խտրականության դրսևորման բացառում՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ կարծիք ունենալուց, ազգային կամ սոցիալական ծագումից,

ազգային փոքրամասնություններին պատկանելուց, գույքային, ծննդյան և այլ վիճակներից:

2. Ոչ մեկի նկատմամբ որևէ պետական իշխանության կողմից կետ 1-ում նշված հիմքերից որևէ մեկով չպետք է կիրառվի խտրականություն:

47. Կարևոր է նշել, որ ՔՔԻՄԴ-ի հոդված 12-ը մեկնաբանվել է՝ ներառելու սեռական կողմնորոշումը՝ սեռական հիմքով խտրականությունը վկայակոչելիս⁵²: Ամստերդամի պայմանագրի հոդված 13-ը նաև սահմանում է, որ Եվրամիությունը պետք է «ձեռնարկի անհրաժեշտ գործողություններ պայքարելու ... սեռական կողմնորոշմանն ուղղված խտրականության դեմ», իսկ Յիմնարար իրավունքների ԵՄ խարտիայի հոդված 21(2)-ը արգելում է «ցանկացած խտրականություն ցանկացած հիմքով», ներառյալ սեռական կողմնորոշման հիմքի վրա⁵³:
48. Կարգավորիչ մարմինը, հետևաբար, չպետք է պարտադրի ավելի ծանր նախապայմաններ հավաքվել ցանկացող որոշ մարդկանց համար, քան մնանատիպ դեպքերում այլ մարդկանց համար⁵⁴: Կարգավորիչ մարմինը կարող է, այնուամենայնիվ, տարբեր ձևով վերաբերվել մարդկանց, ում իրավիճակները զգալիորեն տարբեր են⁵⁵: ՔՔԻՄԴ-ի հոդված 26-ը երաշխավորում է բոլոր անձանց հավասարությունը օրենքի առջև և օրենքով հավասար պաշտպանվածության իրավունքը: Սա ենթադրում է, որ հավաքների ազատությանը վերաբերող՝ իշխանությունների կայացրած որոշումները չպետք է ունենան խտրական ներգործություն, ուստի և՛ ուղղակի, և՛ անուղղակի խտրականությունն արգելվում է⁵⁶: Ավելին՝ եթե հավաքի ժամանակ դրսևորվում է հանցավոր վարքագիծ (օրինակ՝ ֆիզիկական հարձակում մարդկանց վրա), իրավապահ մարմիններն ունեն պարտավորություն՝ հետազոտելու՝ արդյոք խտրականությունն է նպաստող գործոն հանդիսացել⁵⁷:
49. Մեկ ռասայական խմբի կողմից հավաքներն արգելելու և մշտապես բացառելու փորձերը, որոնք կազմակերպվում են այլ ռասայական խմբերի կողմից հիմնականում բնակեցված տարածքներում, կարող է հանգեցնել մեկուսացման (սեգրեգացիայի), ուստի հակասության մեջ կմտնի խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ: Կոնվենցիայի հոդված 3-ը հաստատում է, որ «կողմերը մասնավորապես դատապարտում են ռասայական սեգրեգացիան և ապարտեիդը և ձեռնարկում միջոցներ՝ իրավասության տակ գտնվող տարածքներում կանխելու, արգելելու և արմատախիլ անելու մնանատիպ բնույթ ունեցող բոլոր գործելակերպերը»:
50. Յետևյալ հատվածները լուսաբանում են մարդու իրավունքների մի քանի առանցքային դրույթներ, որոնք կոչված են պաշտպանելու խաղաղ հավաքների ազատությունը այն խմբերի կողմից, ում հիմնարար ազատությունները երբեմն պաշտպանվում են ոչ պատշաճորեն:

51. **Խմբերը և իրավաբանական անձինք:** Խաղաղ հավաքների ազատությունը կարող է իրականացվել անհատների և կազմակերպությունների կողմից⁵⁸ (ստորև բերված է հատված Բուլղարիայի Հավաքների, ժողովների և ցույցերի մասին օրենքից): Խաղաղ հավաքների ազատության պաշտպանությունը գործնականում ապահովելու համար պետությունները պետք է վերացնեն ցանկացած հասարակական կազմակերպության պարտադիր գրանցումը և երաշխավորեն պաշտոնական և ոչ պաշտոնական միավորումներ ստեղծելու քաղաքացիների իրավունքը:

Հոդված 2, Բուլղարիայի օրենքը Հավաքների, ժողովների և ցույցերի մասին (1990 թ.)

Հավաքներ, ժողովներ և ցույցեր կարող են կազմակերպվել և անցկացվել քաղաքացիների, միավորումների, քաղաքական և այլ սոցիալական կազմակերպությունների կողմից:

52. **Փոքրամասնություններ:** Հանրահավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու ազատությունը պետք է երաշխավորվի փոքրամասնությունների և բնիկ խմբերի համար: Եվրոպայի խորհրդի Փոքրամասնությունների մասին շրջանակային կոնվենցիայի (1995 թ.) հոդված 7-ով սահմանվում է, որ «Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հավաքներ անցկացնելու, միավորումներ կազմելու, արտահայտվելու, մտքի, խղճի և դավանանքի ազատությունը»⁵⁹: ՄԱԿ-ի Ազգային, էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնությունների մասին հռչակագրի (1992 թ.) հոդված 3(1)-ը սահմանում է, որ «փոքրամասնություններին պատկանող անձինք առանց որևէ խտրականության կարող են իրականացնել իրենց իրավունքը ... անհատապես, ինչպես նաև համայնքով՝ իրենց խմբի այլ անդամների հետ»⁶⁰:
53. **Տվյալ ղեռնության ֆաղափարություն չունեցող անձինք (աղաքահաներ, փախսականներ, օտարերկրյա ֆաղափարներ, աղաքսան որոնողներ, միգրանտներ և զբոսաշրջիկներ):** Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքը պահանջում է, որ տվյալ պետության քաղաքացիություն չունեցող անձինք «օգտվեն խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքից»⁶¹: Հետևաբար, կարևոր է, որ օրենքը տարածվի ոչ միայն տվյալ պետության քաղաքացիների, այլ նաև ապատրիդների, փախստականների, օտարերկրյա քաղաքացիների, ապաստան որոնողների, միգրանտների և զբոսաշրջիկների վրա: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ՄԻԵԿ-ի հոդված 16-ը սահմանում է, որ «Հոդված 10-ում, 11-ում, 14-ում ոչինչ չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսել օտարերկրացիների քաղաքական գործունեության համար»: Հոդված 16-ի կիրառումը չի վերաբերում տվյալ պետության քաղաքացիություն չունեցող անձանց այնպիսի ելույթներին, որոնք ուղղակիորեն սպառնում

են ազգային անվտանգությանը: Չկա որևէ պատճառ արգելելու տվյալ պետության քաղաքացիներին մասնակցել հավաքներին, որոնք, օրինակ, վիճարկում են ներգաղթի ներպետական օրենքները կամ սկզբունքները: Անդրազգային բողոքի շարժումների աճը շեշտում է տվյալ պետության քաղաքացիություն չունեցող անձանց հավաքների ազատության աջակցությունը⁶²:

54. **Կանայք:** ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի (ԿՆԽՎԿ) հոդված 3-ը սահմանում է, որ կողմերը պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու կանանց ամբողջական զարգացումն ու առաջխաղացումը, որի նպատակն է, տղամարդկանց հետ համահավասար, երաշխավորել նրանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը⁶³:
55. **Երեխաները:** Չափահասների մման՝ երեխաները նույնպես ունեն պահանջներ և շահեր: Խաղաղ հավաքների ազատությունը նրանց համար ապահովում է իրենց տեսակետներն արտահայտելու և հասարակական կյանքում իրենց ներդրումն ունենալու հնարավորություն: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 15-ը մասնակից պետություններից պահանջում է ճանաչել խաղաղ հավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու երեխաների իրավունքը⁶⁴:

Հոդված 15, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունքը:
2. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման,՝ բացի այնպիսիներից, որոնք սահմանվում են օրենքի համաձայն և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ են ի շահ ազգային անվտանգության կամ հանրության ապահովության, հասարակական կարգի պահպանման, բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

56. Հաշվի առնելով հանրահավաքների կազմակերպիչների կարևոր պատասխանատվությունը (տե՛ս կետ 149-155)՝ օրենքը կազմակերպիչների համար կարող է սահմանել որոշակի նվազագույն տարիքային շեմ՝ երեխայի զարգացող կարողությունների հանդեպ պատշաճ հարգանք տաժելով հանդերձ (տե՛ս Հավաքների մասին Ֆինլանդիայի օրենքը): Օրենքը կարող է սահմանել նաև, որ անչափահասները կարող են կազմակերպել հանրային միջոցառումներ միայն իրենց ծնողների կամ օրինական խնամակալների համաձայնությամբ:

Բաժին 5, Հավաքների մասին Ֆինլանդիայի օրենք (1999 թ.)

Հանրահավաքներ կազմակերպելու իրավունք

... Անձը, որ դեռևս լիարժեք իրավունակ չէ, սակայն լրացել է նրա 15 տարին, կարող է կազմակերպել հանրահավաք, մինչև չներկայացվի փաստարկ, որ նա անկարող է իրականացնել օրենքով հանրահավաքի կազմակերպչին ներկայացվող պահանջները: Առանց լիարժեք իրավունակության այլ անձինք կարող են հանրահավաքներ կազմակերպել լիարժեք իրավունակություն ունեցող անձանց հետ:

57. Սահմանափակ իրավունակությամբ այլ անձինք: Համաձայն միջազգային չափանիշների՝ «հոգեկան հիվանդություն ունեցող յուրաքանչյուր անձ պետք է իրավունք ունենա իրականացնելու իր բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ճանաչված են ... Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և համապատասխան այլ գործիքների կողմից»⁶⁵: ՄԱԿ-ի Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիան նմանապես շեշտում է «բոլոր հաշմանդամների՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման, պաշտպանության և դրանց լիարժեք և հավասար իրականացման» անհրաժեշտությունը⁶⁶: Այսպիսով, անկախ իրավունակությունից, պետք է խթանվի յուրաքանչյուրի խաղաղ հավաքների ազատությունը:

58. Ուսիկանությունը, զինծառայողները և ղեկավարողական դասերը: Միե՛նդ օրենսդրությամբ հնարավորություն է տալիս զինված ուժերի, ոստիկանության, պետական ապարատի ներկայացուցիչների կողմից «[հավաքների ազատության և միավորումների ազատության իրավունքի] իրականացման վրա օրինական սահմանափակումների» կիրառումը⁶⁷: Ցանկացած նման սահմանափակում պետք է նախատեսի, որ և՛ համապատասխան ծառայություն իրականացնողների պարտականությունները պատշաճորեն կատարվեն, և՛ պահպանվի նրանց չեզոքության նկատմամբ հասարակական վստահությունը⁶⁸: «Չեզոքության» սահմանումը առանցքային է: Այն չպետք է մեկնաբանվի կարծիք ունենալու կամ արտահայտելու ազատության անհարկի սահմանափակում: Հետևաբար, օրենսդրությունը չպետք է սահմանափակի ոստիկանական կամ զինվորական անձնակազմի հավաքների ազատությունը, եթե սահմանափակման պատճառներն անմիջապես կապված են նրանց ծառայողական պարտականությունների հետ կամ պետք է սահմանափակի այն չափով, որը բացարձակապես անհրաժեշտ է մասնագիտական պարտականությունների տեսանկյունից: Սահմանափակումներ պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ հավաքի մասնակցությունը կվիճարկեր ոստիկանական կամ զինվորական անձնակազմի հասարակության բոլոր հատվածներին ծառայելու չեզոքությունը:

59. **Մարդու իրավունքների դաժադաններ:** Մարդու՝ համընդհանուր ճանաչում ստացած իրավունքները և հիմնարար ազատությունները խթանող և պաշտպանող առանձին անձանց, խմբերի և հասարակական կառույցների իրավունքների և պարտականությունների մասին ՄԱԿ-ի հռչակագիրը պաշտպանում է խաղաղ հավաքների ազատությունը՝ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները պաշտպանելու նպատակով⁶⁹:

3. Հավաքների ազատության սահմանափակումները

60. Չնայած մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները ամրապնդում և պաշտպանում են խաղաղ հավաքների ազատության իրավունքը՝ նրանք նաև հնարավորություն են տալիս պետություններին կիրառելու որոշ սահմանափակումներ այդ ազատության վրա: Սույն գլուխը վերաբերում է սահմանափակումների կիրառման օրինական հիմքերին և կիրառվող սահմանափակումների տեսակներին:

Հավաքների ազատության նկատմամբ կիրառվող սահմանափակումների օրինական հիմքերը

61. Սահմանափակման օրինական հիմքերը (օրինակ՝ անկարգությունների կամ հանցագործության կանխումը կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը) ամրագրված են մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային համապատասխան փաստաթղթերում: Ներպետական օրենսդրությունը չպետք է ավելացնի սահմանափակման լրացուցիչ հիմքեր:

62. Կարգավորիչ մարմինները չպետք է արգելք հանդիսանան հավաքների ազատության իրականացմանը, մինչև դրա համար չլինեն համոզիչ փաստարկներ: Ստորև ներկայացվող ցուցումների կիրառումը պետք է օգնի կարգավորիչ մարմիններին՝ որոշելու նման փաստարկների համաչափությունը: Ներքոնշյալ օրինական նպատակների ցանկը (ինչպես նշված են ԶԶԻՄԴ-ի և ՄԻԵԿ-ի սահմանափակող հոդվածներում, համապատասխանաբար՝ հոդված 21 և հոդված 11) սահմանափակումներ կիրառելու թույլտվություն չէ, և սահմանափակումների կիրառման բոլոր հիմնավորումների ապացուցման պատասխանատվությունն ուղղակիորեն ընկնում է իշխանությունների վրա:

63. **Հասարակական կարգ:** Այս տերմինին բնորոշ ոչ ճշգրտությունը⁷⁰ չպետք է շահարկվի խաղաղ հավաքների արգելումը և ցրումը արդարացիելու նպատակով: Ո՛չ հասարակական կարգի խախտման ենթադրյալ ռիսկը, ո՛չ թշնամական լսարանի ներկայությունը չպետք է հանդիսանան խաղաղ հավաքներն արգելելու օրինական հիմք: Հավաքների անցկացման նախնական սահմանափակումները, որոնք կիրառվում են բռնության գործադրման հնարավոր աննշան դեպքերի ժամանակ, ավելի շատ կարելի է դիտարկել որպես ոչ համարժեք միջոց, իսկ ցանկացած առանձին բռնության դեպքերի բռնկման դեմ պետք է պայքարել ձերբակալության կամ խախտման փաստի առիթով դատական հետապնդման, այլ ոչ կանխավ սահմանափակումներ կիրառելու միջոցով⁷¹: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ «մարդը չի դադարում օգտվել հավաքների ազատության իր իրավունքից ցույցի ընթացքում այլոց կողմից կատարված հատուկենտ բռնության դեպքերի, այլ պատժելի գործողությունների պատճառով, եթե

տվյալ մարդը շարունակում է խաղաղ մնալ իր մտադրություններում և դրսևորել խաղաղ վարքագիծ»⁷²:

64. Հասարակական կարգի պաշտպանության անհրաժեշտության հիմքով սահմանափակումներ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ հավաքի մասնակիցները հրահրում են անմիջական հակաօրինական գործողություններ, կամ գոյություն ունի նման գործողությունների իրականացման հավանականություն: Այս սկզբունքը հիմնված է ԱՄՆ նախադեպային իրավունքի մեջ ամրագրված «ակնհայտ և անխուսափելի վտանգի մասին դոկտրինի» վրա և շատ համահունչ է ազգային անվտանգության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության մատչելիության մասին «յոհաննեսբուրգյան սկզբունքների» 6-րդ սկզբունքին: Այդ սկզբունքն իրականացվում է, երբ առկա են բռնության դրդման մտադրություն, անխուսափելի բռնի գործողությունների իրականացման մեծ հավանականություն, ինչպես նաև այդ գործողությունների և տվյալ հավաքում արտահայտված կարծիքի միջև գոյություն ունի պատճառահետևանքային կապ: Այս մոտեցումը նախատեսվում է տարածել հակասական ելույթների և քաղաքական քննադատության պաշտպանության նկատառումներով, քանի դեռ այն չի ներկայացնում բռնության իրական և անմիջական վտանգ: Խաղաղ հավաքների ազատության և արտահայտվելու ազատության իրականացման ժամանակ ծագած վիճելի իրավիճակներում «ակնհայտ և անխուսափելի վտանգի» չափանիշի կիրառումը թույլ է տալիս ապահովել, որ քաղաքական մասնակցության իրավունքը չստորադասվի⁷³ կայացված որոշումներին:
65. **Հանրային անվսնգությունը:** Հատման զգալի տիրույթ կա հանրային անվտանգության նկատառումների և հասարակական կարգի պահպանության միջև: Պետությունն ունի հասարակության անվտանգությունը պահպանելու պարտավորություն և որևէ հանգամանքից ելնելով՝ այդ իրավունքը չպետք է վերագրվի կամ պատվիրակվի հավաքի մասնակիցներին: Սակայն սա չի նշանակում, որ կազմակերպիչն ու կարգադրիչները չեն կարող աջակցել հասարակության անվտանգության ապահովմանը: Օրինակ՝ հավաքի կազմակերպիչը կարող է ներկայացնել ցանկացած պահանջ ընդդեմ այն հայտարարությունների, որ իր կազմակերպած միջոցառումը կարող է սպառնալիքի տակ դնել հասարակական անվտանգությունը՝ ապահովելով համարժեք հսկողություն (տե՛ս կետ 156-160):
66. **Առողջության և բարոյականության դաժժամությունը:** Պետք է նշել, որ «առողջության իրավունքը սերտորեն կապված է մարդու այլ իրավունքների իրականացման հետ և կախված է դրանցից ... ներառյալ ... միավորումներ կազմելու, հավաքների և տեղաշարժվելու իրավունքների: Այս և այլ իրավունքներն ու ազատությունները առողջության իրավունքի անբաժանելի բաղկացուցիչներն են»⁷⁴:

67. Հավաքների ազատության իրականացման վրա կիրառված ցանկացած սահմանափակում չպետք է վնասի այդ ազատության բուն էությանը: Որոշակի քաղաքական գաղափարախոսության կամ կրոնական ուղղության սկզբունքներին հավատարիմ լինելը չի կարող ծառայել հավաքների ազատության իրականացման վրա կանխարգելիչ կամ այլ պատժամիջոցներ կիրառելու արդարացուն: Ավելին՝ պետք է հաշվի առնել, որ մարդու իրավունքների ոլորտի հիմնական պայմանագրերը (ՔՔԻՄԴ և ՄԻԵԿ) ոչ միայն հանդիսանում են «կենդանի գործիքներ», որոնք կոչված են արտացոլելու փոփոխվող բարոյական արժեքները, այլ նաև այն, որ քաղաքական իշխանության սուբյեկտների բարոյական հայացքները, այն իմաստով, ինչպես հասկացվում են հավաքների ազատության սահմանափակման հիմքերի համատեքստում, համարժեք չեն հասարակության բարոյականությանը⁷⁶:
68. Ինչպես նշվեց վերը՝ «Օրինականությունը» բաժնում (սե՛ս կետ 30-33), ցանկացած սահմանափակում պետք է ունենա իր հիմքերը ներպետական օրենսդրության մեջ և այն պետք է լինի բավականաչափ պարզ և հստակ՝ հնարավորություն տալով անհատներին կանխատեսելու իրենց գործողությունների հետևանքները: Բավարար չէ, որ վարքագիծը բարոյականության տեսանկյունից լինի պարզապես վիրավորական, անհրաժեշտ է, որ այն ճանաչվի հանցավոր և որպես այդպիսին սահմանվի օրենքով⁷⁶: Իրավական հստակության այս պահանջը հավասարապես կիրառվում է բոլոր տեսակի սահմանափակումների վրա, որոնք կիրառվում են նախքան հավաքների անցկացումը, դրանց անցկացման ընթացքում և անցկացումից հետո (ներառյալ, օրինակ՝ հավաքները սահմանափակելու նպատակ ունեցող իրավական դրույթները) և համարվում են «վնասակար՝ հասարակության բարօրության համար», ինչպես նաև վարչական նորմեր, որոնք նախատեսում են պատիժ «հասարակական վայրերում «անպարկեշտ արտահայտություններ» օգտագործելու համար»⁷⁷:
69. Անհրաժեշտ է, որ հասարակական բարօրության պաշտպանությանն ուղղված միջոցառումները նաև համապատասխանեն օբյեկտիվ չափանիշներին՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք դրանք արձագանքում են հասարակության հրատապ կարիքներին և համապատասխանում են համաչափության սկզբունքին⁷⁸: Պետք է դրվի պետության չեզոքության պահանջ. դա հնարավորություն կտա խուսափելու բարոյական չափանիշների վրա հիմնված դատողություններից, օրինակ՝ որևէ սեռական կողմնորոշմանը մյուսի հանդեպ նախապատվություն տալը (տե՛ս կետ 45-59)⁷⁹:
70. **Այլ անձանց իրավունքների և ազատությունների դաժադանությունը:** Կարգավորիչ մարմնի պարտավորությունն է սահմանել պատշաճ համակշռում խաղաղ հավաքների կարևոր ազատության և այդ հավաքներից ազդեցություն կրած, դրանց հետ հակասության մեջ մտած, տվյալ բնակավայրում ապրող, աշխատող, առևտրով և գործարարությամբ զբաղվող անձանց իրավունքի միջև: Համակշռու-

մը պետք է ապահովի, որ միևնույն տարածքում անցկացվող այլ գործողությունները շարունակվեն, եթե չեն սպառնում դառնալ չարդարացված հոգս հավաքի մասնակիցների և ոչ մասնակիցների համար⁸⁰: Այդպիսով, միայն հավաքի ընդհատման կամ դրա նկատմամբ հակազդեցության փաստը չի կարող պատճառ դառնալ տվյալ հավաքի վրա նախնական սահմանափակումներ կիրառելու համար: Հաշվի առնելով հանդուրժողականության կարևորությունը ցանկացած ժողովրդավարական պետությունում՝ պետք է սահմանվի թույլատրելիության բարձր շեմ, և միայն այն գերազանցելուց հետո պետք է որոշել, թե արդյոք այս կամ այն հանրահավաքը հղի⁸¹ է մյուսների իրավունքների ու ազատությունների անհիմն ոտնահարման վտանգով: Սա հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով, որ հավաքների ազատությունը՝ համաձայն սահմանման, թույլատրում է միայն ժամանակավոր միջամտություն այլոց իրավունքներին:

71. Երբ կարգավորիչ մարմինը սահմանափակում է հավաքների ազատության իրավունքը՝ դրանց հետ հակասության մեջ մտած այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով, այն պետք է հայտնի.
 - օրինական իրավունքի համար ներկայացված պահանջի բնույթը,
 - թե ինչպես, այդ կոնկրետ համատեքստում, հնարավոր է այդ իրավունքների ոտնահարումը (նկարագրելով քննարկվող յուրաքանչյուր փաստարկը),
 - թե կոնկրետ ինչպես են իշխանությունների որոշումները մեղմացնում մնան խախտումները (սահմանափակումների անհրաժեշտությունը) և
 - թե ինչու հնարավոր չէ կիրառել ավելի թույլ միջամտության միջոցառումներ:
72. Իրավունքները, որոնք ըստ հավաքին չմասնակցող անձանց պահանջի՝ կարող են ոտնահարվել հավաքի անցկացման պատճառով, ներառում են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը (պաշտպանվում է ՔԲԻՄԴ-ի հոդված 17-ով և ՄԻԵԿ-ի հոդված 8-ով)⁸¹, սեփականությունից խաղաղ օգտվելու իրավունքը (պաշտպանվում է ՄԻԵԿ-ի Արձանագրություն 1-ի հոդված 1-ով)⁸², անձի ազատության և անվտանգության իրավունքը (պաշտպանվում է ՔԲԻՄԴ-ի հոդված 9-ով և ՄԻԵԿ-ի հոդված 5-ով) և ազատ տեղաշարժվելու իրավունքը (պաշտպանվում է ՔԲԻՄԴ-ի հոդված 12-ով և ՄԻԵԿ-ի Արձանագրություն 4-ի հոդված 2-ով): Հնարավոր է նաև՝ որպես հավաքների ազատության սահմանափակման հիմնավորում, ներկայացվի այլոց կրոնական հայացքների և համոզմունքների արտահայտման իրավունքի պաշտպանությունը (ՔԲԻՄԴ-ի հոդված 18-ով և ՄԻԵԿ-ի հոդված 9-ով): Սակայն մնան պահանջը ամրապնդելու համար պետք է հիմնավորել, որ տվյալ հավաքը ուղիղ և անմիջական սպառնալիք է ներկայացնում այլոց կրոնական հայացքների և համոզմունքների արտահայտման համար⁸³:
73. **Ազգային անվսանգություն:** Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի սահմանափակումներից շեղվելու մասին «Սիրակուզյան սկզբունքների» (1985 թ.) մեկնաբանությունը սահմանափակում է ազգա-

յին անվտանգության նկատառումները՝ որպես հիմք ընդունելով արտահայտվելու և հավաքների ազատության սահմանափակումը.

Ազգային անվտանգություն, Մաս IV, Զաղաֆացիական և ֆաղաֆական իրավունքների միջազգային դաշնագրի դրույթներից սահմանափակումների և շեղումների մեկնաբանության «Սիրակուզյան սկզբունքները»

29. Ազգային անվտանգության շահերը վկայակոչելով՝ որոշակի իրավունքների սահմանափակմանն ուղղված միջոցառումների կիրառման հիմնավորումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ միջոցները ձեռնարկվում են պետության գոյությունը, տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական անկախությունը պաշտպանելու, ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրումը բացառելու նպատակով:
30. Ազգային անվտանգության շահերի վկայակոչումը չպետք է պատճառ հանդիսանա՝ կիրառելու սահմանափակումներ, որոնք նպատակ ունեն կանխելու օրենքին կամ հասարակական կարգի խախտմանն ուղղված տեղական կամ հարաբերականորեն առանձնացված բնույթի սպառնալիքները:
31. Ազգային անվտանգությունը չպետք է օգտագործվի որպես առիթ՝ պարտադրելու անհատակ և վիճարկելի սահմանափակումներ և կարող է վկայակոչվել միայն այն դեպքում, երբ չարաշահումների դեմ առկա են համարժեք երաշխիքներ և իրավական պաշտպանության միջոցներ:
32. Մարդու իրավունքների սխտեմատիկ խախտումները վտանգի տակ են դնում բուն պետության անվտանգությունը, միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: Պետությունը, որը պատասխանատվություն է կրում նման խախտումների համար, չպետք է վկայակոչի ազգային անվտանգության շահերը՝ որպես ձեռնարկվող միջոցների հիմնավորում, որոնք նպատակ ունեն ճնշելու այդ խախտումների դեմ ուղղված դիմադրությունը կամ գործադրելու ռեպրեսիվ միջոցներ սեփական բնակչության դեմ:

74. Ազգային անվտանգության խնդրին հավաքների ազատության առումով հաճախ տրվում է շատ լայն մեկնաբանություն: Ազգային անվտանգության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության մատչելիության մասին «Յոհաննեսբուրգյան սկզբունքների» 7-րդ, 8-րդ, 9-րդ սկզբունքների համաձայն⁸⁴՝ արտահայտվելու հետևյալ օրինակները *չմեծ է* համարվեն սպառնալիք ազգային անվտանգությանը.

- Բացահայտ քարոզչություն՝ ուղղված կառավարության քաղաքականության կամ բուն կառավարության փոփոխությանը, պայմանով, որ նման քարոզչությունը չի պարունակում կոչեր՝ ուղղված օրենքի ուղղակի և էական խախտմանը կամ չի ստեղծում լուրջ և անմիջական սպառնալիք օրենքի ուղղակի և էական խախտման համար: Նման մոտեցում է ցուցաբերվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից. «Ժողովրդավարության համար

էական նշանակություն ունի տարբեր քաղաքական⁸⁵ ծրագրերի առաջարկման և քննարկման հնարավորությունը, ներառյալ այն ծրագրերը, որոնք վիճարկում են գործող իշխանական համակարգի գոյությունը»:

- Ազգին, պետությանը կամ դրա խորհրդանիշներին, կառավարությանը, դրա գերատեսչություններին կամ պետական պաշտոնյաներին կամ օտար ազգին, պետությանը կամ դրա խորհրդանիշներին, կառավարությանը, դրա գերատեսչություններին կամ պետական պաշտոնյաներին քննադատելը կամ վիրավորանք հասցնելը⁸⁶: Նմանապես այն հավաքների սահմանափակումը, որոնք անցկացվում են հակասահմանադրական համարվող տեսակետների արտահայտման նպատակով, հավաքի բովանդակության կարգավորման ձև է և այդ պատճառով հանդիսանում է խաղաղ հավաքների ազատության չարդարացված ոտնահարում: Եթե հավաքում արտահայտված կարծիքները վերաբերում են երկրի տարածքային ամբողջականությանը, ապա ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտության հիմքով այդ հավաքների սահմանափակումը հնարավոր է միայն տվյալ հավաքի կողմից թույլատրելիության բարձր սահմանը գերազանցելու դեպքում: «*Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի*» գործում (2001 թ.)⁸⁷, որը վերաբերում էր Բուլղարիայի անջատողական խմբավորումների գործողություններին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտավ, որ Բուլղարիայի կառավարությունը ոչ պատշաճորեն էր սահմանափակել հայցվորի՝ հավաքների ազատության իրավունքը: Դատարանը որոշում կայացրեց, որ չնայած քննարկվող հարցերի՝ ազգային խորհրդանիշներին և ազգային ինքնությանը վերաբերելու հանգամանքին՝ դրանք բավարար պատճառ չէին պետական իշխանությունների կողմից իրենց գործողություններին այդքան լայն ազատություն տալու համար:
- Կրոնական հանոգումներին, խղճի կամ դավանանքի հիմքով զորահավաքի կամ զինվորական ծառայության, կոնկրետ հակամարտության, միջազգային վեճերի կարգավորման գործընթացում ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրման դեմ բողոքելը կամ դա քարոզելը:
- Տեղեկատվության տարածումը որևէ կազմակերպության կողմից, որն ըստ կառավարության հայտարարության՝ սպառնում է ազգային անվտանգությանը կամ դրան առնչվող շահերին, կամ տեղեկատվության տարածումը որևէ կազմակերպության մասին, տեսակետների արտահայտումը որոշակի լեզվով, մասնավորապես՝ ազգային փոքրամասնության լեզվով:

Ընդդեմ ահաբեկչության և ծայրահեղականության օրենսդրությունը

75. Ահաբեկչության և ծայրահեղականության դեմ ձեռնարկվող և անվտանգության ամրապնդմանն ուղղված ջանքերը երբեք չպետք է վկայակոչվեն՝ հիմնավորելու վիճահարույց որևէ գործողություն, որը կսահմանափակի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը: Իրավաբանների միջազգային հանձնաժողովի կողմից ընդունված «Ահաբեկչության դեմ պայքարում մարդու

իրավունքների և օրենքի գերակայության պաշտպանության մասին» Բեռլինի հռչակագիրը (2004 թ.)⁸⁸ շեշտում է, որ «սահաբեկչական գործողությունների անցանկալի բնույթը չի կարող պետությունների համար իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները չկատարելու հիմք կամ շարժառիթ ծառայել, մասնավորապես՝ մարդու հիմնարար իրավունքները պաշտպանելու գործում»։ Հռչակագրի 8-րդ սկզբունքը հատկապես տեղին է.

Սկզբունք 8. Իրավաբանների միջազգային հանձնաժողովի կողմից ընդունված Ահաբեկչության դեմ դայաբուրն մարդու իրավունքների և օրենքի գերակայության դաճճդանության մասին Բեռլինի հռչակագիրը

Հակասահաբեկչական միջոցառումներ իրականացնելիս պետությունները պետք է հարգեն և երաշխավորեն մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ներառյալ՝ կրոնի, խղճի կամ դավանանքի, միավորումների և հավաքների ազատությունը, ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խաղաղ իրականացումը, որն առանձնակի մտահոգության առարկա է կոնֆլիկտների տեղեկատվության հավաքման և տարածման գործընթացում:

76. Հակասահաբեկչական միջոցառումները ներկայացնում են մի շարք առանձնակի դժվարություններ խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացման համար: Որպես կանոն՝ ներկայացվում է հրատապ օրենսդրություն, որն ընդլայնում է փողոցում մարդկանց կանգնեցնելու և խուզարկելու լիազորությունները, թույլ է տալիս երկարացնել վարչական կալանքի ժամկետը՝ առանց մեղադրանք ներկայացնելու: Բացառիկ միջոցառումների այլ օրինակներ են որոշակի կազմակերպությունների գործունեության արգելումը, քրեական պատժի սահմանումը նման կազմակերպություններին աջակցություն հայտնելու համար, կոնկրետ տարածքների և վայրերի նշանակության համարումը որպես արգելված վայրեր, խստացված պատժամիջոցների կիրառումը ոչ օրինական հավաքներին մասնակցելու համար և սահմանների վերահսկողության ուժեղացումը՝ կանխելու այն մարդկանց մուտքը, որոնք ենթադրաբար կարող են մասնակցել ցույցերին և նպաստել հասարակական կարգի խախտմանը⁸⁹: Այս բոլոր միջոցառումները սահմանափակում են խաղաղ հավաքների ազատության իրավունքը և դրանք ընդունելիս անհրաժեշտ է ապացուցել դրանց անհրաժեշտ և խիստ համաչափ լինելը (տե՛ս կետ 34-40): «Ամենաթիվ ինթերնեշնլի» ընդունած «Մարդու իրավունքների տասը հիմնական չափանիշները իրավապահ մարմինների համար» սահմանում են, որ այնպիսի բացառիկ հանգամանքներ, ինչպիսին է արտակարգ դրությունը կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չեն կարող արդարացնել որևէ շեղում այս չափանիշներից⁹⁰:

77. Հակահաբեկչությանը կամ ծայրահեղականությանը վերաբերող ներպետական օրենսդրությունը պետք է տա այդ տերմինների մանրամասն սահմանումը, և այդ սահմանումը չպետք է ներառի քաղաքացիական անհնազանդության և բողոքի ակցիաների մասնակիցներին, որոշակի քաղաքական, կրոնական, գաղափարական նպատակներ հետապնդող մարդկանց կողմից կազմակերպված ակցիաներ կամ փորձի ազդեցություն գործել հասարակության այլ հատվածների, կառավարության կամ միջազգային կարծիքի վրա:

Շեղում դաժնավորությունների կասարումից դաժնեազմի կամ այլ արսակարգ իրավիճակների ժամանակ

78. ՔՔԻՄԴ-ի հոդված 4-ի և ՄԻԵԿ-ի հոդված 15-ի համաձայն՝ պատերազմական կամ այլ արտակարգ իրավիճակներում, երբ սպառնալիքի տակ է բնակչության կյանքը, պետությունները ձեռնարկում են միջոցներ, որոնք հանդիսանում են շեղում նրանց կողմից ստանձնած՝ հավաքների ազատությունը երաշխավորող պարտավորություններից: Այդ շեղումները կարող են կիրառվել միայն այն չափով, ինչ չափով պահանջում է իրավիճակի հրատապությունը, և պայմանով, որ այդ միջոցառումները համապատասխանեն պետությունների կողմից միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորությունների⁹¹: Գզնաժամը կամ արտակարգ դրությունն այն իրավիճակն է, որը «վերաբերում է ամբողջ բնակչությանը և սպառնալիք է ներկայացնում այն հանրության կազմակերպված կյանքին, որից կազմված է Պետությունը»⁹²: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթներից սահմանափակումների և շեղումների մեկնաբանության «Սիրակուզյան սկզբունքները» հավելյալ ամրագրում են, որ «ո՛չ ներքին հակամարտությունն ու խժոժությունները, եթե չեն ներկայացնում լուրջ և անխուսափելի սպառնալիք ազգի գոյությանը, ո՛չ տնտեսական դժվարությունները չեն կարող արդարացնել հոդված 4-ով նախատեսված շեղումների կիրառումը»⁹³:

79. Համապատասխան պետությունը⁹⁴ պարտավոր է սեփական քաղաքացիներին ոչ միայն հայտնել արտակարգ դրություն մտցնելու մասին, այլև այդ մասին իրազեկել ՔՔԻՄԴ-ի կողմ հանդիսացող մյուս պետություններին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին (ՔՔԻՄԴ-ի հոդված 4 (3)) և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին (ՄԻԵԿ-ի հոդված 15 (3)) և ԵԱՀԿ-ին (կետ 28.10 Մարդկային չափման համաժողովի մոսկովյան խորհրդակցության փաստաթուղթ, 1991 թ.): Շեղումները պետք է սահմանափակ ժամկետով լինեն:

Սահմանափակումների ռեակցիաներ

80. **Հավաքների անցկացման ժամանակի, ժողովի և կարգի սահմանափակումները:** Սահմանափակումների տեսակները, որոնք հնարավոր է կիրառվեն հավաքների նկատմամբ, վերաբերում են ժամանակին, տեղին և կարգին: Այս դրույթը սկիզբ է առնում ԱՄՆ դատական պրակտիկայից և արտացոլում է այն փաստը, որ կարգա-

վորիչ մարմնի տրամադրության տակ առկա է սահմանափակումների լայն շրջանակ, որոնք չեն խոչընդոտում կարծիքի արտահայտումը: Այլ խոսքով՝ կարգավորիչ մարմնի տրամադրության տակ գտնվող միջոցների զինանոցը չի հանգում միայն հավաքներին չմիջամտելու կամ դրանք արգելելու միջև ընտրությամբ, քանի որ գոյություն ունեն բազմաթիվ միջանկյալ սահմանափակումներ, որոնք նույնպես կարող են տանել դեպի ցանկալի նպատակը (ներառյալ կանխարգելիչ գործողությունները, որոնք կարող են վնաս հասցնել գույքին և անձին): Նման սահմանափակումները կարող են վերաբերել հավաքների անցկացման տեղին, ժամին և կարգին: Հավաքների անցկացման կարգի հետ կապված սահմանափակումները կարող են վերաբերել ձայնաուժեղացուցիչ սարքավորումների, լուսային և վիզուալ էֆեկտների օգտագործմանը: Այս դեպքում կարգավորումը կարող է լինել իրավագործ կախված առաջարկվող հավաքի անցկացման տեղից և օրվա ժամից:

81. Կարգավորիչ մարմինը չպետք է սահմանափակումներ կիրառի ուղղակի կանխելու հասարակական կարգի հնարավոր խախտումը կամ այլոց իրավունքներին միջամտությունը: Այն փաստը, որ սահմանափակումները կարող են գործադրվել միջոցառման ընթացքում (և ոչ միայն նախքան միջոցառումը), հնարավորություն է տալիս իշխանություններին խուսափել նախնական խիստ սահմանափակումների կիրառումից և ապահովել, որ սահմանափակումները համապատասխանեն և արտացոլեն իրավիճակը՝ կախված դրա զարգացումից: Սակայն սա ոչ մի դեպքում չի նշանակում, որ իշխանությունները կարող են խուսափել վարչական պատշաճ կառավարման իրենց պարտականությունից (տես՝ կետ 41-44)՝ պարզապես կարգավորելով հավաքների ազատությունը վարչական կարգադրություններով: Ավելին՝ բանակցությունների և/կամ միջնորդության օգնությամբ դիմելը կարող է աջակցել՝ լուծելու հավաքների շուրջ ծագած վեճերը՝ հնարավորություն տալով իրավապահ մարմիններին և միջոցառման կազմակերպչին համաձայնության գալ անհրաժեշտ ցանկացած սահմանափակման շուրջ (տես՝ կետ 117 և 151):
82. Հաշվի առնելով, որ հաճախ կոնկրետ ուղերձը հասցեատերերին արդյունավետ հասցնելու համար գոյություն ունեն սահմանափակ թվով միջոցներ, ցանկացած սահմանափակման շրջանակ պետք է մանրամասնորեն սահմանվի: Այն իրավիճակներում, երբ սահմանափակումներ են կիրառվում, դրանք պետք է խստորեն համապատասխանեն համաչափության սկզբունքին և պետք է միշտ նպատակ ունենան նպաստել, որ հավաքներն անցկացվեն նպատակային լսարանի տեսանելիության և լսելիության գոտում:
83. **Հավաքների անցկացմանը նախորդող սահմանափակումների կիրառումը (նախնական սահմանափակումներ):** Հավաքների ազատության նկատմամբ կիրառվող նման սահմանափակումները կամ ամրագրված են օրենսդրությամբ, կամ նախքան միջոցառման անցկացման իրազեկված օրը կիրառվում են կարգավորիչ մարմնի կողմից: Նման սահմանափակումները պետք է հակիրճ ձևակերպ-

վեն՝ նպատակ ունենալով հստակություն ապահովել և՛ նրանց համար, ովքեր պետք է հետևեն դրանց (հավաքի կազմակերպիչներ և մասնակիցներ), և՛ նրանց, ում հանձնարարված է կիրառել այդ սահմանափակումները (առաջին հերթին՝ ոստիկանությանը): Ձեռնարկված քայլերը կարող են ընդունել ժամանակի, տեղի և անցկացման կարգի նկատմամբ կիրառվող սահմանափակումների կամ անցկացվող միջոցառման բացահայտ արգելման ձև: Սակայն կոնկրետ ժամին և կոնկրետ տեղում հավաքներն ինքնաբերաբար արգելող ընդհանուր օրենսդրական դրույթները պահանջում են շատ ավելի ծանրակշիռ հիմնավորում, քան առանձին հավաքների նկատմամբ կիրառվող սահմանափակումները⁸⁵: Հաշվի առնելով այն, որ հնարավոր չէ յուրաքանչյուր դեպքի համար կանխատեսել բոլոր մանրամասն հանգամանքները, օրենսդրության մեջ նման ընդհանուր դրույթների ներմուծումը և կիրառումը կարող են դառնալ անհամաչափ, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր է ապացուցել, որ գոյություն ունի նման սահմանափակման անհետաձգելի հասարակական պահանջ: Ինչպես սահմանել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «Կանխարգելիչ բնույթ ունեցող ընդհանուր մոտեցման կիրառումը հավաքների ազատությունը և արտահայտվելու ազատությունը ճնշելու նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է բռնության սպրդանք կամ ժողովրդավարական սկզբունքների մերժում (անկախ այն բանից, թե որքան ցնցող կամ անընդունելի են եղել որոշ կարծիքներ և արտահայտություններ իշխանությունների համար, և որքան անօրինական է եղել ներկայացվող պահանջը), վնասում է ժողովրդավարությանը և հաճախ այն դնում սպառնալիքի տակ»⁸⁶:

84. Հետևաբար, արգելումը պետք է կիրառվի որպես ամենածայրահեղ միջոց և միայն կարող է դիտարկվել, եթե կիրառված ավելի թույլ սահմանափակման միջոցառումները հնարավորություն չեն տվել իրականացնել այլոց պատշաճ շահերը երաշխավորելու՝ իշխանությունների հետապնդած նպատակը: Ավելին՝ հաշվի առնելով խաղաղ հավաքների անցկացման պաշտպանության համար համարժեք ռեսուրսներ տրամադրելու պետության դրական պարտականությունը՝ հավաքների արգելումը իրականում կարող է լինել պետության պոզիտիվ պարտականությունների չկատարում: Երբ պետական մարմինն ոչ օրինական արգելում է իրականացվող ակցիան, ծագում է պետության իրավական պատասխանատվության հարցը:
85. **Հավաքների ընթացքում կիրառվող սահմանափակումները:** Ոստիկանության դերը հավաքների ընթացքում հաճախ հանգում է որևէ նախնական սահմանափակման կիրառման ապահովմանը՝ կարգավորիչ մարմնի գրավոր հանձնարարականի հիման վրա: Սակայն այն դեպքում, երբ տեղում հնարավոր է իրավիճակի վատթարացում (օրինակ՝ մասնակիցները հնարավոր է սկսեն կիրառել կամ սադրել բռնություն), հնարավոր է՝ իշխանությունները ստիպված լինեն ձեռնարկել լրացուցիչ միջոցներ՝ այլ անձանց պատշաճ իրավունքների համարժեք երաշխավորումն ապահովելու նպատակով: Նման իրավիճակում նպատակահարմար է, որ քաղաքացիական իշխանության մյուս մարմինները (օրինակ՝ դատախազությունը)

օժտված լինեն հասարակական կարգի ուստիկանության գործողությունների նկատմամբ վերահսկողական ֆունկցիայով, իսկ ուստիկանությունը պետք է հաշվետու լինի որևէ անկախ մարմնի: Ինչպես նախնական սահմանափակման կիրառման պատճառները պետք է փաստարկվեն, այնպես էլ հավաքների ժամանակ գործադրված որևէ սահմանափակում պետք է հավասարապես խստորեն հիմնավորվի: Սույլ կասկածները բավարար չեն կարող լինել, իսկ հիմնավորումները պետք է լինեն էական և բավարար:

86. Հավաքից հետո կիրառվող դատաբանական և տուգանքները: Միջոցառումներից հետո պատժամիջոցների կիրառումը (օրինակ՝ դատական հետապնդումը) երբեմն կարող է ավելի տեղին լինել, քան նախքան հավաքը կամ հավաքի ընթացքում սահմանափակումների կիրառումը: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշմամբ աննշան բռնության հնարավորության հիմքով սահմանափակումների կիրառումը ավելի շատ դիտարկվում է անհամաչափ: Առանձին որևէ բռնության դրսևորման դեպքում պետք է կիրառվեն ոչ թե նախնական կալանքի միջոցառումներ, այլ ծերբակալություն և դատական հետապնդում արդեն հավաքից հետո⁹⁷: Այդ միջոցառումներն են դատական հետապնդումը (օրինակ՝ ոչ օրինական հավաքին մասնակցելու կամ հասարակական կարգի այլ խախտումների դեպքում) կամ այլ կարգապահական գործողություն: Պետք է նշել, սակայն, որ որոշ դեպքերում Մարդու իրավունքների կոմիտեն և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել են, որ հավաքներից հետո կիրառվող միջոցառումները անհամաչափ միջամտություն են հավաքների ազատության կամ արտահայտվելու ազատության իրավունքներին⁹⁸:

87. Հատկապես հավաքների ազատությանը վերաբերող օրենսդրությունը չպետք է պարունակի քրեական կամ վարչական պատասխանատվությանն առնչվող որևէ ընդհանուր դրույթ: Ընդհանուր դրույթները պետք է պատշաճորեն ամրագրված լինեն համապատասխան քրեական կամ վարչական օրենսդրության մեջ: Սակայն հավաքների ազատությանը վերաբերող օրենսդրության մեջ նպատակահարմար է ներառել որոշ իրավախախտումներ, ներառյալ.

- Հավաքի մասին պարտադիր իրազեկում ներկայացնելու կամ անցկացման թույլտվություն ստանալու պահանջի չկատարումը,
- Ոչ օրինական հավաքին մասնակցելը,
- Կազմակերպչի՝ սահմանված պարտավորությունների չկատարումը,
- Հավաքի ժամանակ արգելված առարկաների կամ նյութերի առկայությունը կամ
- Օրինական հավաքի խոչընդոտումը:

88. Բոլոր դրույթները, որոնք առաջացնում են քրեական կամ վարչական պատասխանատվություն, պետք է համապատասխանեն օրինականության սկզբունքներին (տե՛ս կետ 30-33): Ավելին՝ «հարգելի պատճառի» առկայության դեպքում կազմա-

կերպիչներին և մասնակիցներին պետք է տրվի պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորություն: Օրինակ՝ մասնակցելով ոչ օրինական հավաքներին՝ մասնակիցները չպետք է ենթարկվեն պատասխանատվության «ոչ օրինական հավաքներին մասնակցելու» մեղադրանքով, եթե նրանք նախօրոք տեղեկացված չեն եղել, որ հավաքը կրում էր ոչ օրինական բնույթ: Նմանապես՝ մասնակիցը չպետք է ենթարկվի պատասխանատվության այն ամենի համար, ինչ կատարվել է ոստիկանության աշխատակցի ցուցումով⁹⁹:

89. Առանձին մասնակիցներ, որոնք անձամբ չեն կատարել որևէ բռնի գործողություն, չեն կարող հետապնդվել զուտ ոչ խաղաղ հավաքին մասնակցելու հիմքով: Ինչպես ներկայացված է «*Ezilin-ն ընդդեմ Ֆրանսիայի*» գործում (1991 թ.), «ժողովրդավարական հասարակությունում և ոչ մի դեպքում չկա իրավունքների սահմանափակման անհրաժեշտություն, եթե տվյալ անձն իր իրավունքներն իրականացնելիս չի կատարել իրավախախտում»¹⁰⁰:
90. Հավաքի կազմակերպիչները չպետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց պարտականությունները չկատարելու համար, եթե նրանք գործադրել են ողջամիտ բոլոր ջանքերը պարտականությունները կատարելու ուղղությամբ: Ավելին՝ կազմակերպիչները չպետք է պատասխանատվություն կրեն մասնակիցների կամ երրորդ անձանց այն գործողությունների կամ ոչ օրինական այն վարքագծի համար, որի նպատակը մասնակիցները չեն ունեցել կամ չեն հանդիսացել դրանց անմիջական մասնակիցը: Միջոցառման կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելը կլինի բացահայտ անհամաչափ արձագանք, քանի որ դա կենթադրի, որ կազմակերպիչները պատասխանատվություն կկրեն այն անձանց (ներառյալ սաղորիչների) գործողությունների համար, որոնց մասին հնարավոր չի եղել ողջամիտ կանխատեսում անել:

4. Ընթացակարգային հարցեր

Նախնական իրազեկում

91. Որպես ընդունված գործելակերպ՝ կարգավորիչ մարմինը պահանջում է նախնական գրավոր իրազեկում՝ հավաք անցկացնելու վերաբերյալ: Այս պահանջը հիմնավորվում է պետության պոզիտիվ պարտականությամբ, որն ուղղված է ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աջակցելու համար հավաքների ազատությանը և պաշտպանելու հասարակական կարգը, հանրային անվտանգությունը, այլոց իրավունքներն ու ազատությունները: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի եզրակացությամբ՝ իրազեկում ներկայացնելը չնայած *դե ֆակտո* հավաքների ազատության սահմանափակում է, այն համահունչ է ԶԲԻՄԴ-ի հոդված 21-ով թուլատրված սահմանափակումներին¹⁰¹: Նմանապես Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը «*Յուրայի բնակիչների միավորում*» գործում (1991 թ.) եզրակացնում է, որ «այդպիսի ընթացակարգը համապատասխանում է հոդված 11(1)-ի պահանջներին միայն այն դեպքում, եթե այն նպաստում է նրան, որ իշխանությունները կարողանան ապահովել հավաքների խաղաղ բնույթը, սակայն այդ անելով նրանք չպետք է միջամտեն խաղաղ հավաքի անցկացմանը»¹⁰²:
92. Իրազեկման գործընթացը չպետք է լինի բարդ և բյուրոկրատական, քանի որ դա կվնասի հավաքների ազատությանը՝ վախեցնելով նրանց, ովքեր կցանկանային անցկացնել հավաք: Ավելին՝ առանձին ցուցարարներից չպետք է պահանջվի իշխանություններին ներկայացնել նախնական իրազեկում՝ ցույց կազմակերպելու իրենց մտադրության մասին: Երբ միայնակ ցուցարարը միանում է մեկ այլ ցուցարարի կամ մի քանիսին, ապա միջոցառումը դիտվում է որպես ինքնաբուխ հավաք (տես կետ 97-98):

Հոդված 6, Հավաքների մասին Լեհաստանի օրենք (1990 թ.)

1. Հավաքների մասին, որոնք կազմակերպվում են բացօթյա՝ չսահմանված թվով անձանց համար մատչելի վայրերում (այսուհետ՝ «հանրահավաքներ»), պետք է տեղեկացնել նախօրոք տեղական իշխանությանը, որը հավաքների անցկացման տեղի առումով օժտված է *ratione loci* լիազորություններով:
2. Եթե հավաքը նախատեսված է անցկացնել դիվանագիտական ներկայացուցչության կամ առաքելության, հյուպատոսական գրասենյակների, դիվանագիտական արտոնություններով և իմունիտետով օժտված հատուկ առաքելությունների կամ միջազգային կազմակերպությունների գրասենյակների հարևանությամբ, ապա տեղական իշխանությունները պարտավոր են իրազեկել այդ պահին ոստիկանության պատասխանատու հրամանատարին և Արտաքին գործերի նախարարությանը:

3. Տեղական խորհուրդը կարող է սահմանել այն վայրերի ցանկը, որտեղ հավաքների անցկացման համար իրազեկում չի պահանջվում:

93. Ներկայացված իրազեկման պատասխանի ստացման ժամկետը չպետք է լինի անհարկի երկարաձգված (ոչ ավելի, քան մի քանի օր): Սակայն որոշակի ողջամիտ ժամանակ է անհրաժեշտ մինչև իրազեկման մեջ նշված հավաքի անցկացման օրը, որպեսզի իշխանության պատասխանատու մարմինները նախապատրաստվեն միջոցառմանը (մոբիլիզացնեն ոստիկանության աշխատակիցներին, սարքավորումներ և այլն), կարգավորիչ մարմինը արագ պաշտոնական պատասխան ներկայացնի իրազեկմանը, իսկ կազմակերպիչները հնարավորություն ունենան բողոքարկման շտապ հայց ներկայացնել դատարան, եթե վիճարկվում է կիրառված որևէ սահմանափակման օրինականությունը:
94. Իրազեկումը ստացած պաշտոնյան պետք է ներկայացնի ստացական՝ հստակորեն հաստատելով, որ հավաքի կազմակերպիչները կատարել են իրազեկման մեջ նշված համապատասխան բոլոր պահանջները: Իրազեկման մասին անմիջապես պետք է տեղեկացվի նաև կարգավորիչ գործընթացի մեջ ներգրավված պետական բոլոր մարմիններին, ներառյալ ոստիկանության համապատասխան մարմիններին:

Իրազեկում, այլ ոչ թույլտվության խնդրանք

95. Նախնական իրազեկմանը վերաբերող իրավական դրույթները պետք է պահանջեն ոչ թե թույլտվության խնդրանք, այլ իրազեկում հավաք անցկացնելու մտադրության մասին: Չնայած շատ իրավական համակարգերում թույլտվության պահանջն օրինական է՝ այն լիովին չի համապատասխանում հավաքների ազատության հիմնարար արժեքին և այն սկզբունքին, ըստ որի՝ օրենքով չկարգավորվող ամեն ինչ համարվում է օրինական: Այն երկրներում, որտեղ պահանջվում է թույլտվություն, առաջարկվում է փոփոխել ներպետական օրենսդրությունն այնպես, որ այն պահանջի միայն իրազեկում: Կարևոր է նշել, որ մի շարք իրավական համակարգերում թույլտվության ընթացակարգերը հայտարարվել են հակասահմանադրական¹⁰³: Թույլտվության ցանկացած համակարգ պետք է հստակորեն շարադրի օրենքում թույլտվություն տալու չափանիշները: Ի լրումն դրան՝ չափանիշները պետք է սահմանափակվեն միայն ժամանակի, տեղի և անցկացման կարգի նկատառումներով և չպետք է վերաբերեն հավաքի գաղափարական բովանդակությանը:

Բաժին 5, Նիդեռլանդների Հանրահավաքների մասին օրենքը (1988 թ.)

3. Պայմանը, սահմանափակումը կամ արգելումը չեն կարող վերաբերել դավանվող կրոնին կամ համոզմունքին, արտահայտվող կարծիքներին կամ գաղափարներին:

96. Եթե իշխանություններն արագ չեն արձագանքում իրազեկմանը, հավաքի կազմակերպիչները, առանց որևէ սահմանափակման, կարող են շարունակել իրենց գործընթացը՝ իրազեկման մեջ նշված պայմանների համաձայն: Նույնիսկ այն երկրներում, որտեղ դեռևս իրազեկման ընթացակարգի փոխարեն պահանջվում է թույլտվության ընթացակարգ, թույլտվությունը պետք է ենթադրել շնորհված, եթե ողջամիտ ժամկետում որևէ պատասխան չի ներկայացվում:
97. **Ինքնաբուխ հավաքներ:** Որոշ դեպքի, միջադեպի, այլ հավաքին կամ ելույթին խաղաղ և հրատապ (հանպատրաստից) արձագանքելը հավաքների ազատության առանցքային տարրերից է: Ինքնաբուխ միջոցառումները պետք է համարվեն առողջ ժողովրդավարության ոչ թե հազվագյուտ, այլ սպասելի դրսևորումներ: Որպես այդպիսին՝ իշխանությունները պետք է պաշտպանեն և ապահովեն ինքնաբուխ ցանկացած հավաքի անցկացումը, քանի դեռ այն կրում է խաղաղ բնույթ¹⁰⁴:
98. Ինքնաբուխ հավաքները հատուկ ուշադրության են արժանի նախնական իրազեկման պահանջի առումով: Օրենքը պետք է հստակորեն սահմանի բացառություն նախնական իրազեկման տարբերակից այն դեպքերում, երբ նախնական իրազեկում ներկայացնելը գործնականում անհնար է: Օրենքը նաև պետք է ապահովի ոչ օրինական հավաքի մասնակիցների պաշտպանությունը, եթե նրանք իրազեկ չեն միջոցառման ոչ օրինական բնույթի մասին: Ավելին՝ եթե կան ողջամիտ հիմքեր՝ չկատարելու նախնական իրազեկում ներկայացնելու պահանջը, ապա որևէ մեկը չպետք է պատասխանատվության ենթարկվի կամ որևէ պատժամիջոց չպետք է կիրառվի:
99. **Այլ բացառություններ նախնական իրազեկման դահանգից:** Յուրաքանչյուր երկրի օրենսդիր մարմին պետք է ինքնուրույն որոշի, թե որքանով է անհրաժեշտ նախատեսել ինչ-որ հատուկ բացառություններ նախնական իրազեկում ներկայացնելու գործընթացից: Որոշ իրավական համակարգեր, օրինակ, չեն պարտադրում իրազեկում ներկայացնելու պահանջ փոքրաթիվ մասնակիցներով հավաքներ անցկացնելիս (ստորև տե՛ս հատված Չայաստանի օրենսդրությունից): Բացառությունները, սակայն, չպետք է լինեն խտրական և պետք է ուղղված լինեն ոչ թե կազմակերպիչներին, այլ հավաքի բնույթին:

Հոդված 10(2), «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Չայաստանի Հանրապետության օրենքը (2004 թ.)

Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրավունք ունեն առանց լիազոր մարմնին իրազեկման անցկացնելու այլ միջոցառումներ և ոչ զանգվածային հրապարակային միջոցառումներ՝ չխախտելով հասարակական կարգը:

100. **Չամաժամանակյա միջոցառումներ:** Բոլոր անձինք և խմբերը իրենց տեսակետները ներկայացնելու նպատակով ունեն հասարակական վայրերում գտնվելու հավասար իրավունք: Այսպիսով՝ անձինք իրավունք ունեն կազմակերպել հակընդդեմ հավաքներ՝ արտահայտելու իրենց անհամաձայնությունը այլ հանրահավաքում արտահայտված տեսակետներին¹⁰⁵: Նման դեպքերում երկու հավաքների տեղի և ժամի համընկնումն ավելի շուտ կդառնա մյուս հավաքի հասցեին ուղղված գաղափարական ուղերձի կարևոր տարր: Միաժամանակ երկու՝ իրար հետ կապված հավաքներ անցկացնելիս պետք է ապահովվի, որ դրանք տեղի ունենան իրենց նպատակային զանգվածի տեսանելիության և լսելիության գոտում՝ պայմանով, որ այն ֆիզիկական խոչընդոտ չստեղծի մյուս հավաքի համար:
101. Ինչպես հստակորեն նշվում է ՄԻԵԿ-ի Plattform«*Ärzte für das Leben*»-ն *ընդդեմ Ավստրիայի*» գործում (1998 թ.), «հակընդդեմ հավաքը կազմակերպելու իրավունքը չի կարող տարածվել այն գործողությունների վրա, որոնք ուղղված են խոչընդոտելու ցույց կազմակերպելու իրավունքը»¹⁰⁶: Այսպիսով, քանի որ յուրաքանչյուր անձ և խումբ ունի առանց մյուսների միջամտության իր տեսակետներն արտահայտելու իրավունք, հակընդդեմ ցույցի մասնակիցները չեն կարող խոչընդոտել այն մարդկանց գործողությունները, որոնք չեն կիսում իրենց տեսակետները: Երբ կազմակերպվում են հակընդդեմ հավաքներ, շեշտը պետք է դրվի հիմնական միջոցառման խոչընդոտումը կանխելու պետության պարտավորության վրա: Ավելին՝ ակնհայտ հարց է ծագում, երբ հակընդդեմ հավաքի կազմակերպիչը հատուկ միտում է դրսևորում կանխելու մյուս հավաքի անցկացումը, այսինքն՝ գործնականում խախտել այլ անձանց իրավունքները: Նման դեպքերում գործում են ԶԲԻՄԴ-ի հոդված 5-ի և ՄԻԵԿ-ի հոդված 17-ի դրույթները, որոնց համաձայն՝ կազմակերպված հակընդդեմ հավաքը չի օգտվի խաղաղ հավաքների իրավունքի համար նախատեսված պաշտպանության հնարավորությունից:
102. Երբ ներկայացվում են իրազեկումներ նույն վայրում և նույն ժամին երկու և ավելի հավաք անցկացնելու մասին, պետք է գործադրել առավելագույն ջանքեր յուրաքանչյուր հավաքի անցկացման համար: Նույն վայրում և նույն ժամին հասարակական միջոցառումների միաժամանակ անցկացման արգելումը ավելի շատ կդիտարկվի որպես ոչ համաչափ արձագանք: Որոշ իրավական համակարգերում գործում է «հերթի» կանոնը: Այդ կանոնը թույլատրելի է այնքան ժամանակ, քանի դեռ խտրություն չի դրվում երկու խմբերի միջև, և կազմակերպիչների հավանությունը այլընտրանքային տեղ և/կամ ժամանակ է տրամադրվում այլ հավաքների անցկացման համար: Պետական մարմինները նույնիսկ կարող են վիճակահանությամբ որոշել, թե որ հավաքն է անցկացվելու իրազեկման մեջ նշված տեղում և ժամին (տե՛ս ստորև օրինակը Մալթայի օրենսդրությունից):

Հողված 5(3), Մալթայի Հանրահավաքների մասին կանոնակարգը (1931 թ.)

Երբ երկուսից ավելի անձ՝ հանդես գալով և՛ որպես անհատներ, և՛ որևէ միավորման անունից, միաժամանակ իրազեկում են ներկայացնում միևնույն տեղում և միևնույն ժամին հավաք անցկացնելու համար, նախապատվությունը պետք է տրվի այն անձին, ում անունը անցկացված վիճակահանության արդյունքում դուրս կբերվի ոստիկանության կոմիսարի կամ նրան փոխարինող ոստիկանության որևէ այլ պաշտոնյայի կողմից:

Որոշումների կայացման և դրանց հիմնավորվածության սուղաման գործընթացը

103. Կարգավորիչ մարմինը պետք է հստակ հրապարակային բացատրություն ներկայացնի որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ: Այն պետք է անաչառ և օբյեկտիվ գնահատի ամբողջ տեղեկատվությունը՝ որոշելու, թե արդյոք հավանակա՞ն է, որ իրազեկված հավաքի կազմակերպիչներն ու մասնակիցները անցկացնեն խաղաղ միջոցառում, և համոզվել, թե միջոցառումն ինչ հնարավոր ազդեցություն կունենա հավաքին չմասնակցող այլ անձանց իրավունքների և ազատությունների վրա:
104. Կարգավորիչ մարմինը նաև պետք է ապահովի, որ միջոցառման կազմակերպիչը իրազեկ պահվի հավաքի անցկացման վերաբերյալ ծագած ցանկացած մտահոգության մասին, և վերջինիս հնարավորություն տրվի պատասխանելու իրեն ներկայացված մտահոգությունների հետ կապված հարցերին: Սա հատկապես կարևոր է, եթե նման հարցերը հետագայում կարող են օգտագործվել որպես միջոցառումների նկատմամբ սահմանափակումներ կիրառելու հիմք: Կազմակերպիչին իրազեկ պահելով՝ նրա համար հնարավորություն է ապահովվում կարգավորել ծագած խնդիրները՝ դրանով նվազեցնելով հասարակական կարգի հնարավոր խախտումները և նպաստելով կազմակերպիչների ու իշխանությունների միջև ոչ թե առճակատման, այլ համագործակցային հարաբերությունների հաստատմանը:
105. Օրենքը պետք է լինի բավականաչափ ճկուն, որպեսզի կազմակերպիչներին և կարգավորիչ մարմնին հնարավորություն տա ցանկացած ջանք գործադրել՝ հավաքի անցկացման ժամի, տեղի և կարգի վերաբերյալ փոխադարձ համաձայնության հասնելու համար: Նման բանակցությունները ծառայում են որպես կանխարգելիչ միջոց և օգնում խուսափելու վիճահարույց և անհարկի սահմանափակումներ կիրառելուց:
106. Կազմակերպիչներին պետք է շտապ և գրավոր տեղեկացվի հավաքի անցկացման նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակման մասին՝ հակիրճ բացատրե-

լով յուրաքանչյուր սահմանափակման պատճառը (հաշվի առնելով, որ այդ բացատրությունը պետք է ամրագրված լինի մարդու իրավունքների մասին օրենսդրության և դրանց վերաբերյալ համապատասխան տարբեր դատական մարմինների կողմից կատարված մեկնաբանությունների մեջ): Կազմակերպիչները պետք է տեղեկացվեն նման որոշումներին ողջամիտ ժամանակահատվածում (միջոցառման անցկացման օրվան նախորդող բավարար ժամանակահատվածի ընթացքում), ինչը հնարավորություն կտա կազմակերպիչներին բողոքարկել որոշումը անկախ դատարանում՝ նախքան իրազեկման մեջ նշված միջոցառման անցկացման օրը: Եթե, օրինակ, պահանջվում է նախնական իրազեկումը ներկայացնել հավաքի անցկացման ամսաթվից 5 օր առաջ, ապա կարգավորիչ մարմինը պետք է հրապարակի իր որոշումը միջոցառման անցկացման համար նախատեսված ամսաթվից առնվազն 3 օր առաջ:

107. Կարգավորիչ մարմինը պետք է նաև հրապարակի իր որոշումները, որպեսզի հասարակության կյանքում տեղի ունեցող իրադարձությունների մասին հավաստի տեղեկատվությունը մատչելի լինի հասարակայնության համար: Դա կարելի է անել, օրինակ, տեղադրելով որոշումները համապատասխան կայքում¹⁰⁷:
108. Եթե հավաքի անցկացման նկատմամբ կիրառվել են սահմանափակումներ, ապա կազմակերպիչն պետք է հնարավորություն ընձեռվի օգտվելու իրավական պաշտպանության արդյունավետ ռեսուրսներից՝ այդ որոշումը և՛ վարչական, և՛ դատական կարգով վերանայելու ճանապարհով: Ընդունված որոշման օրինականությունը քննարկող մարմնի համար պետք է մատչելի լինեն այն փաստերը, որոնց հիման վրա կարգավորիչ մարմինն ընդունել է նախնական որոշումը (ներառյալ, օրինակ՝ ոստիկանության համապատասխան զեկույցները): Միայն այդ դեպքում վերոնշյալ մարմինը կարող է գնահատել կիրառված սահմանափակումների համաչափությունը: Կիրառված սահմանափակումների հիմնավորվածության ապացուցման բեռը, հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները, պետք է դրվի կարգավորիչ մարմնի վրա:
109. Ընդունված որոշման հիմնավորվածության ստուգման արդյունավետ ընթացակարգի առկայությունը կարող է նպաստել ոչ միայն դատական մարմինների ծանրաբեռնվածության նվազեցմանը, այլ նաև պետական մարմինների և հասարակության միջև ավելի կառուցողական հարաբերությունների ստեղծմանը: Որոշումների հիմնավորվածության ստուգման վարչական ցանկացած ընթացակարգ պետք է արագ լինի, որպեսզի պաշտպանության վարչական մեխանիզմների սպառման դեպքում մինչև իրազեկման մեջ նշված հավաքի անցկացման օրը, հնարավորություն մնա դիմելու պաշտպանության դատական մեխանիզմներին:
110. Հավաքի կազմակերպիչներին պետք է հնարավորություն ընձեռվի բողոքարկելու կարգավորիչ մարմնի որոշումը արդարադատության անկախ մարմնում կամ դատարանում: Նման վերաքննման անցկացումը պետք է արվի *de novo* կարգով (կր-

կին), և հնարավորություն պետք է նախատեսվի վիճահարույց որոշումը ուժը կորցրած ճանաչելու և նոր որոշում կայացնելու նպատակով այն հետ վերադարձնելու համար: Նման ցանկացած վերանայում պետք է կատարվի շտապ, որպեսզի գործը լավի դատարանում, և դատարանի վճիռը հրապարակվի՝ նախքան հավաքի անցկացման համար նախատեսված օրը, որպեսզի հնարավոր լինի անցկացնել հավաքը, եթե դատարանը չեղյալ է համարում սահմանափակումները: Այս գործընթացն արագացնելու հնարավոր ճանապարհներից մեկը դատարանների կողմից հավաքների սահմանափակումների դեմ ներկայացված բողոքարկումների քննարկումն է առաջնահերթ կարգով՝ դրանով իսկ ապահովելով դատական քննության ավարտումը մինչև հավաքի անցկացման համար նախատեսված օրը:

Հոդված 14(2), «Հավաքների և ցույցերի մասին» Վրաստանի օրենքը (2004 թ.)

Հավաքների և ցույցերի անցկացումն արգելող տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը կարող է բողոքարկվել դատարանում: Դատարանը պետք է ընդունի վճիռ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 7, «Քաղաքացիների՝ առանց զենքի, խաղաղ հավաքվելու և հանրահավաքներ ու ցույցեր ազատ անցկացնելու իրավունքի մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքը (2002 թ.)

Տեղերում պետական կառույցների կամ տեղական ինքնակառավարման մարմինների ... որոշումները կարող են բողոքարկվել դատարանում: Դատարանը պետք է 24 ժամվա ընթացքում վճիռ ընդունի, եթե հավաքի համար նախատեսված օրվան մնացել է 48 ժամից պակաս ժամանակ:

111. Որպես ընդունված լավագույն փորձ՝ կարգավորիչ մարմինը համապատասխան վերստուգիչ մարմնին մարդու իրավունքների ազգային ինստիտուտին, օմբուդսմանին կամ խորհրդարանին¹⁰⁸, պետք է ներկայացնի գործունեության տարեկան հաշվետվություն (ներառյալ պատշաճ վիճակագրություն, օրինակ՝ իրազեկված հավաքների և կիրառված սահմանափակումների թվի վերաբերյալ):

ՄԱՍ II

Խաղաղ հավաքների ազատության օրենսդրական կարգավորումը

Ներածություն

112. Սույն Ուղեցույցի 1-ին մասն անդրադարձավ հավաքների ազատության պարամետրերին և մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին համապատասխան օրենքների նախագծմանը: Նախորդ բաժիններում քննարկվեցին, թե ինչ իրավական հիմքերով կարող են սահմանափակումներ կիրառվել, և որոնք են այն ընթացակարգերը, որոնցով ապահովվում է հավաքների ազատության գերակայությունը: Սակայն հավաքների ազատությանը վերաբերող օրենսդրության կիրառումը իր հետ նոր մարտահրավերներ է բերում: Եթե նպատակ է դրված, որ օրենքները չմնան թղթի վրա, և իրավունքներն ավելի գործնական ու արդյունավետ լինեն, քան տեսական ու ցուցադրական, ապա իրավապահ մարմինների կողմից հավաքների ազատության օրենքների կիրառումը ևս պետք է ճշտորեն համապատասխանի որոշակի ստանդարտների: Այդ ստանդարտները կքննարկվեն այս գլխում:

113. Սոցիալ-տնտեսական, քաղաքական և ինստիտուցիոնալ համատեքստը, որում տեղի են ունենում հավաքները, ազդում է օրենքի կիրառման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վրա: Որոշակի սոցիալ-տնտեսական կամ քաղաքական գործոններն ինքնին հավաքների ժամանակ բռնության կիրառման պատճառ չեն կարող դառնալ: Բռնությունը հաճախ կարող է կանխվել իրավապահ մարմինների հնուտ միջամտության շնորհիվ: Հավաքների ազատությանն առնչվող օրենսդրության կիրառմանն ուղղված քայլերը պետք է ո՛չ վտանգեն մասնակիցների կամ երրորդ կողմի իրավունքներն ու ազատությունները, ո՛չ էլ անհարկի առճակատման գնալով ավելի բարդացնեն առանց այն էլ լարված իրավիճակը: Փոխարենը մնան

միջամտությունները պետք է նպատակ ունենան նվազագույնի հասցնել պոտենցիալ վնասը: Գլուխ 2-ում սահմանված ուղենիշ-սկզբունքները (ներառյալ լավ վարչարարությունն ու խտրականություն չկիրառելը) առանձնակի կարևորություն ունեն իրականացման փուլում:

114. Ավելին՝ մասնակից պետություններում ոստիկանությունն ու դատական համակարգը վճռական դերակատարում ունեն բռնության կանխարգելման և իրավախախտների բացահայտման ու պատասխանատվության ենթարկելու հարցում: Սույն Ուղեցույցի մշակման շրջանակներում անցկացված կլոր սեղանների ընթացքում հաճախ ընդգծվում էր, որ անհրաժեշտ է ապահովել ոստիկանության և դատական համակարգի անկախությունը կուսակցական ազդեցությունից կամ, դատական համակարգի դեպքում՝ գործադիր իշխանությունից: Նախկինում որոշ երկրներում ոստիկանությունը չի միջամտել՝ պաշտպանելու համար խաղաղ հավաքները: Պետություններին խորհուրդ է տրվում միջոցներ ձեռնարկել (ներառյալ քաղաքականության մշակում և անձնակազմի նպատակային ընտրություն) բարձրացնելու համար վստահությունը ոստիկանության ու դատական համակարգի նկատմամբ¹⁰⁹:

5. Իրավապահ մարմինների աշխատակիցների իրավունքներն ու դատականությունները

115. Պետության պարտավորությունն է համապատասխան խելամիտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի օրինական ցույցերը հնարավոր լինի անցկացնել առանց դրանց մասնակիցներին ֆիզիկական բռնության ենթարկելու մտավախության (տե՛ս կետ 26-29)¹¹⁰: Իրավապահ մարմինների դերն ավելին է, քան հիմնարար իրավունքների գոյության ճանաչումը և ներառում է այդ իրավունքների գործում ապահովումը¹¹¹: Մասնավորապես, պետությունը պարտավորություն ունի պաշտպանել մարդկանց կյանքը (հոդված 2, ՄԻԵԿ)¹¹², և հոդված 2-ի խախտումից բողոքող դիմումատուն ընդամենը պետք է ցույց տա, որ իշխանություններն ամեն ինչ չեն արել, ինչ նրանցից ակնկալվում էր տվյալ իրադրության մեջ ռիսկից խուսափելու համար¹¹³:
116. Հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրության կիրառման ժամանակ պետք է նտահոգվել նաև ոստիկանության աշխատակիցների իրավունքների, առողջության և անվտանգության մասին: Ավելին՝ անհրաժեշտ է նշել, որ աշխատանքի բնույթից ելնելով՝ ոստիկանները կարող են հայտնվել դժվարին, արագորեն փոփոխվող, վտանգավոր իրավիճակներում, երբ նրանցից պահանջվում է վայրկենական որոշումներ կայացնել: Արդյոք դա կգնահատվի որպես խելամի՞տ, թե՞՞ ռեակցիոն գործողություն՝ կախված կլինի բոլոր հանգամանքների անկողմնակալ գնահատումից: Պաշտպանության առանձին տեսակները, ինչպես, օրինակ՝ ինքնապաշտպանությունը, պետք է հստակ որակավորում ունենան օրենքներում (օրինակ՝ խելամտության թեստ և պահանջ, որ հարձակումը ռեալ ու անխուսափելի է եղել և չի եղել ավելի խաղաղ արձագանքման հնարավորություն):

Ուսուցում

117. Իշխանությունները պետք է ապահովեն, որ իրավապահ մարմինների աշխատակիցները ստանան համապատասխան ուսուցում հանրահավաքներում ծառայություն իրականացնելու համար: Ուսուցումը իրավապահ մարմիններին պետք է զինի գիտելիքներով, որպեսզի նրանց գործողությունները թույլ չտան բռնության էսկալացիա և նվազագույնի հասցնեն բախումները, ինչպես նաև պետք է ներառել այնպիսի «փափուկ» հմտություններ, ինչպես, օրինակ՝ բանակցությունն ու միջնորդությունն են: Ուսուցումը պետք է ներառի նաև մարդու իրավունքների որոշ հարցեր¹¹⁴ և պետք է անդրադառնա ծառայության վերահսկողության ու պլանավորման հարցերին՝ շեշտադրելով ուժային միջոցներին ապավինելը հնարավոր նվազագույնի հասցնելու հրամայականը¹¹⁵:
118. ՄԱԿ-ի Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքականոցները, ի թիվս մարդու իրավունքների այլ միջազգային փաստաթղթերի¹¹⁶, պետք է կազմեն իրա-

վապահ մարմինների ուսուցման առանցքը: Ազգային օրենսդրությունը ևս պետք է ստանդարտներ սահմանի, որոնք ուղեցույց կդառնան ուստիկանության գործողությունների համար, և այդ դրույթները պետք է ուսումնասիրվեն մեծ միջոցառումների պարագայում՝ պլանավորման համար: «Բազմազանության իմացության» մոտեցումը պետք է ինտեգրված լինի իրավապահ մարմինների ուսուցման, քաղաքականության և պրակտիկայի մեջ:

Օգտակար ուսումնական ձեռնարկի օրինակ է «Խաղաղությունը պահպանելու ուղեցույցը», որը կազմվել է Միացյալ Թագավորության Ոստիկանապետների ազգային ընկերակցության կողմից¹¹⁷:

119. Հանրային կարգուկանոնի քաղաքականության ուսումնական ծրագրերը պետք է պարբերաբար վերանայվեն՝ ներառելու դասերը (օրինակ՝ նոր տեխնոլոգիաների ներմուծումը, հետիրադարձային վերլուծությունները) և պարբերաբար պետք է «գիտելիքների թարմացման» դասընթացներ նախատեսեն իրավապահ մարմինների համար: Այս ստանդարտները պետք է որքան հնարավոր է լայնորեն տարածվեն, և դրանց կիրառումը պետք է վերահսկվի անկախ վերակարգադրիչ մարմնի կողմից, որը պարբերաբար հաշվետվություններ կիրապարակի, օժտված կլինի հետաքննական լիազորություններով և իրավունք կունենա հարցաքննելու վկաներին ու պահանջելու անհրաժեշտ փաստաթղթեր:

Հասարակական կարգի դահողանությունը. դաժան գործելակերպի ընդհանուր սկզբունքները

120. **Պեժ է աղահովվի բոլոր կողմերի ֆիզիկական անվսանգությունը:** Այս դրույթն ընդգծում է խաղաղ հավաքների կազմակերպման և վարման մեջ ներգրավված բոլոր կողմերի փոխադարձ պատասխանատվությունը և պահանջում է, որ հավաքների ժամանակ կառուցվածքների միջև հաղորդակցության միջոցներ հաստատվեն:
121. **Պեժ է հսակորեն սահմանվի ուսիկանության գործողությունների հրամանաժարական կառուցվածքը:** Հրամանատարական կառուցվածքը հնարավորություն է տալիս պատշաճ ձևով համակարգել աշխատանքը ոստիկանների, ինչպես նաև ոստիկանների ու հավաքի կազմակերպիչների միջև: Նման հրամանատարական կառուցվածք ստեղծելիս պետք է առաջնորդվել ոչ թե ոստիկանության աշխատակիցների աստիճանով, այլ այն դերով, որ նրանց վերապահված է: Պետք է ստեղծել այնպիսի հրամանատարական կառուցվածք, որը չի վտանգի օպերատիվ ճկունությունը¹¹⁸:
122. **Անհրաժեշտ է աղահովել միջգերատեսչական հաղորդակցությունը:** Հրամայական պահանջ է իրավապահ մարմինների և հանրային անվտանգության այլ

ծառայությունների (օրինակ՝ հրշեջ, շտապ օգնություն) միմյանց հետ համագործակցությունը և կրիտիկական իրավիճակներում տվյալների փոխանակումը: Ինչպես նշված է գլուխ 6-ում, հավաքների կազմակերպիչները պետք է անեն իրենցից կախված ամեն ինչ՝ աջակցելու այս մարմիններին արձագանքելու արտակարգ իրավիճակներին կամ քրեածին արարքներին:

123. **Ոստիկանության աշխատակիցներին ղեխք է հնարավոր լինի հեռուրեն և անհատապես առանձնացնել:** Համազգեստավոր ոստիկանները պետք է կրեն կամ ցուցադրեն անհատական նշան (ինչպես, օրինակ՝ անվանակ կամ անհատական համար) իրենց համազգեստի և (կամ) գլխարկի վրա, որը չպետք է հանվի կամ ծածկվի այնպես, որ հավաքի ընթացքում մարդիկ չկարողանան այն կարդալ:
124. **Իրավադատի մարմինները ղեխք է սարքերակեն հավաքի մասնակիցներին և այն անձանց, ովքեր չեն մասնակցում հավաքին:** Հանրահավաքների կարգի պահպանության ժամանակ ոստիկանները պետք է ուշադիր լինեն այն անձանց նկատմամբ, ովքեր գտնվում են մոտակայքում (օրինակ՝ անցորդներ), սակայն չեն մասնակցում հավաքին¹¹⁹:
125. **Իրավադատի մարմինները ղեխք է զանազանն խաղաղ տրամադրված մասնակիցներին այն անձանցից, որոնք բռնի գործողություններ են կատարում:** Ոչ բռնության երբեմն տեղի ունեցող առանձին դեպքերը, ոչ էլ ցույցի ընթացքում որոշ մասնակիցների բռնարարքները ինքնին չեն կարող պատճառ հանդիսանալ հավաքի խաղաղ մասնակիցների նկատմամբ սահմանափակումներ կիրառելու համար¹²⁰: Հետևաբար, մասնակիցներին ձերբակալելու կամ (ծայրահեղ դեպքում) հավաքը ցրելու ժամանակ իրավապահ մարմինները չպետք է ամբոխին վերաբերվեն որպես միատարր զանգվածի (տես կետ 137-140):
126. **Անհրաժեշտ է սահմանել մասնակիցներին կանգնեցնելու, խուզարկության, բերման ենթարկելու և ձերբակալության կարգը:** Անչափ կարևոր է, որ իշխանությունները մշակեն հավաքների մասնակիցներին օրենքի սահմաններում կանգնեցնելու, խուզարկելու կամ կալանավորելու հստակ կարգ: Այդ փաստաթղթերը պետք է սահմանեն, թե երբ են նման միջոցները համարժեք և երբ՝ ոչ, ինչպես պետք է դրանք իրականացնել և ինչպես պետք է մարդկանց հետ վարվել ձերբակալությունից հետո: Կարգը մշակելիս պետք է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 5-ի և ԶԲԻՄԴ-ի հոդված 9-ի դրույթները, որոնք երաշխավորում են ազատության իրավունքը: Թեև անհրաժեշտ է խուսափել զանգվածային ձերբակալություններից, սակայն հաճախ լինում են դեպքեր, երբ բազմաթիվ ձերբակալությունները կարող են տեղին լինել: Սակայն մասնակիցների մեծ մասը չպետք է գրկվի ազատությունից միայն այն պատճառով, որ ոստիկանությունն անհատական ձերբակալություններ իրականացնելու համար չունի բավարար միջոցներ: Համարժեք միջոցների առկայությունը հավաքների ազատությունը պաշտպանելու մասնակից պետությունների պարտավորությունների մի մասն է:

Բաժին 108, ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխությամբ երաշխավորված իրավունքների ու ուսիկանության գործունեության նորմերի մասին օրենք (2004 թ.), Կոլումբիայի օկրուգ, Միացյալ Նահանգներ

Ուսիկանական արգելափակոցների կիրառումը

Արգելվում է արտակարգ դրության գոտի սահմանել՝ կիրառելով ուսիկանական արգելափակոցները շրջափակելու կամ զգալիորեն շրջափակելու ցույցը, հանրահավաքը, շքերթը, երթը, պիկետը կամ այլ նմանատիպ հավաքը (կամ դրանց մի մասը), որոնք անցկացվում են մարդկանց քաղաքական, սոցիալական կամ կրոնական հայացքների արտահայտման նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է հավանական պատճառ ենթադրելու, որ այդ տարածքում կամ գոտում գտնվող անձանց զգալի մասն ոչ օրինական արարքներ է գործել (բացի այն դեպքերից, երբ նրանք չունեն հավաքի անցկացման լիազորություն), և ուսիկանությունն ի վիճակի է բացահայտել այդ անձանց և որոշել է ձերբակալել:

Այս բաժինը չի արգելում ուսիկանությանը արգելափակոցներ կիրառել շրջափակելու համար հավաքը՝ ելնելով ցուցարարների անվտանգությունից:

127. Հավաքների ժամանակ կիրառվող սահմանափակումները կարող են խախտել մարդկանց ազատության¹²¹ և ազատ տեղաշարժվելու իրավունքները¹²²: Մարդկանց չի կարելի կանգնեցնել և խուզարկել, եթե ուսիկանությունը չունի հիմնավոր կասկածներ, որ մարդիկ հանցանք են գործել, գործում են կամ պատրաստվում են գործել: Ձերբակալություն չի կարելի կատարել միայն մարդկանց հավաքից հեռացնելու կամ նրանց մասնակցությունը կանխելու նպատակով: Հավաքների ժամանակ կատարվող ձերբակալությունները պետք է սահմանափակել՝ կիրառելով միայն այն անձանց նկատմամբ, որոնց վարքագիծը միանշանակ և անխուսափելիորեն բռնության վտանգ է ներկայացնում:
128. Հասարակական կարգի պահպանության պլանավորումը պատկան մարմինների կողմից պետք է համարժեքորեն ապահովի առաջին օգնության և անհրաժեշտության (ջուր, սնունդ) պարագաների առկայությունը, իրավաբանների հետ խորհրդակցելու հնարավորությունը, կին և տղամարդ, չափահաս և անչափահաս ձերբակալվածների առանձնացումը: Անչափահասները պետք է հնարավորություն ունենան հաղորդակցվելու ծնողի կամ օրենքով սահմանված խնամակալի հետ: Ձերբակալվածների հետ չի կարելի վատ վարվել նրանց անազատության մեջ գտնվելու ժամանակ¹²³: Այն դեպքերում, երբ մեկուսարանները հարմարեցված չեն մեծ թվով անձանց պահելու համար, ձերբակալված անձինք պետք է ազատ արձակվեն, եթե նրանց ազատ արձակումով չի վտանգվում հանրային անվտանգությունը: Պետք է սահմանվեն ընթացակարգեր՝ ձերբակալության տևողությունը նվազագույնի հասցնելու համար:

129. **Լուսանկարահանումներն ու սեսագրությունները (ոստիկանության և մասնակիցների կողմից կասարված) չդեֆ է արգելվեն, սակայն սվյալների դահանունը կարող է վսանգել անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:** Հանրահավաքների ժամանակ ոստիկանությանը թույլատրվում է լուսանկարել կամ տեսագրել մասնակիցներին: Սակայն եթե հասարակական վայրերում բացահայտման նպատակով մարդկանց հետևելը միշտ չէ, որ նրանց անձնական կյանքի իրավունքը խախտել է նշանակում¹²⁴, ապա այդպիսի տվյալների գրանցումը, հաճախակի օգտագործումը կամ դրանց մշտական պահպանումը կարող են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում համարվել¹²⁵: Ավելին, հետաքննական տվյալների հավաքման նպատակներով հավաքների լուսա- և տեսանկարահանումները կարող են մարդկանց զրկել խաղաղ հավաքների մասնակցելու ազատության զգացումից, հետևաբար չպետք է արվեն մշտապես: Մասնակիցների կամ երրորդ անձանց կողմից հասարակական կարգի պահպանության գործողությունների տեսա- և լուսանկարահանումները չպետք է արգելվեն, և ժապավենը ոստիկանությանը հանձնելու յուրաքանչյուր պահանջ պետք է հիմնված լինի առկա դատական որոշման վրա:

130. **Հավաքներից հետո իրավադատի մարմինների աշխատակիցների գործողությունների հետհրադարձային վերլուծությունը դեֆ է դառնա սանդառս գործելակերպ (հասկաղես ոչ սանդառս միջոցառումներից հետո):** Միջոցառումների կազմակերպիչները հավաքներից հետո պետք է հրավիրվեն մասնակցելու իրավապահ մարմինների գործողությունների վերլուծությանը: Վերլուծության ժամանակ սովորաբար անդրադառնում են մի շարք հարցերի, մասնավորապես¹²⁵

- Մարդու իրավունքների
- Առողջության ու անվտանգության ապահովման
- Տվյալ համայնքի վրա գործած ազդեցության
- Հասարակական կարգի պահպանության պլանավորման և ռիսկերի գնահատման
- Կապի համակարգի
- Կարգադրությունների ու որոշումների կայացման
- Մարտավարական
- Խրախուսանքի արժանի գործողությունների
- Մտավախությունների ու անհամգստության տեղիք տվող
- Միջոցների
- Սարքավորումների
- Ուսուցման կարիքների
- Լրատվամիջոցների

131. **Իրավադատի մարմինների աշխատակիցները դեֆ է մասնագիտական խորհրդասվություն սանալու հնարավորություն ունենան:** Որոշ դեպքերում իրավապահ մարմինների ներկայացուցիչները բախվում են ճգնաժամային իրավիճակներ

րի կամ հետվճարավարության սթրեսի, էմոցիոնալ, ֆիզիկական և վարքագծային հետևանքների: Նման դեպքերում իրավապահ մարմինները պետք է միջոցներ ունենան ներգրավելու փորձառու հոգեբանների, որոնք կօգնեն անհատապես և գաղտնիության պայմաններում աշխատակիցների հետ քննարկել նրանց գործողությունները:

Խաղաղ ոչ օրինական հավաքների կարգավորումը

132. **Մի՞տս է, որ դեմոստրացիան հավաքի անցկացմանը միջամտելու իրավասությունը:** Ոչ օրինական հավաքներին միջամտելու, դրանք ցրելու կամ ուժ կիրառելու ոստիկանության իրավասությունը չի նշանակում, որ այդ իրավասությունը պետք է միշտ կիրառել: Եթե հավաքը տեղի է ունենում համապատասխան օրենքի խախտումով, սակայն խաղաղ բնույթ ունի, ապա նման դեպքերում չմիջամտելը կամ ակտիվ աջակցություն ցույց տալը հաճախ ամենաճիշտ միջոցն են խաղաղ ելք երաշխավորելու համար: Շատ դեպքերում միջոցառման ցրումը կարող է ավելի մեծ իրավապահական խնդիրներ առաջացնել, քան հարմարվելն ու աջակցելը: Միջոցառումից հետո հնարավոր է օրենքի խախտման հանգամանքների քննություն իրականացնել:
133. **Իրավապահ մարմինների արձագանքը դեմոստրացիայի և համարժեք լինի:** Պատկան մարմիններն ունեն բազմաթիվ տարբերակներ (ներառյալ ոչ օրինական հավաքների նկատմամբ հանդուրժողականությունը, միջոցառման կազմակերպիչների հետ բանակցություններ վարելը), և տարբերակի ընտրությունը չպետք է սահմանափակվի չմիջամտելու կամ նախնական արգելքները կիրառելու կամ հավաքը ցրելու միջև:
134. **Խաղաղ հավաքներ, որոնք չեն համադասասխանում օրենքով սահմանված նախադրյալներին կամ որոնք զգալիորեն արբերվում են իրազեկման դիմումում նշված դրամաներից:** Եթե կազմակերպիչները չեն կարողանում կամ չեն ցանկանում ենթարկվել հավաքների անցկացման համար սահմանված նախադրյալներին (այդ թվում՝ նախապես իրազեկման պահանջ, իրավական հիմնավորումներից բխող անհրաժեշտ ու համարժեք սահմանափակումներ), ապա նրանց նկատմամբ կարող է հետապնդվել իրականացվել: Ամեն դեպքում իրավապահ մարմինները նման հավաքները նույնպես պետք է փորձեն կարգավորել այնքանով, որքանով հնարավոր է: Եթե նախատեսվում է անցկացնել փոքր հավաք, սակայն նշանակված օրը պարզվում է, որ այն շատ ավելի մեծ միջոցառում է ստացվում մարդկանց անսպասելիորեն մեծ մասնակցության պատճառով, ապա հավաքը պետք է ուղեկցվի իրավապահ մարմինների կողմից և պետք է համարվի օրինական, եթե այն շարունակում է խաղաղ ընթանալ:
135. **Խաղաղ հավաքներ, որոնք ենթադրաբար ոչ օրինական նպատակներ են հետադիմում:** Թեև հավաքի բովանդակությունը կամ ուղերձն ինքնին չպետք է հիմք հանդիսանան հավաքը ոչ օրինական բնութագրելու համար, սակայն խնդիրը

բարդանում է այն դեպքում, երբ այդ բովանդակությունը պարունակում է քրեական գործողություն կամ կարող է մեկնաբանվել որպես ուրիշներին քրեական հանցանքի դրդելու փորձ: Եթե ելույթ ունեցողը մարդկանց դիտավորյալ հրահրում է բռնություններ կատարելու, ապա նա կարող է ձերբակալվել բռնության դրդման մեղադրանքով: Սակայն յուրաքանչյուր նման դեպք անպայման պետք է գնահատվի կոնկրետ հանգամանքների համատեքստում, այդ թվում՝ թույլատրելիության բարձր շեմի խախտման գնահատմամբ¹²⁷: Տեսակետը, որ կարելի է հավաքները օրենքով արգելել նրանց ոչ օրինական նպատակներ ունենալու պատճառով, վտանգավոր է, քանի որ կարող է հանգեցնել հավաքի արգելման դրա բովանդակության հիմքով (տես նաև կետ 39 և 74): Ամեն դեպքում պետք է առաջնորդվել բռնության վտանգի անխուսափելիությունից: Ստորև բերված խաղաղ հավաքների օրինակները նկարագրում են վերը նշվածը.

- **Հավաքներ, որոնք կոչ են անում օրենքների կամ սահմանադրության ոչ բռնի բարեփոխման:** Առկա են երկու հիմնական պայմաններ, որոնց դեպքում կարելի է նման փոփոխություն պահանջել օրինական ճանապարհով: «Նախ՝ այդ նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է օրինական և ժողովրդավարական լինեն, և երկրորդ՝ առաջարկվող փոփոխությունն ինքնին պետք է համահունչ լինի ժողովրդավարական հիմնարար սկզբունքներին»¹²⁸: Սահմանադրական կարգի անհապաղ և բռնի փոփոխության կոչերը կարող են բավարար հիմք հանդիսանալ միջոցառումն արգելելու համար, սակայն այն հավաքները, որտեղ սահմանադրական կարգի ոչ բռնի փոփոխության կոչ է արվում, պետք է պաշտպանվեն¹²⁹:
- **Աղօրհնի ներգաղթյալների վսարման դեմ բողոքներ:** Նման հավաքները չպետք է անօրինական համարվեն միայն այն բանի համար, որ դրանք պաշտպանում են ներգաղթի օրենքների հետ խնդիրներ ունեցող մարդկանց շահերը¹³⁰:
- **Հանրահավաքներ, որոնցում հնչում են ատելություն սերմանող արտահայտություններ:** Ելույթներն ու արտահայտման այլ ձևերը պետք պաշտպանվեն ՔՔԻՄԴ-ի 9-րդ և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածների հիմքերով: Դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ այլ անձանց հասցեին հնչում են թշնամական կամ վիրավորական բնույթի արտահայտություններ: Սակայն, ինչպես նշված է ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածում, «...խտրականության, դաժանության կամ բռնության հրահրումով ազգային, ռասայական, կրոնական ատելության քարոզը պետք է արգելվի օրենքով»: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի խորհրդի թիվ (97)20 հանձնարարականը ևս նշում է, որ ատելություն պարունակող ելույթների առանձին դեպքեր «կարող են այն աստիճանի վիրավորական լինել անձանց կամ խմբերի համար, որ դրանց վրա չտարածվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության մակարդակը, որ նախատեսված է արտահայտման այլ ձևերի համար: Սա այն դեպքն է, երբ ատելություն պարունակող ելույթը նպատակ է հետապնդում Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների խզումը (ոչ-

չացումը) կամ դրանց մեծ չափով սահմանափակումը»¹³¹: Սակայն նույնիսկ նման դեպքերում հավաքի մասնակիցների կողմից նման արտահայտությունների օգտագործումը խաղաղ հավաքը չի կարող վերածել ոչ խաղաղ կամ ոչ օրինական հավաքի, և հասարակական կարգի պաշտպանները պետք է ձերբակալեն առանձին անձանց և ոչ թե ցրեն ամբողջ հավաքը:

- **Մեկ այլ ինֆիլթրացիոն տեսության նկատմամբ կիրառված ռազմական գործողությունների աջակցության ցույցեր:** Նման հավաքները չպետք է համարվեն անօրինական, նույնիսկ եթե այդ ռազմական գործողությունն ինքնին կարող է անօրինական լինել միջազգային օրենքի տեսանկյունից¹³²:

խաղաղ հավաքներ, որ վերածվում են ոչ խաղաղ հավաքների

136. Հավաքները կարող են խաղաղից վերածվել ոչ խաղաղի: Եթե խաղաղ հավաքի ժամանակ ոչ օրինական արարքի մտադրություն է արտահայտվում, հավաքը խաղաղից վերածվում է ոչ խաղաղի (հետևաբար կորցնում է մարդու իրավունքների օրենքով սահմանված պաշտպանության հնարավորությունը) և (կամ) վերածվում է օրինականից ոչ օրինականի (և, հետևաբար, կարող է համարժեք կերպով դադարեցվել): Սակայն հավաքի ժամանակ մասնակիցների հնչեցրած ոչ օրինական հայտարարությունները (բանավոր կամ գրավոր) խաղաղ հավաքն ինքնաբերաբար չեն դարձնում ոչ խաղաղ, և միջամտելիս պետք է ձերբակալել առանձին անձանց, և ոչ թե ցրել հավաքը:

Հավաքների ցրումը

137. Քանի դեռ հավաքները խաղաղ են, դրանք չպետք է ցրվեն իրավապահ մարմինների կողմից: Իրոք, հավաքների ցրումը պետք է ծայրահեղ միջոց լինի և իրականացվի միջազգային ստանդարտների վրա հիմնված նախապես մշակված կանոններով: Այդ կանոնները օրենքների վերածելու անհրաժեշտությունը չկա, սակայն դրանք պետք է արտացոլված լինեն երկրների ոստիկանական ուղեցույցներում, իսկ օրենքը պետք է պահանջի, որ նման ուղեցույցներ մշակվեն:

138. Այդ ուղեցույցները պետք է հստակորեն սահմանեն այն հանգամանքները, որոնց դեպքում կարելի է ցրել հավաքը, ինչպես նաև այն անձանց շրջանակը, ովքեր իրավասու են նման հրամաններ արձակելու (օրինակ՝ որոշակի կոչումից բարձր աստիճան ունեցող ոստիկանության սպաներ): Հավաքը չի կարելի ցրել, քանի դեռ չեն սպառվել հավաքը վտանգից զերծ պահելու իրավապահ մարմինների կողմից գործադրված բոլոր միջոցները (օրինակ՝ բռնության վտանգ ներկայացնող ագրեսիվ մասնակիցներին հանդարտեցնելը), և եթե առկա չէ բռնության անվերապահ սպառնալիք:

139. Հավաքը չի կարելի ցրել, երբ.

- Հավաքի փոքրաթիվ մասնակիցներ ագրեսիվ պահվածք ունեն: Նման դեպքերում գործողություններ պետք է ձեռնարկվեն հենց այդ անձանց նկատմամբ:
- Խաղաղ հավաք են ներթափանցում սադրիչ տարրեր: Այս դեպքում հասարակական կարգի պաշտպանները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն այդ սադրիչներին հեռացնելու ուղղությամբ և ոչ թե հավաքը դադարեցնեն կամ ցրեն և կամ հավաքը ոչ օրինական հայտարարեն:
- Հավաքը համարվում է ոչ օրինական կամ որովհետև կազմակերպիչը չի կատարել օրենքով սահմանված նախապայմանները, կամ հավաքը ենթադրաբար ոչ օրինական նպատակ է հետապնդում, կամ հավաքին մասնակցում է արգելված կազմակերպություն¹³³:

140. Եթե համարվում է, որ անհրաժեշտ է ցրել հավաքը, ապա հավաքի կազմակերպիչներին պետք է հստակորեն և լսելի ձևով տեղեկացնել այդ մասին նախքան ոստիկանության միջամտությունը: Մասնակիցներին պետք է բավարար ժամանակ տրվի հեռանալու համար նախքան ոստիկանության միջամտությունը: Երրորդ կողմի ներկայացուցիչներին (ինչպես, օրինակ՝ դիտորդներին, լրագրողներին, լուսանկարիչներին) նույնպես պետք է խնդրել հեռանալ, սակայն նրանց չպետք է արգելել ոստիկանության գործողությունը դիտարկելուց ու գրանցելուց:

Հասված բաժին 107-ից, ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխությանը երաժխավորված իրավունքների ու ուսիկանության գործունեության նորմերի մասին օրենք (2004 թ.), Կոլումբիայի օկուզ, Միացյալ Նահանգներ (2004 թ.)

դ) Ոստիկանությունը չպետք է հրաման արձակի ցրվելու ... հավաքի մասնակիցներին, բացի այն դեպքերից, երբ.

(1) հավաքի մասնակիցների մի զգալի թիվ կամ տոկոս չեն ենթարկվում սահմանված ժամանակի, վայրի և վարքագծի սահմանափակումներին, և կամ այս բաժնի (բ) ենթաբաժնում սահմանված հարկադրման միջոցները չեն հանգեցրել պահանջների բավարար կատարման, կամ գոյություն չունի խելամիտ հավանականություն այն բանի, որ սույն բաժնի (բ) ենթաբաժնում սահմանված միջոցները կհանգեցնեն պահանջների զգալի մասի բավարարման,

(2) հավաքի մասնակիցների մի զգալի թիվ կամ տոկոս դրսևորում են կամ պատրաստվում են դրսևորել ոչ օրինական վարքագիծ կամ բռնություն իրականացնել անձանց կամ գույքի նկատմամբ, կամ

(3) Հանրային անվտանգության նկատառումներով քաղաքապետի կողմից հայտարարվել է արտակարգ դրություն, որը հիմնված չէ միայն այն փաստի վրա, որ հավաքն ընկնում է Առաջին փոփոխության մեջ սահմանված դրույթների գործողության տակ, և Ոստիկանապետը որոշում է, որ հասարակական անվտանգության սպառնալիքը, որի պատճառով հայտարարվել է արտակարգ իրադրություն, պահանջում է, որ հավաքը ցրվի:

ե) (1) Եթե և այն դեպքերում, երբ ոստիկանությունը որոշում է, որ հավաքը կամ դրա մի մասը պետք է ցրվի, ոստիկանությունը պետք է առնվազն մեկ հստակ լսելի և հասկանալի հրաման արձակի ցրվելու պահանջով՝ օգտագործելով ձայնաուժեղացուցիչ համակարգ կամ սարք, ինչպես նաև մասնակիցներին պետք է բավարար ու համարժեք ժամանակ տա ցրվելու համար, ինչպես նաև հեռանալու ազատ ու անվտանգ ճանապարհ:

(2) Բացի այն դեպքերից, երբ առկա է անձանց վնասվածքներ ստանալու և գույքին զգալի վնաս հասցնելու վերահաս վտանգ, ոստիկանությունը պետք է բազմակի անգամներ ցրվելու հրամաններ արձակի, և եթե անհրաժեշտ է, այդ հրամանները պետք է արձակվեն բազմաթիվ վայրերից: Այդ հրամանները պետք է մարդկանց տեղեկացնեն այն ճանապարհի կամ ճանապարհների մասին, որոնցով նրանք կարող են հեռանալ, և հայտարարեն, որ ցրվելու պահանջը չկատարելու դեպքում նրանք կարող են ձերբակալվել:

(3) Հնարավորության դեպքում ոստիկանները պետք է տեսա- և ձայնագրեն ցրվելու հրամանները:

Ուժի գործադրումը

141. Իրավապահ մարմինների կողմից անհարկի, ոչ օրինական և չափազանց հզոր ուժի գործադրումը կարող է խախտել հիմնարար ազատությունները և պաշտպանված իրավունքները, խարխլել ոստիկանություն-հասարակություն հարաբերությունները և լայնածավալ լարվածության ու հուզումների պատճառ դառնալ: Հետևաբար, ուժի գործադրումը պետք է կանոնակարգված լինի ազգային օրենսդրությամբ¹³⁴, որի դրույթները պետք է սահմանեն այն հանգամանքները, որոնց պարագայում ուժի կիրառումը (ներառյալ համարժեք և նախապես արված նախազգուշացումները) արդարացված է: Դրույթները պետք է նաև սահմանեն տարաբնույթ վտանգների դիմակայման համար գործադրվող ուժի մակարդակը: Կառավարությունները պետք է մշակեն արձագանքման մի շարք միջոցներ և զինեն իրավապահ մարմիններին տարբեր տեսակի զենք-զինամթերքով, ինչը նրանց թույլ կտա տարբերակված ձևով կիրառել ուժը: Դրանց թվում պետք է լինեն մահ առաջ չբերող, հատուկ միջոցներ՝ որոշ հանգամանքներում օգտագործելու համար: Ավելի իրավապահ մարմինները պետք է ապահովված լինեն ինքնապաշտպանական միջոցներով, ինչպես, օրինակ՝ վահաններով, սաղավարտներով, զրահաբաճկոններով, հրակայուն հագուստով, ինչպես նաև զրահապատ տրանսպորտային միջոցով, որպեսզի նվազագույնի հասցվի ցանկացած տեսակի զենքի կիրառման անհրաժեշտությունը¹³⁵: Սա ևս մեկ անգամ մատնանշում է պետության կողմից իրավապահ մարմիններին համապատասխան միջոցներ հատկացնելու պահանջը՝ խաղաղ հավաքների ազատությունը պաշտպանելու նրանց պարտականությունը դրականորեն կատարելու նպատակով:

142. Ոստիկանությունը պարտավոր է հոգ տանել (կամ կանխել մահը կամ ֆիզիկական վնասվածքները) իրենց ծառայությամբ անցկացվող ցանկացած հավաքի մասնա-

կիցների մասին: Սա նշանակում է, որ ոստիկանությունը պետք է անհրաժեշտ իրավասություններ և կարողություններ ունենա, որոնք նրան հնարավորություն կտան իրականացնել իրենց պարտականությունները: Սա ենթադրում է նաև խելամիտ չափով ուժ կիրառելու իրավունք՝ ոստիկանության պահանջով մարդկանց որոշակի վայրում պահելու նպատակով այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է ապահով կերպով ցրվելու համար¹³⁶:

143. Միջազգային ստանդարտները մանրամասն հրահանգներ են պարունակում ինչպես ոչ օրինական, բայց խաղաղ ընթացող, այնպես էլ ոչ օրինական, բայց բռնություններով ընթացող հավաքների ցրման համատեքստում ուժի գործադրման վերաբերյալ: ՄԱԿ-ի «Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքները» (1990) սահմանում են, որ «... ոչ օրինական, բայց խաղաղ ընթացող հավաքները ցրելու պարագայում իրավապահ մարմինները պետք է խուսափեն ուժի կիրառումից, կամ, այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ անել, պետք է ուժի կիրառումը սահմանափակվի նվազագույն անհրաժեշտության չափով»¹³⁷: ՄԱԿ-ի «Հիմնական սկզբունքները» սահմանում են նաև, որ «...բռնություններով ուղեկցվող հավաքների ցրման դեպքում իրավապահ մարմինները կարող են հրազեն օգտագործել միայն այն դեպքերում, երբ ավելի նվազ վտանգավոր միջոցները կիրառելի չեն և այն էլ նվազագույն անհրաժեշտության չափով: Իրավապահ մարմինները նման դեպքերում չպետք է հրազեն կիրառեն, բացի Սկզբունք 9-ում սահմանված պայմանների առկայության դեպքից»¹³⁸:

Սկզբունք 9. ՄԱԿ-ի «Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքները»

Իրավապահ մարմինները չպետք է հրազեն կիրառեն մարդկանց նկատմամբ, բացի ինքնապաշտպանության դեպքերից, կամ այլ անձանց մահվան կամ ֆիզիկական վնասվածքների անվերապահ վտանգից պաշտպանելու, կյանքի համար վերահաս վտանգ ներկայացնող հատկապես ծանր հանցանքների կանխման, նման վտանգ ներկայացնող և իրավապահ մարմիններին դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալության, նրանց փախուստը կանխելու նպատակով և սոսկ այն դեպքերում, երբ նվազ վտանգավոր միջոցները բավարար չեն այդ խնդիրները լուծելու համար: Ամեն դեպքում հրազենի մահացու կիրառում կարող է իրականացվել խիստ անխուսափելիության դեպքում՝ կյանքի պաշտպանության նպատակով:

144. Հանրային հավաքներում հասարակական կարգի պահպանության ընթացքում ուժի գործադրման դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.
- Այն դեպքերում, երբ օգտագործվում են արցունքաբեր գազ կամ գրգռիչ ազդեցության այլ քիմիական նյութ, անհրաժեշտ է նախատեսել թունամաքման միջոցառումներ:

- Թուլացված ուժի փամփուշտների (որոնք հայտնի են նաև որպես գլանաձև փամփուշտներ կամ պլաստիկ (ռետինե) գնդակներ), ջրանետ մեքենաների և ամբոխը վերահսկելու ուժային այլ միջոցների օգտագործումը պետք է խստորեն կարգավորված լինի օրենքով¹³⁹: Ոչ մի դեպքում չի կարելի ուժ կիրառել այն մարդկանց նկատմամբ, ովքեր ի վիճակի չեն լքելու դեպքի վայրը:
- Ուժի կիրառման հանգամանքները պետք է ավտոմատ կերպով վերլուծության նյութ դառնան անմիջապես դեպքից հետո: Օգտակար գործելակերպ կլինի, եթե իրավապահ մարմինները մանրամասն գրավոր գրանցումներ կատարեն ուժային գործողության վերաբերյալ (ներառյալ զենքի կիրառմամբ)¹⁴⁰:

145. Կարևոր է, որ իշխանություններն ու իրավապահ մարմինները մշտապես հսկողության տակ պահեն գործադրված ուժային գործողությունների, հրազենի և նոր տեխնոլոգիաների կիրառման հետ առնչվող էթիկայի խնդիրները¹⁴¹: Հրազենի օգտագործմանը վերաբերող ստանդարտները հավասարապես կիրառելի են նաև ամբոխի կառավարման նպատակով օգտագործվող և պոտենցիալ վտանգ պարունակող տեխնիկական այլ միջոցների գործադրման պարագայում, ինչպես, օրինակ՝ մահակները, ձիերը, արցունքաբեր գազը կամ այլ քիմիական նյութեր, ջրանետ մեքենան (տե՛ս կետ 161-162 ոստիկանության կողմից ուժի չարաշահման դեպքում պատասխանատվության վերաբերյալ):

Հասված «Մարդու իրավունքների հիմնական սառը սսանդարտներ իրավադա մարմինների համար» (Ամենաթի ինթերնեցնլ)¹⁴²

Հիմնական սսանդարտ 3. Չի կարելի ուժ գործադրել, բացի այն դեպքերից, երբ դրա կարիքը խիստ անհրաժեշտ է և այն էլ՝ տվյալ իրադրության մեջ հնարավոր ամենամեղազագույն չափով:

Հիմնական սսանդարտ 4. Խուսափեք ուժային գործողություններից ոչ օրինական, բայց բռնություններով չուղեկցվող հավաքների հասարակական կարգը պահպանելու ժամանակ: Բռնություններով ուղեկցվող հավաքների ցրման ժամանակ ուժ գործադրեք հնարավոր ամենամեղազագույն չափով:

Հիմնական սսանդարտ 5. Կյանքի համար վտանգ ներկայացնող ուժ պետք է գործադրվի խիստ անխուսափելիության դեպքում՝ այլ անձի կամ անձանց կյանքը պաշտպանելու նպատակով:

Բաժին 15(2), Հունգարիայի օրենք XXXIV ոստիկանության մասին (1994)

Ոստիկանների կողմից հարկադրման բոլոր հնարավոր ու հարմար միջոցներից պետք է ընտրել այն, որն ամենաարդյունավետն է, պատճառում է ամենաքիչ սահմանափակումներ, վնասվածքներ կամ վնաս այն անձանց նկատմամբ, ում դեմ այդ միջոցը կիրառվում է:

Հասված «Ոստիկանությունում բարելիդն աշխատանքի խթանման սկզբունքներից» (ԱՄՆ արդարադատության նախարարություն)¹⁴³

Հասարակական կարգի պահպանությունը պահանջում է, որ ժամանակ առ ժամանակ ոստիկանը միջոցներ ձեռնարկի վերահսկելու բռնություն, ագրեսիվ գործողություն կամ դիմադրություն ցույց տվող անձին ձերբակալելու, ոստիկանին կամ ոստիկաններին կամ հասարակության այլ անդամներին ռիսկից կամ վերահաս վտանգից պաշտպանելու համար: Ոստիկանները պետք է այն չափով ուժ գործադրեն, որչափ որ խելամտորեն անհրաժեշտ է իրավիճակն արդյունավետ կերպով հսկողության տակ վերցնելու համար՝ ըստ այդմ պաշտպանելով ոստիկանների և այլ անձանց կյանքը:

(...)

Այն դեպքերում, երբ ուժի գործադրումը հիմնավորված է և անհրաժեշտ, ոստիկանները հնարավորության սահմաններում պետք է օգտագործեն տարբերակներ՝ ուժի աստիճանական ավելացման կարգով և չկիրառեն ավելի հզոր ուժային միջոցներ, քանի դեռ չի հիմնավորվել, որ ուժի ավելի ցածր մակարդակի կիրառումը չի կարող լինել կամ չի եղել համազոր: Ոստիկանության տրամադրության տակ գտնվող ուժային միջոցները կարող են ներառել բանավոր հրամաններ, ձեռքի ուժի գործադրում, քիմիական նյութեր, մահակներ կամ այլ հարվածող զենքեր, շների օգտագործում, մահվան չհանգեցնող փամփուլտներ և մահացու զենք:

Պատասխանատվություն և հաշվետվողականություն

146. Այն դեպքերում, երբ գործադրված ուժը կիրառվել է օրենքի խախտումով կամ գործադրվել է ավելին, քան անհրաժեշտ էր տվյալ հանգամանքներում, ոստիկանության աշխատակիցները պետք է ենթարկվեն քաղաքացիական և/կամ քրեական պատասխանատվության, ինչպես նաև կարգապահական տույժի: Ոստիկանության աշխատակիցները պատասխանատվություն են կրում նաև այն դեպքերի համար, երբ նրանց չի հաջողվել միջամտել, և այդ չմիջամտելու արդյունքում կիրառվել է մեծ ծավալի ուժ:

1991 թ. ԵԱՀԽ Մարդկային չափման կոնֆերանսի մոսկովյան հանդիպման փաստաթղթի 21.2 կետը սահմանում է, որ մասնակից պետությունների «իրավապահ մարմինների գործողությունները ենթակա են օրենսդրական վերահսկողության, որ իրավապահ մարմինների աշխատակիցները հաշվետու են նման գործողությունների համար, և այդ գործողությունների չարաշահումների զոհերը կարող են ազգային օրենսդրությունների սահմաններում համարժեք փոխհատուցում պահանջել»: Նմանապես, ՄԱԿ-ի «Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքների» սկզբունք 7-ը նշում է, որ «պետությունները պետք է երաշխավորեն, որ իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կամայականորեն և չարաշահմամբ գործադրման դեպքերը օրենքի սահմաններում պատժվեն որպես քրեական հանցագործություն»¹⁴⁴:

147. Այն դեպքերում, երբ բողոք է ստացվում իրավապահ մարմինների գործողությունների վերաբերյալ, կամ երբ անձը լուրջ վնասվածք է ստանում կամ զրկվում կյանքից իրավապահ մարմինների գործողությունների հետևանքով, պետք է իրականացնել արդյունավետ պաշտոնական հետաքննություն¹⁴⁵:

148. Ցանկացած հետաքննության հիմնական նպատակը պետք է լինի երկրի այն օրենքների արդյունավետ կիրարկման երաշխավորումը, որոնք կոչված են պաշտպանելու կյանքի իրավունքն ու մարմնական անձեռնմխելիությունը: Եթե խնդրո առարկա իրադրություններում ներգրավված են եղել պետական կառույցներ կամ պաշտոնյաներ, ապա վերջիններս պետք է հաշվետու լինեն իրենց պատասխանատվության ներքո պատահած մահվան դեպքերի կամ ֆիզիկական վնասվածքների համար: Անհրաժեշտ հետաքննության կոնկրետ տեսակը, որ պահանջվում է այդ նպատակներին հասնելու համար, կարող է փոփոխվել՝ կախված հանգամանքներից¹⁴⁶:

6. Կազմակերպչի ղարսականությունները

Կազմակերպչիչը

149. Կազմակերպչին այն անձը կամ անձինք են, ովքեր առաջնային պատասխանատվություն են կրում հավաքի համար: Կարելի է կազմակերպչին սահմանել որպես անձ, ում անունով ներկայացվել է հավաքի իրազեկումը:

Չողված 5. Մոնսենեգրոյի հանրահավաքների մասին օրենքը (2005 թ.)

Խաղաղ հավաքի կազմակերպիչ է հանդիսանում իրավաբանական կամ ֆիզիկական անձը (այսուհետև՝ Կազմակերպիչ), որը սույն Օրենքին համապատասխան կազմակերպում, անցկացնում և վերահսկում է խաղաղ հավաքը: Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խաղաղ հավաք կարող է կազմակերպվել նաև քաղաքացիների խմբի կամ մեկից ավելի իրավաբանական անձանց կողմից:

150. Հավաքների կազմակերպիչները պետք է համագործակցեն ոստիկանության հետ, որպեսզի երաշխավորվի, որ հավաքի մասնակիցների վարքը լինի օրենքի շրջանակներում և համապատասխանի ներկայացված իրազեկման պայմաններին: Պետք է հստակ լինի, թե իրականում ովքեր են հավաքի կազմակերպիչները: Ենթադրելի է, որ հավաքի պաշտոնական կազմակերպիչը այն անձը կամ անձինք են, ում անունով ներկայացվել է նախնական իրազեկումը: Պարտադիր չէ, որ կազմակերպիչը լինի իրավաբանական անձ. օրինակ՝ որպես կազմակերպիչ կարող է հանդես գալ անհատներից կազմված կոմիտեն կամ ոչ ֆորմալ կազմակերպությունը¹⁴⁷:

Հավաքի խաղաղ բնույթի ապահովումը. դրական գործելակերպի սկզբունքները

151. **Քանակցությունների և/կամ միջնորդության կիրառումը հավաքների հետ կաղված վեճերի լուծման հարցում:** Եթե առաջարկվող հավաքը, կամ դրա ժամանակը, վայրը կամ ձևը վիճարկվում են, կամ ընդհանուր որոշում չի կայացվում հավաքի կազմակերպչի ու համապատասխան կարգավորիչ մարմնի, իրավապահ մարմինների կամ այլ կողմերի միջև, ում իրավունքները կարող են շոշափվել, ապա այդ դեպքում փոխադարձ ընդունելի որոշման պետք է հանգել բանակցությունների կամ միջնորդավորված երկխոսության ճանապարհով: Համապատասխան կողմերի միջև ընթացող անկեղծ երկխոսությունը հաճախ բոլոր ներգրավված կողմերի համար ավելի դրական արդյունքի կարող է հանգեցնել, քան պաշտոնապես օրենքին դիմելը: Միջնորդավորված բանակցություններում կամ երկխոսության մեջ կարող են լավագույն ձևով ներգրավվել անձինք, ում անունը չի զու-

գորդվում ո՛չ պետության, ո՛չ էլ կազմակերպիչների հետ: Սակայն կողմերի իրավական ներկայացուցիչների ներկայությունը նույնպես կարող է օգնել դյուրացնելու քննարկումները հավաքի կազմակերպչի և իրավապահ մարմինների միջև:

152. **Միջոցառման նախնական տվյալները իրավադատի մարմինների աշխատակիցների հետ:** Դրական գործելակերպ է համարվում, երբ հնարավորության սահմաններում հավաքի կազմակերպիչները իրավապահ մարմինների հետ համաձայնության են գալիս անվտանգության հնարավոր միջոցառումների շուրջ: Այդ քննարկումները կարող են վերաբերել ոստիկանական ուժերի և կարգադրիչների տեղակայմանը (տե՛ս կետ 157-161), ինչպես նաև հասարակական կարգի պահպանությանն ուղղված գործողությունների բնույթին: Որոշ դեպքերում, օրինակ՝ ոստիկանության ներկայությունը այս կամ այն վայրում կարող է ընկալվել որպես անհարկի, սադրիչ կամ առճակատման դրդող, և կազմակերպիչը կարող է խնդրել ոստիկանությանն ավելի քիչ աչքի ընկնել:

**Հոդված 30, «Հանրային հավաքների մասին օրենք» (2004), Սլովենիա
(Օգնություն ուսիկանությանը)**

Երբ հավաքի կամ միջոցառման բնույթի առումով կամ հավաքի կամ միջոցառման անցկացման հանգամանքների առումով հավանական է համարվում ոստիկանության միջամտության անհրաժեշտությունը, ապա ոստիկանությունը կազմակերպիչների համաձայնությամբ պետք է որոշի, թե քանի ոստիկաններ են անհրաժեշտ հավաքի կամ միջոցառման ժամանակ հասարակական կարգը պահպանելուն աջակցելու համար: Նման դեպքերում ոստիկանության պաշտոնյան պետք է առաջնորդի հետ պայմանավորվի համագործակցության մեթոդի վերաբերյալ: Նախորդ կետում նշված դեպքերում հավաքի կամ միջոցառման կազմակերպիչը պարտավոր է համագործակցել ոստիկանության հետ նաև հավաքի կամ միջոցառման ժամանակ հասարակական կարգի պահպանության միջոցների պլանավորման հարցում:

153. ԵԱՀԿ անդամ երկրների շրջանակից դուրս Հարավաֆրիկյան Հանրապետության օրենսդրությունը օգտակար մոդել է առաջարկում, այն է՝ պահանջվում է պայմանագիր ստորագրել երկու կողմերի՝ ցույցերի կազմակերպիչների և ոստիկանության միջև, որտեղ սահմանված կլինեն կողմերի պարտականություններն ու իրավասությունները:

**«Հավաքների կարգավորման մասին» օրենք № 205 (1993 թ.),
Հարավային Աֆրիկա**

Սույն օրենքը սահմանում է, որ հավաքի խաղաղ անցկացումը միջոցառման կազմակերպչի, ոստիկանության իրավասու մարմնի և տեղական իշխանության ներկայացուցչի համատեղ պարտականությունն է: Այս երեք կողմերը

միասնաբար կազմում են «անվտանգության եռանկյունի»՝ միջոցառման ընթացքում կարգուկանոնն ու անվտանգությունը երաշխավորելու համապարտ պատասխանատվությամբ: Անվտանգության եռանկյունու հաջող գործունեությունը կախված է համատեղ պլանավորումից և երեք կողմերի աշխատանքի ճիշտ համակարգումից, ինչպես նաև բանակցելու ու զիջումների գնալու պատրաստակամությունից այն դեպքերում, երբ ծագում են տարածայնություններ¹⁴⁸:

154. **Ռիսկի գնահատումը:** Կազմակերպիչները ուստիկանության և այլ ծառայությունների հետ (ինչպես, օրինակ՝ շտապ օգնության, հրշեջ) պետք է կանխատեսումներ անեն, թե իրենց հավաքը ինչ ռիսկեր կարող է պարունակել և ինչպես պետք է իրենք այդ ռիսկերին դիմակայեն, եթե այդ կանխատեսումներն իրականանան: Սակայն ռիսկերի օրենքներով պարտադրված գնահատումը կարող է կարգավորման ավելորդ բյուրոկրատական ու քաջքշուկի ծնունդ տալ և անձանց ու խմբերի համար ստեղծել չարդարացված արգելքներ՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքից օգտվելու ճանապարհին:
155. **Իրավադատի մարմինների օրինական ցուցումներին ենթարկվելու դասախանգությունը:** Հավաքների մասին օրենքը կարող է պահանջել, որ կազմակերպիչները (ինչպես նաև մասնակիցները) ենթարկվեն իրավապահ մարմինների օրինական կարգադրություններին: Դա անելու մերժումը կարող է պատասխանատվության հանգեցնել:

Հավաքների հսկումը

156. Կարգադրիչները կամ կարգավորողները (այս տերմինները հաճախ օգտագործվում են փոխարինաբար) այն անձինք են, ովքեր օգնում են հավաքի կազմակերպիչներին միջոցառման կառավարման հարցում¹⁴⁹: Հավաքների ազատությունը կարգավորող օրենքները կարող են կազմակերպիչների համար նախատեսել կավոր կարգադրիչների օժանդակություն: Իհարկե, հասարակական կարգի պահպանությունը ուստիկանության ընդհանուր պատասխանատվությունն է, սակայն կազմակերպիչներն իրենց հերթին կարող են կարգադրիչներ տեղաբաշխել հատկապես մեծ ու կասկածների տեղիք տվող հավաքների ժամանակ: Կարգադրիչներն անձինք են, ովքեր աշխատում են հավաքի կազմակերպիչների հետ և ովքեր պատասխանատու են միջոցառման անցկացմանն աջակցելու և օրենքով նախատեսված սահմանափակումներին հավաքի հետևելը դյուրացնելու համար: Կարգադրիչները իրավապահ մարմինների լիազորություններ չունեն և չեն կարող ուժ գործադրել, փոխարենը նրանց նպատակը պետք է լինի հանդգել հավաքի մասնակիցներին համագործակցել հասարակական կարգի պահպանության համար: Նրանց ներկայությունը կարող է հանդարտություն հաղորդել մասնակիցներին և օգնել միջոցառման դրական տրամադրության ստեղծմանը: Կարգադրիչների

առաջնային դերը հանրությանը կողմնորոշելը, բացատրելը և տեղեկատվություն ապահովելն է, ինչպես նաև բացահայտել հավաքից առաջ և ընթացքում հնարավոր ռիսկերն ու վտանգները: Ձանգվածային անկարգությունների դեպքում կարգադրիչները (կազմակերպիչը) պետք է արագորեն իրազեկեն ոստիկանությանը: Ոստիկանությունը պետք է համագործակցի միջոցառման կարգադրիչների հետ, և յուրաքանչյուրն էլ պետք է հստակ պատկերացում ունենա միմյանց դերերի վերաբերյալ:

157. Ուսուցում, ցուցումներ և հեֆրադարձային վերլուծություն: Կարգադրիչները պետք է համապատասխան մակարդակի ուսուցում անցնեն և մանրամասն ցուցումներ ստանան նախքան հավաքն սկսվելը (մասնավորապես՝ կարգադրիչները պետք է ծանոթ լինեն այն տարածքի աշխարհագրությանը, որտեղ անցկացվելու է հավաքը), և կարգադրիչների գործունեության համակարգումը հավաքի կազմակերպիչների պատասխանատվությունների շրջանակում է: Մեծամասշտաբ միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է սահմանել որոշումների կայացման հստակ հիերարխիա, և կարգադրիչները պետք է հնարավորություն ունենան մշտապես կապի մեջ լինել միմյանց և կազմակերպիչների հետ: Ինչպես և իրավապահ մարմինների աշխատակիցների պարագայում, կարևոր է, որ կարգադրիչները հավաքի կազմակերպիչների հետ միասին միջոցառումից հետո մանրամասնորեն քննարկեն և վերլուծեն հավաքի անցկացման ընթացքը, իսկ ոչ սովորական ընթացք ունեցող հավաքներից հետո՝ նաև գնահատականներ տան:

158. Առանձնացումը: Ցանկալի է, որ կարգադրիչները հստակորեն առանձնանան, օրինակ՝ կրեն հատուկ բաճկոններ, թևկապ կամ անվանավահանակներ:

159. Առանձնահատուկ հավաքների հսկման դահանգները: Որոշակի հանգամանքներում կազմակերպիչների առջև կարող է օրինական կերպով պայման դրվել՝ ապահովել հավաքի կարգադրիչների այս կամ այն թվաքանակը: Սակայն նման պահանջ պետք է ներկայացվի միայն հատուկ գնահատման արդյունքներից ելնելով և ոչ թե դարձվի սովորական պրակտիկա: Հակառակ դեպքում կարող է խախտվել համամասնականության սկզբունքը: Կարգադրիչներ ապահովելու ցանկացած պահանջը, սակայն, ոչ մի դեպքում չպետք է նվազեցնի պետության՝ հասարակական կարգը պատշաճ կերպով պահպանելու դրական ձեռնարկները: Կարգադրիչները ոստիկանությանը չեն փոխարինում, և ոստիկանությունն ամեն դեպքում ընդհանուր պատասխանատվություն է կրում կարգուկանոնի համար: Ամեն դեպքում կարգադրիչների արդյունավետ աշխատանքը կարող է օգնել նվազեցնել ոստիկանական մեծ ուժերի ներկայությունը հանրային հավաքների ժամանակ: Դա, ի վերջո, կոյուրացնի բանակցությունների գործընթացը այն դեպքերում, երբ իշխանությունները մտավախություն կունենան մարդկանց անվտանգության վերաբերյալ և կնվազեցնի հավաքի՝ հասարակական կարգի հնարավոր խախտումների կամ անվտանգության նկատառումներով մերժման հավանականությունը:

160. Որոշ երկրների օրենքներ նախատեսում են պրոֆեսիոնալ կարգադրիչների կամ մասնավոր անվտանգության ծառայությունների վճարովի ծառայությունների ձեռքբերումը հավաքի կազմակերպիչների կողմից միջոցառման հսկումն ապահովելու համար: Սակայն վճարովի ծառայություններից օգտվելը ոչ մի դեպքում չպետք է օրենքով սահմանված պարտադրանք լինի: Կազմակերպիչներին նման ծախսային բեռ պարտադրելը լրջորեն կխեղաթյուրեր հավաքների ազատության էությունը և կխաթարեր պետության՝ պատշաճ հասարակական կարգի պահպանման հիմնարար պարտականությունը:

Պատասխանատվությունը

161. Կազմակերպիչներն ու կարգադրիչները պարտավոր են բոլոր ջանքերը գործադրել օրենքի պահանջներին համապատասխանելու և հավաքի խաղաղ բնույթն ապահովելու համար, սակայն նրանք չպետք է պատասխանատվության ենթարկվեն, եթե դա նրանց չի հաջողվում: Կազմակերպիչը պատասխանատու չէ առանձին մասնակիցների գործողությունների կամ կարգադրիչների՝ ըստ հրահանգի գործել չկարողանալու համար: Փոխարենը պատասխանատվություն են կրում անհատ մասնակիցները կամ կարգադրիչները, եթե նրանք բռնի արարք են կատարում կամ չեն կատարում իրավապահ մարմինների օրինական հրահանգները:

162. Կազմակերպիչը կարող է ապահովագրել իր քաղաքացիական պատասխանատվությունը հավաքի նկատմամբ: Ապահովագրությունը, սակայն, չպետք է հավաքի ազատության պայման դառնա, քանի որ նման պայմանը կարող է ոչ համարժեք և սահմանափակող ազդեցություն ունենալ ազատության իրավունքի իրականացման համար: Ավելին՝ եթե հավաքը վերածվում է լուրջ հասարակական անկարգության, ապա իշխանությունների և ոչ թե կազմակերպիչների կամ կարգադրիչների պարտականությունն է դրա հետևանքների վերացումը: Ոչ մի պարագայում չի կարելի օրինական խաղաղ հավաքի կազմակերպչին պատասխանատվության կանչել այլ անձանց կողմից կատարված խախտումների համար:

7. Մարդու իրավունքների մոնիթորինգ իրականացնողները, լրասվամիջոցներն ու այլ ռաիաագրգիռ կողմեր

Մարդու իրավունքների դառադանները, դիաորդներն ու մոնիթորինգ իրականացնողները

163. Հավաքի մոնիթորինգը կարող է անկողմնակալ և առարկայական պատկերացում ապահովել այն ամենի վերաբերյալ, ինչ տեղի է ունեցել՝ պարունակելով ինչպես մասնակիցների, այնպես էլ իրավապահ մարմինների պահվածքի փաստական գրանցումներ: Մոնիթորինգը, օրինակ, կարող է իրականացվել տեղական հասարակական կազմակերպությունների կողմից: Օմբուդսմանի տեղական գրասենյակները և մարդու իրավունքների հանձնաժողովները, ինչպես նաև միջազգային ՀԿ-ները և միջպետական կազմակերպությունները (ինչպես, օրինակ՝ Եվրոպայի խորհուրդը կամ ԵԱՀԿ-ն) կարող են դիտորդի դեր կատարել:
164. Չնայած հավաքների անցկացման ազատության պաշտպանության ապահովումը առաջին հերթին պետության պարտականությունն է, ՀԿ-ները կարևոր դեր ունեն մարդու իրավունքների պաշտպանության գործը խթանելու ուղղությամբ: Հետևաբար, մարդու իրավունքների պաշտպաններին¹⁶⁰ պետք է հնարավորություն տրվի ազատորեն գործելու հավաքների ազատության համատեքստում:
165. Սույն Ուղեցույցում մոնիթորինգ իրականացնողները բնորոշվում են որպես երրորդ անձինք կամ խմբեր, որոնց հիմնական խնդիրն է դիտարկել և գրանցել այն ամենը, ինչ տեղի է ունենում:
166. Հանրային հավաքների մոնիթորինգը բարդ գործ է, և մոնիթորինգ իրականացնողների դերակատարության ճշգրիտ շրջանակը կախված է այն բանից, թե ինչու և ում կողմից են նրանք տեղաբաշխվել¹⁶¹: Մոնիթորինգ իրականացնողներին կարող է հանձնարարվել դիտարկել հավաքի կոնկրետ որևէ ասպեկտ, օրինակ՝
- միջոցառման հասարակական կարգի պահպանությունը (և արդյոք պետությունն իրականացնո՞ւմ է իր դրական պարտավորությունները, որ նախատեսված են մարդու իրավունքների օրենսդրությամբ),
 - արդյոք կողմերը հետևո՞ւմ են հավաքի անցկացման կարգի մասին նախօրոք ձեռք բերված համաձայնություններին,
 - ցույցի մասնակիցների փոխհարաբերությունները և հակընդդեմ ցույցի մասնակիցները,
 - մասնակիցների վարքագիծը երթի ժամանակ, երբ նրանք անցնում են հատուկ զգուշություն պահանջող տարածքով:
167. Ուղեցույցի ստորև բերված հատվածները ճշտորեն մոդելավորված են «Մարդու իրավունքների մոնիթորինգի Միավորված ազգերի կազմակերպության ուսումնական ձեռնարկի»¹⁶² հիման վրա:

Մոնիթորինգ իրականացնողների ուղեցույց

Հավաքից առաջ

Մոնիթորինգ իրականացնողները պետք է հավաքից առաջ ցուցումներ ստանան, որոնք պետք է վերաբերեն միայն մոնիթորինգի առարկա տվյալ միջոցառմանը: Նրանք պետք է հրահանգներ ստանան, թե հավաքի կոնկրետ որ ասպեկտի վրա պետք է ուշադրություն դարձնեն, և ոչ թե փորձեն դիտարկել և հաշվետվություն ներկայացնել ողջ հավաքի վերաբերյալ: Սա կարող է անհրաժեշտություն առաջացնել մի քանի (կամ բազմաթիվ) մոնիթորինգ իրականացնողներ տեղաբաշխել միևնույն միջոցառման ժամանակ: Հնարավորության սահմաններում մոնիթորինգ իրականացնողները պետք է նախապես կապ հաստատեն կազմակերպիչների հետ և տեղեկատվություն հավաքեն հավաքի սցենարի և այլ մանրամասների մասին, ներառյալ անցկացման վայրը, նախատեսված գործողությունները, երթուղին, մասնակիցների ակնկալվող թվաքանակը, հավաքի տևողությունը, նպատակը, իշխանությունների սպասվող արձագանքը, միջոցառման այլընտրանքային ընթացքները: Նախքան հավաքը մոնիթորինգ իրականացնողները պետք է ծանոթանան կազմակերպիչների նախատեսած երթուղուն: Երթուղուն ծանոթ լինելը նրանց հնարավորություն կտա զաղափար կազմելու պոտենցիալ դժվարությունների, վտանգների, կայանատեղիների ու փախուստի ուղիների մասին: Հնարավորության դեպքում մոնիթորինգ իրականացնողները կարող են խնդրել կազմակերպիչներին մասնակիցներին հրահանգել չմոտենալ մոնիթորինգ իրականացնողներին և չխոչընդոտել նրանց աշխատանքը:

Հավաքի ժամանակ

Հավաքի օրը մոնիթորինգ իրականացնողները պետք է խուսափեն մասնակցությունից կամ որևէ կերպ որպես մասնակից երևալուց: Նրանք պետք է ամեն ինչ անեն, որպեսզի երևան որպես դիտորդ և ոչ թե ցուցարար և պետք է հստակ տարբերակելի լինեն մյուս մասնակիցներից: Այն դեպքերում, երբ նրանց տարբերակված լինելը կարող է վտանգավոր լինել նրանց անձնական անվտանգության առումով, նրանք պետք է անհատական քարտեր ունենան: Մոնիթորինգ իրականացնողները պետք է խելամիտ և բավարար տարածություն պահպանեն իրենց և ցուցարարների, ինչպես նաև իրենց և ոստիկանության ուժերի միջև և պետք է հեռանան այդ վայրից վտանգի առաջին իսկ նշանների ի հայտ գալուն պես: Մոնիթորինգ իրականացնողները և մարդու իրավունքների պաշտպանները ավելի ակտիվ դեր կարող են կատարել, եթե ստանձնեն միջամտելու դեր կամ իրենց ֆիզիկական ներկայությամբ, միջնորդելով, բանակցությունների օգնելով կամ կողմերի (ներառյալ ոստիկանության) միջև որպես հաղորդակցության միջոց ծառայելով¹⁶³: Մոնիթորինգ իրականացնողները պետք է իմանան կամ պարզելու համար հարցնեն, թե ով է ոստիկանության գործողությունների ղեկավարը կամ պատասխանատու իրավասություններ ունեցող անձը, որպես-

զի իմանան, թե ում պետք է մոտենալ դժվարություններ ի հայտ գալու դեպքում: Նրանք այդ տեղեկատվությունը պետք է ներառեն իրենց հաշվետվությունների մեջ: Ոստիկանությունը պետք է տեղեկացված լինի մոնիթորինգ իրականացնողների ներկայության և նրանց գտնվելու վայրի մասին, որպեսզի հնարավորություն ունենա պաշտպանելու նրանց անվտանգությունը, ինչպես նաև որոշ հանգամանքներում աջակցություն ցուցաբերել, ասենք, ոստիկանական արգելագծերը հատելու կամ հարմար դիտորդական դիրք զբաղեցնելու, կամ ծավալվող իրադարձությունների մասին իրազեկվելու առումով: Մոնիթորինգ իրականացնողները պետք է ունենան մյուս դիտորդների հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ սարքավորումներ (հեռախոս, ռադիո): Մոնիթորինգ իրականացնողները չունեն լրացուցիչ այլ իրավասություններ և ոստիկանության աջակցությունը կարող են հայցել այն չափով, ինչ չափով ցանկացած այլ անձ: Եթե ցուցի ժամանակ կամ ավարտից հետո ձերբակալություններ են տեղի ունենում կախված մոնիթորինգի խնդրից, անհրաժեշտ է փորձել ձեռք բերել ձերբակալված անձանց անունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև վկաների անունները: Դա անելիս մոնիթորինգ իրականացնողը պետք է գործի մեծ զգուշությամբ և խուսափի այնպիսի վարքագծից և բառապաշարի օգտագործումից, որն ավելի կվատթարացնի առանց այն էլ լարված իրադրությունը:

Չավափից հեճո

Ցույցից հետո միջոցառմանը մասնակցած մոնիթորինգ իրականացնողները պետք է պատրաստեն մանրամասն գրավոր հաշվետվություն: Այդ հաշվետվությունները պետք է լինեն փաստերի վրա հիմնված, ճշգրիտ, առարկայական ու չեզոք. ոչ մի պարագայում չի կարելի գրել բաների մասին, որ մոնիթորինգ իրականացնողը չի տեսել: Այդ հաշվետվությունները չպետք է պարունակեն կարծիք ազգային կամ տեղի օրենսդրության սահմաններում ցուցի իրավասության կամ ոչ իրավասության վերաբերյալ: Նրանք պետք է նաև մասնակցեն հետիրադարձային վերլուծությանն ու գնահատմանը: Գրավոր հաշվետվությունը կարող է պարունակել հետևյալ տեղեկատվությունը.

- Մոնիթորինգ իրականացնողի դիրքը
- Մոնիթորինգ իրականացնողի ժամանելու և հեռանալու ժամանակը
- Ով է կազմակերպիչը և ինչ նպատակով է անցկացվում հավաքը
- Մասնակիցների մոտավոր թվաքանակը
- Մասնակիցների վարքագիծը (ներառյալ կոչերը, ցուցապաստառները և այլն)
- Արդյոք տեղի ունենում էր միաժամանակյա հավաք (և մասնակիցների վարքագիծը)
- Իրավապահ մարմինների վերաբերմունքը, տեսանելիությունը
- Արդյոք մոնիթորինգ իրականացնողների նկատմամբ եղե՞լ է որևէ սպառնալիք կամ սադրանք

Չանգվածային լրատվամիջոցները

168. Լրագրողներին մեծ դեր է վերապահված հանրային հավաքների անկանխակալ լուսաբանման հարցում: Որպես այդպիսիք՝ նրանք պետք է տարբերվեն միջոցառման մյուս մասնակիցներից, և ղեկավարները պետք է նրանց հնարավորինս մեծ մատչելիություն ապահովեն: Խառնաշփոթից խուսափելու նպատակով *կարող է անհրաժեշտություն առաջանալ լրագրողներից պահանջել, որ նրանք և ՋԼՄ-ների այլ ներկայացուցիչներ հեշտությամբ տարբերվեն (օրինակ՝ լուսանդրադարձնող անթև բաճկոն հագնելով):*
169. «Չանրահավաքները, շքերթները և հավաքները հաճախ միակ միջոցն են, որով լրատվամիջոցներ մուտք չունեցողները կարող են հասարակության ուշադրությունը հրավիրել իրենց անհանգստացնող խնդիրների վրա»¹⁶⁴: Լրատվական նյութերը ինչպես կազմակերպիչների, այնպես էլ իրավապահ մարմինների հաշվետվողականության համար կարևոր բաղկացուցիչներ կարող են լինել: Այդ պատճառով լրատվամիջոցների համար պետք է և՛ հավաքը մատչելի դարձնել, և՛ հասարակական կարգի պահպանության գործողությունները: Սա համահունչ է նաև լրատվամիջոցների՝ արտահայտման ազատության հիմնարար իրավունքի հետ¹⁶⁵:

Շահագրգիռ այլ կողմեր

170. Խաղաղ հավաքները հաճախ շոշափում են ոչ մասնակիցների իրավունքները, ինչպես, օրինակ՝ գործարարները, տեղի բնակիչները, ճանապարհներից օգտվողները, անցորդները, դիտորդներն ու կողքից դիտողները: Սակայն հավաքների ազատության նկատմամբ սահմանափակումների կիրառումը չի կարող արդարացվել այս անձանց իրավունքների սահմանափակման իրողությամբ: Ավելին՝ սահմանափակումների անհրաժեշտությունն ու համաչափությունը որոշելու ժամանակ պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ հավաքի ազատությունը, ըստ սահմանման, միայն ժամանակավոր բնույթ է կրում:
171. Քանի որ այդ կողմերը սովորաբար չեն կարող մասնակցել այն քննարկումներին¹⁶⁶, որտեղ շոշափում են իրենց իրավունքները, կազմակերպիչների և իրավապահ մարմինների կողմից դրական գործելակերպ կլինի այդ կողմերի հետ քննարկել, թե ինչպես չհանճնկնող իրավունքները կարող են լավագույն ձևով պաշտպանվել՝ ի բավարարումն բոլոր կողմերի: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ դեմ առ դեմ քննարկումներ կազմակերպել, կարելի է համաձայնության գալ միջնորդավորված երկխոսության միջոցով:

Հավելված Ա. Մեջբերված գործեր

Եվրոպական արդարադատության դատարան

- *Eugen Schmiddberger, Interantionale Transporte und Planzuge-ն* ընդդեմ Ավստրիայի Հանրապետության (գործ C-112/00, ECR I-5659, 2003)
- *Commission-ն* ընդդեմ Ֆրանսիայի (գործ C-265/95, ECRI-6959, 1997)

Սարդու իրավունքների եվրոպական դատարան

- *Ahmed and others-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (1998) (դիմում № 22954/93)
- *Amann-ն* ընդդեմ Շվեյցարիայի (2000) (դիմում № 27798/95)
- *Oya Ataman-ն* ընդդեմ Թուրքիայի (2006) (դիմում № 74552/01)
- *Anderson-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (1997) (դիմում № 33689/96)
- *Appleby-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (2003) (դիմում № 44306/98)
- *ARM Chappell-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (1987) (դիմում № 12587/86)
- *Axen-ն* ընդդեմ Գերմանիայի (1983) (դիմում № 8273/78)
- *Baczkiwski and Others-ն* ընդդեմ Ֆրանսիայի (դիմում № 1543/06)
- *Chzssagnou and Others-ն* ընդդեմ Ֆրանսիայի (1999) (դիմում № 25088/94, 28331/95, 28433/95)
- *Christian Democratic Peapel's party-ն* ընդդեմ Սուդանի
- *Chorherr-ն* ընդդեմ Ավստրիայի (1993) (դիմում № 13308/87)
- *Ciraklar-ն* ընդդեմ Թուրքիայի (2003) (դիմում № 10019601/92)
- *Cisse-ն* ընդդեմ Ֆրանսիայի (1991) (դիմում № 51346/99)
- *Djavit An-ն* ընդդեմ Թուրքիայի (2003) (դիմում № 20625/92)
- *Ezelin-ն* ընդդեմ Ֆրանսիայի (դիմում № 11800/85)
- *Freedom and Democracy Party (Ozdep)-ն* ընդդեմ Թուրքիայի (1999) (դիմում № 23885/94)
- *Friedl-ն* ընդդեմ Ավստրիայի (1995) (դիմում № 15225/89)
- *G-ն* ընդդեմ Գերմանիայի (1989) (դիմում № 13079/87)
- *Greece-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (1958-1959) (№ 176/56) № yearbook European Commission of Human Rights
- *Gulec-ն* ընդդեմ Թուրքիայի (1998) (դիմում № 21593/93)
- *Guneri and Others-ն* ընդդեմ Թուրքիայի (2005) (դիմում № 42853/98, 43609/98, 44291/98)
- *Guenat-ն* ընդդեմ Շվեյցարիայի (1995) (դիմում № 24722/94)
- *Gustafsson-ն* ընդդեմ Շվեդիայի (1996) (դիմում № 15573/89)
- *Guzzardi-ն* ընդդեմ Իտալիայի (1980) (դիմում № 7367/76)
- *Handyside-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (1976) (դիմում № 5493/72)

- *Haas-ն* ընդդեմ *Նիդեռլանդների* (2004) (դիմում № 5493/72)
- *Hashman and Harrup-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (1999) (դիմում № 25594 /94)
- *Herbecqand Another-ն* ընդդեմ *Բելգիայի* (1998) (դիմում № 32200 96, 32201 96)
- *Incal-ն* ընդդեմ *Թուրքիայի* (1998) (դիմում № 22678/93)
- *Jordan-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (2001) (դիմում № 24746/94)
- *Koya-ն* ընդդեմ *Թուրքիայի* (1998) (դիմում № 22729/93)
- *Kelly and Others-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (2001) (դիմում № 300054/96)
- *Lawless-ն* ընդդեմ *Իռլանդիայի* (1961) (դիմում № 332/53)
- *Leander-ն* ընդդեմ *Շվեյցարիայի* (1986) (դիմում № 9248/81)
- *Mammedov (Jalaloglu)-ն* ընդդեմ *Ադրբեջանի* (2007) (դիմում № 34445/04)
- *McShane-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (2002) (դիմում № 43290/98)
- *Սկրչյանն* ընդդեմ *Հայաստանի* (2007) (դիմում № 6562/03)
- *Moreno Gomez-ն* ընդդեմ *Իսպանիայի* (2004) (դիմում № 4143/02)
- *Muller and Others-ն* ընդդեմ *Շվեյցարիայի* (1998) (դիմում № 10737/84)
- *Nachova and Others-ն* ընդդեմ *Բուլղարիայի* (2005) (դիմում № 43577/98, 43579/98)
- *Norris-ն* ընդդեմ *Իռլանդիայի* (1988) (դիմում № 10737/84)
- *Observer and Guardian-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (1991) (դիմում № 13585/88)
- *Ollinger-ն* ընդդեմ *Ավստրիայի* (2006) (դիմում № 76099/01)
- *Osman-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (1998) (դիմում № 23452/94)
- *Otto-Preminger-Institute-ն* ընդդեմ *Ավստրիայի* (1994) (դիմում №1 3470/87)
- *Perry-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (2003) (դիմում № 63737/00)
- *P.G. and J.H.-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (2001) (դիմում № 44787/98)
- *Plattform "Artze fur deas Lebeb"-ն* ընդդեմ *Ավստրիայի* (1988) (դիմում № 10126/82)
- *Rai, Almond and Negotiate Now-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (1995) (դիմում № 25522/94)
- *Rassemblement Jurassien aunité Jurassienne-ն* ընդդեմ *Շվեյցարիայի* (1979) (դիմում № 8191/78)
- *Refah Partisi (the Welfare Party)-ն* ընդդեմ *Թուրքիայի* (2003) (դիմում № 41340/98, 41342/98, 41343/98)
- *Rekvenyi-ն* ընդդեմ *Հունգարիայի* (1999) (դիմում № 25390/94)
- *Rotaru-ն* ընդդեմ *Ռումինիայի* (2000) (դիմում № 28341/95)
- *Shanaghan-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (2001) (դիմում № 37715/97)
- *Simsek-ն* ընդդեմ *Թուրքիայի* (2005) (դիմում № 35072/97, 37194/97)
- *Stankov and the United Macedonia Organization Ilinden-ն* ընդդեմ *Բուլղարիայի* (1998) (դիմում № 29221/95 29225/95)
- *Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն* ընդդեմ *Բուլղարիայի* (2001) (դիմում №№ 29221/95, 29225/95)

- *Steel-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (1998) (դիմում № 9415/81)*
- *Thlimmenos-ն ընդդեմ Հունաստանի (2000) (դիմում № 34369/97)*
- *Tsonev-ն ընդդեմ Բուլղարիայի (2006) (դիմում № 45963/99)*
- *X and Y-ն ընդդեմ Նիդեռլանդների (1985) (դիմում № 8978/80)*
- *Zilibberger-ն ընդդեմ Մոլդովայի (2004) (2005) (դիմում № 61821/00) ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե*

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե

- *Kivenmaa-ն ընդդեմ Ֆինլանդիայի (1994) CCPR/C50/D/412/1990*
- *Nichola Toonen-ն ընդդեմ Ավստրալիայի (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (դիմում № 488/1992, UN Doc CCPR/C/50/D/488/1992 (04/04/94)*
- *Patric Coleman-ն ընդդեմ Ավստրալիայի (2006) CCPR/C/87/D/1157/2003 Communication (դիմում № 1157/2003: Ավստրալիա 10/08/2006*
- *Ernst Zundel-ն ընդդեմ Կանադայի, Communication դիմում № 953/2000, Un Doc. CCPR/C/58/D953/2000 (2003)*
- *Robert Faurisson-ն ընդդեմ Ֆրանսիայի Communication դիմում № 550/1993, UN Doc. CCPR/C/58/D550/1993 (1996)*

Ազգային նախադեղային իրավունք

Վրաստան

- *Վրաստանի Երիտասարդ իրավաբանների ընկերակցությունը Չաալ Տկեժելաժավիլին, Լելա Գուրաժավիլին և այլք ընդդեմ Վրաստանի խորհրդարանի (5 նոյեմբերի 2002) N2/2/180-183*

Քերմանիա

- *BVerfGE 73,206 (11 նոյեմբերի 1986)*
- *BVerfGE 92,1*
- *BVerfGE104,92 (FN 20&33)*
- *BVerfGE 69,315 (Brokdoef-ի գործով վճիռ), 14 սայիսի 1985*
- *BVGE 63, 115 (353, 354)*

Իսրայել

- *Sa'ar v. Ministry of Interior and Police (1979) 34 (II) PD 169*

Նիգերիա

- *All Nigeria Peoples Party-ն ընդդեմ Inspector General of Police (24 հունիսի 2005) (Fed HC (Nig))*

Լեհաստան

- *Judgment of the Polish Constitutional Tribuna, 18 հունվարի 2006, K21/05, Requirement to Obtain Permission for an Assembly on a Public Road, English trans-*

lation available at http://www.trybunal.gov.pl/eng/summaries/documents/K_21_05_GB.pdf

Միացյալ Թագավորություն

- *Austin-ն ընդդեմ Metropolitan Police Commissioner-ի (2005) EWHC 480 (QB)*
- *Gillan-ն ընդդեմ Commissioner for Police for the Metropolies & Another-ի (2006) Միացյալ Թագավորություն, HL 12 (8 մարտի 2006)*
- *Nicol and Selvanayagam-ն ընդդեմ Director of Public Prosecutions-ի (1996) Justice of the Peace Reports 155*

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

- *Collin-ն ընդդեմ Chicago Park District-ի, 460 F.2d 746 (7th Cir., 1972)*
- *Hague-ն ընդդեմ Committee for Industrial Organization-ի, 307 US 496 (1939)*
- *Schnider-ն ընդդեմ State-ի, 308 US 147 (1939)*
- *Texas-ն ընդդեմ Johanson, 491 US 297 (1989)*

Ջամբիա

- *Mulundika and Others-ն ընդդեմ The People-ի, Supreme Court, Zambia, 1 BHRC 199 (10 հունվարի 1996)*

Հավելված Բ.

Հիմնական եզրույթների անգլերեն-հայերեն բառարան

Այս բառարանը բացատրում է Ուղեցույցում տեղ գտած հիմնական եզրույթներն ու հասկացությունները և տալիս է դրանց հայերեն թարգմանությունը: Բացատրությունները վերցված են պաշտոնական կամ այլ հեղինակավոր աղբյուրներից և ճշգրտված են:

Այն դեպքերում, երբ եզրույթն Ուղեցույցում օգտագործված է ոչ ընդունված իմաստով, նման դեպքերում բառարանում տրվում է Ուղեցույցի տեքստին առավել մոտ բացատրությունը:

ԺՅՄԻԳ-ը խորհուրդ է տալիս օգտվել Marriam-Webster բառարանից որոշ բառերի իմաստին ծանոթանալու համար:

Անգլերեն եզրույթ	Բացատրություն	Հայերեն եզրույթ
Accountability	Գործողությունների պատասխանատվությունն ընդունելու պարտավորություն	Հաշվետվողականություն
Assembly	Մի խումբ մարդկանց միտումնավոր և ժամանակավոր ներկայություն հասարակական տարածքում՝ հետապնդելով ընդհանուր նպատակ	Հավաք
Authorization	Թույլտվություն (տրված հիմնականում գրավոր ձևով)	Թույլտվություն, սանկցիա
Blanket (e.g. ban, restriction)	Ուժի մեջ և կիրառելի բոլոր իրավիճակներում	Ավտոմատ կերպով գործող (օրինակ՝ արգելք, սահմանափակում)
“Clear and present danger”	Սկզբունք, որը թույլ է տալիս սահմանափակումներ կիրառել միայն այն դեպքում, երբ հավաքի մասնակիցները կոչ են անում անհապաղ ոչ օրինական գործողությունների, և գոյություն ունի այդ գործողության իրական վտանգ:	Անմիջական վտանգի ընդգծված առկայության վերլուծություն

Concurring assembly (principle of)	Հավաք, որը տեղի է ունենում նույն վայրում և ժամանակ, ինչ և մեկ այլ հավաք, և որում հնչած կարծիքները չեն հակասում մյուս հավաքում արտահայտված գաղափարներին	Հավաք, որը չի հակասում մեկ այլ հավաքի
Content neutrality	Սկզբունք, որն արգելում է կարծիքն ազատ արտահայտելու սահմանափակում միայն ասելիքի բովանդակության հիման վրա	Բովանդակության նկատմամբ չեզոք մոտեցում
Content-based restrictions	Կարծիքի արտահայտման սահմանափակում դրա բովանդակության պատճառով	Բովանդակության սահմանափակում
Counter-demonstration	տե՛ս Dissenting assembly	տե՛ս Dissenting assembly
Data retention	Գրանցված տեղեկատվության պահպանություն կամ արխիվացում՝ անկախ դրա գրանցման ձևից	Տվյալների պահպանություն
Demonstration	Մարդկանց խմբի վերաբերմունքի արտահայտություն ինչ-որ անձի կամ խնդրի նկատմամբ	Ցույց
Derogation	Նորմերի մասնակի չեղյալ հայտարարում	Պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումից ժամանակավոր հրաժարում
Dispersal	Հավաքի դադարեցում՝ ուժի միջոցով	Ցրում
Disruption	Միջոցառման նորմալ ընթացքի ընդհատում	Ընդհատում
Dissenting assembly	Հավաք, որը կազմակերպվել է ի նշան անհամաձայնության մեկ այլ հանրահավաքում արտահայտվող տեսակետների և տեղի է ունենում այդ հավաքի հետ նույն կամ գրեթե նույն վայրում ու ժամանակ	Հավաք, որն անցկացվում է ի նշան անհամաձայնության մեկ այլ հավաքի, հակընդդեմ հավաք

Human rights defender	Անձինք, խմբեր կամ հասարակական ինստիտուտներ, որոնք աշխատում կամ գործում են հանուն հանրաճանաչ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության	Մարդու իրավունքների պաշտպան
Liability	Մարդու վիճակ, երբ մեկը օրենքով և արդարադատությամբ պարտավորված է կատարել գործողություններ, որոնց կատարումը կարող է պարտադրվել դատական կարգով	Պատասխանատվություն (նաև մեղքի համար)
Marshal	տե՛ս Steward	Կարգադրիչ, ըստ ՀՀ օրենսդրության՝ կամավոր կազմակերպիչ
Monitor	տե՛ս Observer	Մոնիթորինգ իրականացնող, դիտորդ
National security	Պետության՝ արտաքին և ներքին ապակառուցողական կամ թշնամական գործողություններին դիմակայելու կարողություն կամ վիճակ	Ազգային անվտանգություն
Non-lethal weapons	Ձեռք, որի նպատակն է թիրախը վնասագերծել, այլ ոչ թե սպանել կամ լուրջ վնասվածքներ հասցնել	Հատուկ միջոցներ
Non-nationals	Անձինք, ովքեր տվյալ պետության քաղաքացի չեն	Քաղաքացիություն չունեցողներ
Notification	Իրազեկում, որով տեղյակ է պահվում նախատեսվող հավաքի մասին և թույլտվության խնդրանք չէ	Իրազեկում
Observer	Անձ, ով անկողմնակալ հետևում և զեկույց է պատրաստում հավաքի ընթացքի մասին	Դիտորդ
Organizer	Անձ կամ անձինք, ովքեր հիմնական պատասխանատվություն են կրում հավաքի համար	Կազմակերպիչ

Parade	տն՛ս Procession	Շքերթ
Participant	Անձ, ով գիտակցաբար և կամավոր ներկա է հավաքին և հավանություն է տալիս հավաքի ասելիքին	Մասնակից
Peaceful enjoyment of one's possessions (right to)	Սեփականության և դրա դեմ ոտնձգությունից պաշտպանության իրավունք	Սեփական ունեցվածքը հարգելու իրավունք
Penalty	Օրենքով սահմանված պատիժ՝ օրենքը խախտելու համար	Պատժամիջոց
Peremptory norm	Միջազգային իրավունքի նորմ, որն ամբողջությամբ ընդունված է միջազգային ընկերակցության պետությունների կողմից: Անառարկելի նորմը համաձայնեցման կարիք չունի և խախտելու իրավունք չունի որևէ անդամ պետություն	Անառարկելի նորմ, ընդհանուր ճանաչման նորմ
Permit	Կարգավորիչ մարմնի պաշտոնական համաձայնությունը հավաք անցկացնելու վերաբերյալ	Թույլտվություն
Presumption in favor of holding assemblies	Ենթադրություն, որ հավաքը կարող է անցկացվել, եթե առկա չեն հավաքն արգելելու կամ սահմանափակումներ կիրառելու հիմնավոր պատճառներ	Կանխավարկած հօգուտ հավաքի անցկացման
Prior restraint	Սահմանափակումներ, որ դրված են նախքան միջոցառումն անցկացվելը	Նախնական սահմանափակում
Procession	Հավաք, որ շարժվում է հանրային ճանապարհներով: Երթին կարող են մասնակցել տրանսպորտային և տեղաշարժման այլ միջոցներ	Երթ

Proportionality (principle of)	Սկզբունք, որ պահանջում է, որ օրինական նպատակին հասնելու համար իշխանությունների կողմից նախապատվությունը տրվի միջամտության ամենավազ ձևին	Համաթեքություն
Protection of health and morals	Վերաբերում է հանրային առողջությանն ու բարոյականությանը	Առողջության և բարոյականության պաշտպանություն
Protection of rights and freedoms of others	Այլ անձանց իրավունքներին և ազատություններին միջամտելու կանխում	Այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանություն
Public order	Հասարակական վայրերի անվտանգությունը	Հասարակական կարգ
Public safety	Լայն հասկացություն, որը ներառում է հասարակության պաշտպանություն տարբեր տեսակի խոշոր վնասներից կամ վտանգներից, ներառյալ արտակարգ իրավիճակներում	Բնակչության անվտանգություն
Public space	Տարածք կամ վայր (օրինակ՝ փողոց, զբոսայգի), ուր յուրաքանչյուրի ելքն ու մուտքն ազատ են	Հասարակական վայր
Rally	Կանգնած ցույց	Հանրահավաք
“Reasonable excuse”	Պաշտպանության սկզբունք, որի դեպքում օրենքին չենթարկվելու պատճառը ոչ թե դիտավորությունն է, այլ օրենքին ենթարկվելու անհնարիությունը	Օրենքին ենթարկվելու օբյեկտիվ արգելքների վրա հիմնված պաշտպանություն
Regulatory authority	Մարմին, որը հանրահավաքների վերաբերյալ որոշումներ է կայացնում	Կարգավորիչ մարմին
Riot control	Անկառավարելի ամբոխի բռնի գործողությունները վերահսկողության տակ վերցնելու միջոցներ	Ձանգվածային անկարգությունները կանխելու միջոցառումներ

Risk assessment	Պոտենցիալ վնասի մեծության և այդ վնասի աստիճանի հավանականության աստիճանի գնահատում	Ռիսկի գնահատում
Sanction	Օրենքին ենթարկվելու ապահովելու նպատակով ձեռնարկված հարկադիր միջոցներ	Հարկադրանքի միջոցներ
Simultaneous assemblies	Երկու կամ ավելի հավաքներ, որ տեղի են ունենում միևնույն ժամանակ և միևնույն վայրում	Միաժամանակյա հավաքներ
Sit-in	Անշարժ ցույց, որի ժամանակ մասնակիցները նստում են որևէ վայրում և հրաժարվում են այնտեղից հեռանալ	Նստացույց
Spontaneous assembly	Հավաք, որ տեղի է ունենում առանց նախնական իրազեկման	Ինքնաբերական հավաք
Steward	Անձ, որն աշխատում է հավաքի կազմակերպիչների հետ համատեղ՝ օժանդակելու միջոցառման անցկացմանը և օգնելու, որ այն անցնի օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան	Կարգադրիչ, ըստ ՀՀ օրենսդրության՝ կամավոր կազմակերպիչ
Supporter	Անձ, որը գտնվում է հավաքի վայրի մոտակայքում և կիսում է այնտեղ արտահայտված մտքերը	Աջակից
Unlawful assembly	Հավաք, որն անցնում է օրենքի խախտումներով	Ոչ օրինական հավաք
Use of force	Որպես հարկադրման միջոց ֆիզիկական ուժի գործադրումը	Ուժի գործադրում
Violence	Ապօրինաբար կամ չարաշահմամբ գործադրվող ֆիզիկական ուժ	Բռնություն

Հավելված Գ. Փորձագետների խորհուրդ

Նիլ Ջարման (Փորձագետների խորհրդի նախագահ, Միացյալ Թագավորություն)

Նիլ Ջարմանը Բելֆաստի Հակամարտությունների ուսումնասիրության ինստիտուտի (Հյուսիսային Իռլանդիա, Միացյալ Թագավորություն) տնօրենն է: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է առաջին հերթին խաղաղարար գործունեությունը և հակամարտությունների մեղմումը՝ հանրային հավաքների, դրանց ժամանակ հասարակական կարգի պահպանությունը և բռնություններին ու հասարակական անկարգություններին համայնքի արձագանքման հարցերին հատուկ ուշադրությամբ: Նա եղել է Հյուսիսային Իռլանդիայում ատելության հողի վրա հանցագործությունների Հյուսիսային Իռլանդիայի գործերի հանձնաժողովի փորձագետ-խորհրդատու: Հեղինակ է բազմաթիվ հրապարակումների այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին են հասարակական կարգի պահպանությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, բախումների կարգավորումը և ատելության հողի վրա հանցագործությունների դեմ պայքարը:

Նինա Բեյլան (Ռուսաստանի Դաշնություն)

Նինա Բեյլանն Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց-պետական համալսարանի հանրային քաղաքականության ամբիոնի վարիչն է: Համալսարանը արևմտյան տիպի առաջին համալսարանն է Ռուսաստանում, որ ստեղծվել է Եվրամիության և Եվրոպական միքանի համալսարանների աջակցությամբ 1992 թվականին: Նրա գիտական ուսումնասիրությունները վերաբերում են քաղաքացիական մասնակցության տարբեր ձևերի իրավական կարգավորմանը և քաղաքացիական հասարակության-պետություն փոխհարաբերությունների իրավական ձևերին: Նա 1995 թ. ընդունված Ռուսաստանի Դաշնության «Հասարակական միությունների մասին» օրենքի հիմնական հեղինակն է, որը մեծ արձագանքի և մեկնաբանությունների արժանացավ միջազգային հանրության կողմից՝ վերջերս կատարված փոփոխություններից հետո, որոնցով նոր սահմանափակումներ են դրվում ՀԿ-ների գործունեության վրա: Լինելով ՀԿ-ների ճանաչված մասնագետ և ՀԿ-ների գործունեության նորարարական ձևերի կազմակերպիչ, նա նաև «Մենք՝ քաղաքացիներս» ՀԿ-ների միջազգային կոալիցիայի կոորդինացիոն խորհրդի նախագահն է և քաղաքական ու իրավական հետազոտությունների «Ինտերլիգալ» հիմնադրամի նախագահը:

Մասնակցել է բազմաթիվ ազգային և տարածաշրջանային օրենքների մշակման աշխատանքային խմբերին, ինչպես նաև Եվրամիության և Համաշխարհային բանկի CIVICUS-ի հիմնած փորձագիտական խմբերին, որոնց նպատակն է հաշվառել կուտակված լավագույն փորձը և մշակել օրենսդրական մոդելներ քաղաքացիական հասարակության և քաղաքացիական հասարակության ու պետական մարմինների փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում:

Դևիթ Գոլդբերգեր (Միացյալ Նահանգներ)

Դևիթ Գոլդբերգերը Օհայոյի պետական համալսարանի իրավունքի պրոֆեսոր է: Նրա դասավանդած դասընթացներից է ԱՄՆ Սահմանադրության առաջին ուղղումը, ԱՄՆ Սահմանադրության ընդհանուր դասընթացը և գործնական հմտությունների դասընթաց, որի ընթացքում նա ղեկավարում է իրավաբանական ֆակուլտետի բարձր կուրսերի այն ուսանողների աշխատանքը, ովքեր ներկայացնում են հաճախորդների շահերը դատարանում: Նրա գիտական աշխատությունները վերաբերում են ԱՄՆ Սահմանադրությամբ ամրագրված խոսքի ազատության իրավունքի երաշխիքներին: Նախքան գիտությամբ ու մանկավարժական գործունեությամբ զբաղվելը նա ԱՄՆ քաղաքացիական ազատությունների միության Իլինոյսի բաժանմունքի իրավաբանական բաժնի ղեկավարն էր: Մասնագիտացել է խոսքի ազատությանն առնչվող գործերով: Նրա հաճախորդներից են եղել Վիետնամի պատերազմի դեմ բողոքի ակցիայի մասնակից ցուցարարները, Ամերիկայի Ազգային սոցիալիստական կուսակցությունը (Իլինոյսի Սկոկի քաղաքում ցույցի թույլտվություն ստանալու համար), Իլինոյսի կոմունիստական կուսակցությունը և Կու Կլուքս Կլանը: Նա նաև ներկայացրել է համապետական և տեղական ընտրություններում խոշոր կուսակցությունների թեկնածուների շահերը:

Մուսար Ս. Խայդարովա (Տաջիկստան)

Մուստար Ս. Խայդարովան Տաջիկստանի Շահույթ չիետապնդող կազմակերպությունների իրավունքի միջազգային կենտրոնի իրավական խորհրդատուն է և «Հասարակություն և իրավունք» ՀԿ նախագահը: Հեղինակ է մի շարք հրապարակումների, որոնք վերաբերում են քաղաքացիական ազատություններին, կրոնին և իրավունքին, պետությանը և իրավունքին:

Սերգեյ Օսաֆ (Մոլդովա)

Սերգեյ Օսաֆը Մարդու իրավունքների ռեսուրս կենտրոնի տնօրենն է, կազմակերպություն, որի ջանքերն ուղղված են քաղաքացիական հասարակության հաստատությունների կարողությունների զարգացմանը, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեն պաշտպանելու Մոլդովայի ժողովրդավարական զարգացումը և խթանեն երկրում ժողովրդավարական քաղաքականության հաստատումը: Կազմակերպությունն առաջարկում է փոփոխության վրա հիմնված խորհրդատվություն և անցկացնում հետազոտություններ, ինչպես նաև իրականացնում է իրավապաշտպան գործունեություն: Օսաֆը մասնակցում է Մոլդովայում մարդու իրավունքների պաշտպանության, Եվրոպայի խորհրդում լոբբինգի, ՄԱԿ-ի և ԺՅՄԻԳ-ի մարդու իրավունքների հարցերով զբաղվող մարմինների աշխատանքներին՝ կատարելով քաղաքականության հետազոտություն, մոնիթորինգ, պատրաստելով հարակից հաշվետվություններ, մարդու իրավունքի ուսնահարման դեպքերը ներկայացնելով ազգային և Մարդու իրավունքների եվրոպական դատարան (արտահայտման ազատություն, հավաքների ազատություն, դավանանքի ազատություն, անձնական ազատություն, գաղտնիության և հարկադիր աշխատանքի հետ

առնչվող գործեր): Ներկայումս նա աշխատում է կառավարության կողմից ժողովրդավարական քաղաքականությունների որդեգրմանն ուղղված լոբբինգի ուղղությամբ՝ կառավարությանը խորհրդատվություն տրամադրելով այդ քաղաքականություններն արդյունավետ կիրառելու վերաբերյալ իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներն օգտագործելով: Նա նաև մագիստրատուրայում դասընթացներ է կարդում հանրային քաղաքականության, քաղաքական գործընթացների վերլուծության և ժողովրդավարական քաղաքականության իրականացման թեմաներով:

Վարդան Պողոսյան (Հայաստան)

Վարդան Պողոսյանը «Ժողովրդավարություն» ՀԿ-ի հայաստանյան վերլուծական - հետազոտական կենտրոնի հիմնադիրն է, որի ուշադրության կենտրոնում իրավական և քաղաքական վերլուծություններն են: Նա նաև Հայաստանում GTZ-ի իրավական խորհրդատվության ծրագրի համակարգողն է: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակի մեջ են մտնում սահմանադրական և վարչական օրենքի, ինչպես նաև քաղաքական համակարգերի համեմատական վերլուծությունը: Նա մասնակցել է Հայաստանի մի շարք օրինագծերի մշակմանը, ներառյալ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքի մշակման աշխատանքային խմբի աշխատանքներին, ինչպես նաև մասնակցել է սահմանադրական փոփոխությունների և Վարչական վարույթի մասին օրենքի մշակմանը:

Անջեյ Ժեդլինսկի (Լեհաստան)

Անջեյ Ժեդլինսկին Վարչավայի համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ֆակուլտետի իրավաբանության պրոֆեսոր է: Մասնագիտացել է հիմնարար իրավունքների ու ազատությունների, ամբողջատիրական ռեժիմների գործած ոճիրների, ոստիկանության և անվտանգության ծառայությունների գործունեության վերաբերյալ օրենքներում, որոնց վերաբերյալ նա բազմաթիվ աշխատություններ է հեղինակել: Նա Մարդու իրավունքների Հելսինկյան հիմնադրամի, Մարդու իրավունքների Հելսինկյան միջազգային ֆեդերացիայի և Իրավաբանների միջազգային հանձնախմբի լեհական բաժանմունքի տնօրենների խորհրդի անդամ է: Նա նաև Եվրոպայի խորհրդի փորձագետ է՝ դատավորների վերապատրաստման և արտահայտման ազատության իրավունքի սոցիոլոգիական գծով:

Ալեքսանդր Վաեկևիչ (Բելառուս)

Պոկտոր Ալեքսանդր Վաեկևիչը Բելառուսի պետական համալսարանի միջազգային իրավունքի ֆակուլտետի դասախոս է, Բելառուսի սահմանադրական դատարանի նախկին դատավոր: Դասավանդում է համեմատական սահմանադրական իրավունք և եվրոպական մարդու իրավունքների օրենք՝ բազմաթիվ աշխատություններ նվիրելով մարդու իրավունքների հարցերին: Նա ուսումնասիրում է Բելառուսի ազգային օրենսդրության համապատասխանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Եվգենի Ա. Ժովսիս (Ղազախստան)

Եվգենի Ա. Ժովսիսը Ղազախստանի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության միջազգային բյուրոյի ղեկավարն է և «Ինտերլիգալ» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ: Փաստաբանական գործունեության հարուստ փորձ ունի: Նրա հիմնական հետաքրքրությունների ոլորտի մեջ են մտնում քաղաքացիական ազատությունների հիմնախնդիրները:

Մայլ Գամիլթոն (Փորձագետների խորհրդի ֆարսուղար, Միացյալ Թագավորություն)

Դոկտոր Մայլ Գամիլթոնը Մարդու իրավունքների դասախոս է Անցումային արդարադատության ինստիտուտում (Օլսթերի համալսարան): Նա ուսումնասիրում է հանրային բողոքների իրավական կարգավորումն ու միջնորդությունը, մասնավորապես Զյուսիսային Իռլանդիայում շքերթներ անցկացնելու շուրջ տարածայնությունների վերաբերյալ:

Ծանոթագրություններ

- 1 Տե՛ս CDL-AD (2005)040 փաստաթուղթը Հավաքների ազատությանը վերաբերող ուղեցույցի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի օրենքների մշակման մասին, որ հավանության է արժանացել Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ 64-րդ լիազումար նստաշրջանի ժամանակ, 2005 թ. հոկտեմբերի 21-22-ը: Հարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովի անդամներից մեկը (Պետեր Պոլզոլեյ, Հունգարիա) մասնակցել է Վարչավայում տեղի ունեցած կլոր սեղանին, այն չորս կլոր սեղաններից մեկին, որի ժամանակ ուղեցույցը քննարկվել է:
- 2 Սկզբունքորեն հիմնական ստանդարտներն արտացոլված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, ինչպես նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնախմբի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի օրենքներում:
- 3 Ներառյալ ԵԱՀԿ անդամ և անդամ չհանդիսացող երկրների սահմանադրական դատարանները:
- 4 Տե՛ս, օրինակ՝ Baczkowski and others-ն ընդդեմ Լեհաստանի (2006) էջ 5. «Սահմանադրությունը հստակորեն երաշխավորում է հավաքների ազատությունը և ոչ թե իրավունքը: Պետությունը չէ, որ պետք է ստեղծի հավաքների իրավունք: Նրա պարտավորությունը սահմանափակված է հավաքների խաղաղ ընթացքն ապահովելով»:
- 5 Տաջիկստանի օրենքը, օրինակ՝ «մասնակցին» սահմանում է որպես անձի կողմից միջոցառման նպատակին աջակցություն:
- 6 ՔՔԻՄԴ-ի հոդված 22 և ՄԻԵԿ-ի հոդված 11:
- 7 Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի հոդված 17, որը բխում է ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի կետ 32.4-ից և 32.6-ից:
- 8 ՔՔԻՄԴ-ի հոդված 19 (2) և (3) և ՄԻԵԿ-ի հոդված 10: Արտահայտման ազատությունը ներառում է տեսակետներ ունենալու ու տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և տարածելու ազատություն՝ առանց հանրային իշխանությունների միջամտության և անկախ սահմաններից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաճախ նշել է, որ հավաքների ազատությունը և արտահայտման ազատությունը գործնականում սերտորեն փոխկապակցված են: Տե՛ս, օրինակ՝ Ezeliin-ն ընդդեմ Ֆրանսիայի (1991), կետ 37, 51; Djavit An-ն ընդդեմ Թուրքիայի (2003) կետ 39; Christian Democratic People's Party-ն ընդդեմ Մոլդովայի (2006), կետ 62; Ollinger-ն ընդդեմ Ավստրիայի (2006), կետ 38:
- 9 ՔՔԻՄԴ-ի հոդված 18 և ՄԻԵԿ-ի հոդված 9:
- 10 Տե՛ս ՄԱԿ-ի Տեսակետի և արտահայտման գծով հատուկ զեկուցողի, ԵԱՀԿ լրատվամիջոցների ազատության հարցերի ներկայացուցչի և OAS արտահայտման ազատության գծով հատուկ զեկուցողի միացյալ հայտարարությունը Ռասիզմի և լրատվամիջոցների վերաբերյալ: Տե՛ս նաև «Բողոքելու իրավունքը, մարդու իրավունքների ակտը և Թույլատրելի հայեցողության շրջանակը», *Modern Law Review*, Vol. 62, 1999:
- 11 *Op. cit.*, հոդված 1, կետ 12:
- 12 ՔՔԻՄԴ-ը սահմանում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների համընդհանուր ճանաչում գտած նվազագույն չափորոշիչներ: Դաշնագիրը վավերացնող կամ դրան միացող պետությունները համարվում են պարտավորություններից ազատված այն պահից, երբ պետությունը դառնում է ՔՔԻՄԴ-ի կողմ: ՔՔԻՄԴ-ի իրականացումը կողմ երկրների կողմից ենթարկվում է մոնիթորինգի անկախ փորձագետների՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից: Կողմ երկրները պետք է կոմիտեին պարբերաբար հաշվետվություններ ներկայացնեն այն մասին, թե ինչպես են իրավունքներն իրականացվում: Ի հավելումն հաշվետվությունների ընթացակարգի՝ դաշնագիրը կոմիտեին է ներկայացնում միջպետական բո-

- ղոքները: Ավելին՝ ՔՔԻՄԴ-ի առաջին կանընտիր արձանագրությունը կոմիտեին լիազորություններ է շնորհում քննելու անհատական բողոքները՝ կապված կողմ երկրների կողմից դաշնագրի ենթադրյալ խախտումների հետ:
- 13 ՄԻԵԿ-ը եվրոպական տարածաշրջանում մարդու իրավունքներին վերաբերող ամենամաքուղջական ու ամենահեղինակավոր համաձայնագիրն է: Այդ համաձայնագիրը բաց է ստորագրման համար սկսած 1950 թվականից: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրները պարտավոր են վավերացնել կոնվենցիան երկրի՝ Եվրոպայի խորհրդի կառույցներին անդամակցելու մեկ տարվա ընթացքում: ՄԻԵԿ-ը առաջադրում է մի շարք հիմնարար իրավունքներ ու պարտավորություններ, և կոնվենցիայի կողմերը երաշխավորում են այդ իրավունքներն ու ազատությունները իրենց իրավասության ներքո բոլոր գտնվողների համար: Անհատական և միջպետական բողոքները քննարկվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում՝ Ստրասբուրգում: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի խնդրանքով դատարանը կարող է խորհրդատվական կարծիք հայտնել ՄԻԵԿ-ի և դրա արձանագրությունների մեկնաբանման վերաբերյալ:
- 14 Ինչպես նշված է Ամերիկյան կոնվենցիայի հոդված 44-ում, «...ցանկացած անձ կամ անձանց խումբ, կամ Կազմակերպությանն անդամակցող մահանգներից (ամերիկյան) մեկի կամ մի քանիսի կողմից ճանաչված ոչ պետական միավորը կարող է (մարդու իրավունքների) հանձնաժողովին բողոք ուղղել պետական մարմնի կողմից կոնվենցիայի խախտման կամ անտեսման վերաբերյալ»:
- 15 Օրինակ՝ Stankov and the Macedonian Organization of Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԿ) դատավարությունից հետո (2001), Բուլղարիայի արդարադատության նախարարությունը ՄԻԵԿ-ի վճիռը թարգմանեց բուլղարերեն և կից շրջաբերական գրությամբ ուղարկեց գործին առնչվող քաղաքների քաղաքապետներին: Դատարաններին և հասարակությանը այս նոր պարտադիր մեկնաբանության մասին իրազեկելու նպատակով դատարանը վճիռի բուլղարերեն թարգմանությունը զետեղեց իր կայքում՝ <http://www.mjeli.government.bg/>: Տե՛ս Human Rights Information Bulletin, No 64,1 դեկտեմբերի 2004-28 փետրվարի 2005, էջ 49-50: Կարելի է կարդալ՝ http://www.coe.int/T/E/Human_Rights/hrib642.pdf:
- 16 Օրինակ՝ ՄԱԿ-ի «Յանրաճանաչ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները խթանելու և պաշտպանելու ուղղությամբ անհատների, խմբերի ու հասարակության մարմինների իրավունքներն ու պարտականությունները» հռչակագիրը նշում է, որ «...մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության նպատակով յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլոց հետ միություն կազմելով ազգային և միջազգային մակարդակներում ... խաղաղ կերպով հանդիպելու կամ հավաքվելու»: ԵԱԿԿ 1990 թ. փարիզյան խարտիան մույնպես սահմանում է, որ «առանց խտրակալության յուրաքանչյուր անձ իրավունք ունի մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատության, արտահայտման, միություններ կազմելու և խաղաղ հավաքներ անցկացնելու ազատության»:
- 17 Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդհանուր սահմանափակումներին նվիրված հոդված 29-ը:
- 18 Տե՛ս, օրինակ՝ Ciraklar-ն ընդդեմ Թուրքիայի (1998), Plattform “Arzte fur das Leben”-ն ընդդեմ Ավստրիայի (1988): Այսպիսով, եթե խաղաղ հավաքների ազատությունը տվյալ դեպքում համարվում է *lex specialis*՝ հատուկ օրենք, հավանական չէ, որ դատարանը կգտնի արտահայտման ազատության իրավունքի ոտնահարում, եթե միևնույն փաստերի հիման վրա արդեն որոշվել է, որ տեղի չի ունեցել խաղաղ հավաքի իրավունքի ոտնահարում: Այս հարցը շոշափվել է պրն Կուրտ Չեսնդլի կողմից Kivenmaa-ն ընդդեմ Ֆինլանդիայի (1994) CCPR/C/50/D/412/1990, կետ 3.5 գործի առնչությամբ արտահայտած հատուկ կարծիքում:
- 19 Otto Preminger – Institute-ն ընդդեմ Ավստրիայի (1994), կետ 47:
- 20 Տե՛ս նաև Manfred Nowak, ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին

- միջազգային դաշնագրի CCPR մեկնաբանությունները (Kehl, Strasburg, Arlington: Eagal Publisher, 1993), էջ 373. «Հավաք» տերմինը դաշնագրում ոչ թե սահմանվում է, այլ, ավելի շուտ՝ հասկացվում: Դետևաբար, այն պետք է մեկնաբանվի ազգային իրավական համակարգերում հաճախ օգտագործվող, ընդունված իմաստով՝ հաշվի առնելով այս ավանդական իրավունքի նպատակն ու խնդիրը: Կասկածից վեր է, որ ոչ բոլոր հավաքները կարիք ունեն հատուկ պաշտպանության: Միայն մի քանի անձանց միտումնավոր, ժամանակավոր, հատուկ նպատակ հետապնդող հավաքները կարող են պաշտպանվել հավաքների ազատությամբ»:
- 21 Տե՛ս Գերմանիայի սահմանադրական դատարանի որոշումները, որոնք վերաբերում են ռազմական օբյեկտների առաջ ճանապարհների արգելափակմանը:
- 22 Christians Against Racism and Fascism (CARAF)-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (1980) գործում եվրոպական հանձնաժողովն ընդունեց, որ «խաղաղ հավաքների ազատությունը վերաբերում է ոչ միայն կանգնած (ստատիկ) հավաքներին, այլ նաև հանրային երթերին» (էջ 148, կետ 4): Այս տեսակետը գերակշռել է նաև մի շարք հետագա գործերում, ներառյալ Plattform Arzte (1988) Ezelion-ն ընդդեմ Ֆրանսիայի (1991): Վերջին դեպքում ընդգծվել է, որ հավաքների ազատությունն իրականացվել է մասնավորապես հանրային երթին մասնակցող անձանց կողմից» (Հանձնաժողով, կետ 32):
- 23 Օրինակ՝ Մոլդովայում ստանդարտ թույլտվություն տրվում է երկու ամսով:
- 24 Սա բխում է Միացյալ Նահանգների «հանրային ֆորումների» դոկտրինից: Տե՛ս, օրինակ՝ Hague-ն ընդդեմ Արդյունաբերական կազմակերպության կոմիտեի, 307 US496 (1939):
- 25 34 (II) PD 169, էջ 177-78 Barak J.
- 26 Մասնավոր տարածքի սեփականատերը ավելի մեծ իրավասություն ունի որոշելու՝ թույլ տա՞լ, թե՞ ոչ իր տարածքն օգտագործել ելույթների համար, քան կառավարությունը: Սեփականատիրոջը ստիպել, որ թույլատրի իր տարածքը հավաքի համար օգտագործելը կարող է ոտնահարել նրա՝ անձնական կյանքի և ընտանիքի իրավունքը (ՄԻԵԿ, հոդված 8) կամ իրենց ունեցվածքը խաղաղությամբ վայելելու իրավունքը (ՄԻԵԿ-ի Արձանագրություն 1-ին, հոդված 1):
- 27 Djavit An-ն ընդդեմ Թուրքիայի (2003), կետ 56; Ressement Jurassien Unite Jurassienne-ն ընդդեմ Շվեյցարիայի (1979), էջ 119:
- 28 Տե՛ս, օրինակ՝ Don Mitchell, *The Right to the City: Social Justice and the Fight for Public Space* (New York: The Guilford Press, 2003), Margaret Kohn, *Brave New Neighborhoods: The Privatization of Public Space* (New York: Routledge, 2004); Kevin Gray and Susan Grey, "Civil Rights, Civil Wrongs and Quasi-Public Space", [1999] EHRLR 46; Fitzpatrick and Taylor, "Trespassers Might be Prosecuted: The European Convention and Restrictions on the Right to Assemble", [1998] EHRLR 292; Jacob Rowbottom, "Property and Participation: A Right to Access for Expressive Activities", [2005] 2 EHRLR 186-202.
- 29 Appleby-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (2003), կետ 39, Ozgur Gundem-ն ընդդեմ Թուրքիայի (2000), կետ 42-46 և Fuentes Bobo-ն ընդդեմ Իսպանիայի (2000), կետ 38: Cisse-ն ընդդեմ Ֆրանսիայի (2002) գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշեց, որ մտավորապես 200 ոչ օրինական ներգաղթյալներից բաղկացած խմբի տարհանումը, որոնք մի քանի ամիս զբաղեցրել էին Փարիզի եկեղեցիներից մեկը, չի որակվում որպես հայցվորի՝ խաղաղ հավաքի ազատության իրավունքի միջամտություն: Այս դեպքում միջամտությունը անիրաժեշտ է օրինաչափ էր առաջին հերթին առողջապահական նկատառումներով (տե՛ս կետ 52): Կիրառվող ազգային օրենքները սահմանում են, որ «Պաշտամունքի նպատակով անցկացվող հավաքները, որոնք տեղի են ունենում կրոնական ընկերությունների կամ նրանց պատկանող վայրերում, պետք է բաց լինեն հանրության համար: Նրանց առջև չպետք է հատուկ պահանջներ դրվեն, սակայն հանրային կարգուկանոնի շահերից ելնելով՝ պետք է մնան իշխանությունների հսկողության ներքո»:

- 30 Պարբերություն 47: Այս որոշումը կայացնելիս ՄԻԵԴ-ն ուսումնասիրեց նախադեպային օրենքը Կանադայում (կետ 31) և Ամերիկայի Միացյալ Նահանգներում (կետ 25-30 և 46): Դատարանը հաշվի առավ ա) իրավիճակների բազմազանությունը, որ կա պայմանագրի անդամ երկրներում, բ) առաջնահերթությունների ու միջոցների ընտրության անհրաժեշտությունը (հաշվի առնելով, որ դրական պարտավորությունները «չպետք է իշխանությունների վրա անհնարին կամ անհամարժեք բեռ դնեն») և գ) առևտրի կենտրոնի սեփականատիրոջ իրավունքները ըստ Արձանագրություն 1-ին, հոդված 1-ի:
- 31 *Cisse-ն ընդդեմ Ֆրանսիայի* (2002) գործի կետ 37-ում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծեց, որ «Գործնականում միջոցառումների միակ տեսակը, որը չի որակվում որպես «խաղաղ հավաք», նրանք են, որոնց կազմակերպիչներն ու մասնակիցները մտադրված են եղել բռնություն կիրառել»: Տես նաև *G-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության* (1989), որտեղ եվրոպական հանձնաժողովը նշում է, որ «խաղաղ հավաք չի համարվում այն ցույցը, որի մասնակիցները և կազմակերպիչները բռնի մտադրություններ ունեն, որոնք հանգեցնում են հասարակական անկարգությունների»:
- 32 *Plattform "Arzte fur das Leben"-ն ընդդեմ Ավստրիայի* (1988), կետ 32, վերաբերում է երթի և բացօթյա ժամերգության, որ կազմակերպված էր աբորտների դեմ բողոքողների կողմից: Նմանապես, եվրոպական դատարանը հաճախ մատնանշել է, որ ըստ հոդված 10 (2)-ի՝ արտահայտման ազատությունը «կիրառվում է ոչ թե միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» իմաստով, որոնք բարյացակամորեն ընդունվում կամ համարվում են ոչ վիրավորական կամ անտարբերության են մատնվում, այլ նաև այն մտքերի վերաբերյալ, որոնք անվանարկում, անհանգստություն կամ մտահոգություն են պատճառում պետությանը կամ բնակչության որևէ հատվածի: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չկա ժողովրդավարական հասարակություն»: *Handyside-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1976), կետ 49 կիրառվել է *Incal-ն ընդդեմ Թուրքիայի* (1998), կետ 46; *Otto-Preminger Institute-ն ընդդեմ Ավստրիայի* (1994), կետ 49 և համատեղ հատուկ տեսակետ 3; *Muller and Others-ն ընդդեմ Շվեյցարիայի* (1988), կետ 33; *Observer and Guardian-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1991), կետ 59; *Chorherr-ն ընդդեմ Ավստրիայի* (1993), կետ 39:
- 33 Տե՛ս BVerfGE 69, 315 (360) ռազմական օբյեկտների առաջ ճանապարհների արգելափակմանը: Տե՛ս կետ 3. «Նրանց նստացույցը դուրս չի գալիս հիմնարար ազատությունների շրջանակից միայն այն պատճառով, որ նրանց մեղադրում են ուժի գործադրում հարկադրելու մեջ»:
- 34 Եթե «խաղաղ» բառի ավելի նեղ բնորոշում ընդունվեր, ապա իրավունքի չափն ի սկզբանե այնքան սահմանափակ կլիներ, որ սահմանափակող դրույթները (ինչպես, օրինակ՝ այն, ինչ սահմանվում է ՄԻԵԿ-ի հոդված 11(2)-ով) գործնականում անիմաստ կդառնային:
- 35 *Rassemblement Jurassien Unite-ն ընդդեմ Շվեյցարիայի* (1979), էջ 93 և 119; *Christians Against Racism and Fascism-ն (CARAF) ընդդեմ Միացյալ Թագավորության* (1980), էջ 148; *G-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության* (1989), էջ 263; *Anderson-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1997) և *Rai Almond and "Negotiate Now"-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1995):
- 36 Տե՛ս, օրինակ՝ *Plattform "Arzte fur das Leben"-ն ընդդեմ Ավստրիայի* (1988):
- 37 Տե՛ս, օրինակ՝ *Ollinger-ն ընդդեմ Ավստրիայի* (2006):
- 38 Տե՛ս, օրինակ՝ Mary O'Rawe, "Human Rights and Police Training in Transitional Societies: Exporting the Lessons of Northern Ireland", *Human Rights Quarterly*, Vol. 27, No 3, August 2005, pp. 943-968; Mary O'Rawe, "Trasitional Policing Arrangements In Northern Ireland: The Can't And Won't Of the Change Dialectic", *Fordham International Law Journal*, Vol. 26, № 4, April 2003, pp.1015-1073.
- 39 *Hashan and Harrup-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1999), որը վերաբերում էր այն

- բանին, որ բողոքողների առջև պայման էր դրված իրենց չպահել *contra bonos mores* (այսինքն՝ մի կերպով, որը քաղաղացիների մեծ մասի կարծիքով ավելի շուտ սխալ է, քան ճիշտ): Վճռվեց, որ այս հանգամանքը խախտում է ՄԻԵԿ-ի հոդված 10-ը, քանի որ այն բավական հստակ չէր, որպեսզի «սահմանված լինի օրենքով»: Տե՛ս նաև *Steel-ն* ընդդեմ Միացյալ Թագավորության (1998) և *Mkrtychyan-ն* ընդդեմ Չայասամի (2007), կետ 39-43 (որ վերաբերում են «սահմանված կանոններ» տերմինի կանխատեսելիությանը վարչական իրավախախտումների օրենսգրքի հոդված 180.1-ին): Այս վերջին գործում Չայասամի կառավարությունը անհաջող փաստարկներ բերեց առ այն, որ կանոնները սահմանված են եղել Խորհրդային Միության օրոք ընդունված օրենքով, որը, ի թիվս այլոց, 1988 թ. դեկտեմբերի 28-ին ընդունել էր հրամանագիր՝ «ԽՍՀՄ-ում հավաքներ, հանրահավաքներ, փողոցային երթեր և ցույցեր կազմակերպելու և անցկացնելու մասին կանոնների» վերաբերյալ:
- 40 Տե՛ս *Rekvenyi-ն* ընդդեմ *Հունգարիայի* (1999), կետ 34:
- 41 Տե՛ս, օրինակ՝ *Ezelin-ն* ընդդեմ *Ֆրանսիայի* (1991), կետ 45:
- 42 Տե՛ս, օրինակ՝ *Rassemblement Jurassien Unite-ն* ընդդեմ *Շվեյցարիայի* (1979):
- 43 Խնդիրները և նպատակները, որոնց հասնելու համար իշխանությունները օրինական կերպով սահմանափակում են հավաքների ազատությունը, սահմանված են ՔՔԻՄԴ-ի հոդված 21-ում և ՄԻԵԿ-ի հոդված 11-ում: Այսպիսով, միակ նպատակը, որը կարող է արդարացնել խաղաղ հավաքի իրավունքի սահմանափակումը, ազգային անվտանգության կամ հասարակության անվտանգության շահն է, անկարգությունների ու հանցագործությունների կանխումը, մարդկային առողջության ու բարոյականության պահպանությունը կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:
- 44 Որպես այդպիսիք՝ հավաքի ցրումը պետք է համարվի որպես ծայրահեղ միջոց:
- 45 D. Feldman, *Civil Liberties & Human Rights in England and Wales* (Oxford: Oxford University Press, Oxford, 2002) 2nd edition.
- 46 *Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն* ընդդեմ *Բուլղարիայի* (2001), կետ 87: Տե՛ս նաև *United Communist Party of Turkey and Others-ն* ընդդեմ *Թուրքիայի* (1998 թ. հունվարի 30-ի դատավարություն), կետ 47:
- 47 Տե՛ս *Brokdorf-ի* վերաբերյալ *Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի* որոշումը (1985) BVerfGE 69, 315 1 BvR 233, 341/81:
- 48 *Rai, Almond and "Negotiate Now"-ն* ընդդեմ *Միացյալ Թագավորության* (1995):
- 49 Տե՛ս, օրինակ՝ ՄԱԿ-ի Տեսակետի և արտահայտման գծով հատուկ զեկուցողի, ԵԱԴԿ լրատվամիջոցների ազատության հարցերի ներկայացուցչի և OAS արտահայտման ազատության գծով հատուկ զեկուցողի միացյալ հայտարարությունը Ռասիզմի և լրատվամիջոցների վերաբերյալ: Դրական պրակտիկայի օրինակ է Հյուսիսային Իռլանդիայի շքերթների հանձնախմբի գործելակերպը, որը հրապարակում է իրազեկված բոլոր շքերթների մանրամասները՝ դասակարգված ըստ քաղաքների, որտեղ պետք է դրանք անցկացվեն: Տե՛ս <http://www.paradescommission.org>.
- 50 Տե՛ս «Ընդհանուր մեկնաբանություն 18. Անխտրականություն» ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, UN Doc.CCPR General Comment 18 (1989):
- 51 Տե՛ս, օրինակ՝ *Haas-ն* ընդդեմ *Նիդեռլանդների* (2004), կետ 41: ՄԻԵԿ *Thlimmenos-ն* ընդդեմ *Հունաստանի* (2000) դատավարության լույսի ներքո Ռոբերտ Ուինթեմուտը հակաճառում է, որ ՄԻԵԿ-ի հոդված 14-ի մեկնաբանությունը պետք է ընդարձակվի, որպեսզի ոչ միայն հաշվի առնվի մերժումը, այլև մերժման հիմքերը, որոնք կընկնեն կոնվենցիայի մեկ այլ իրավունքի «միջավայրի մեջ» և, այդպիսով, կվերաբերեն հոդված 14-ին: Տե՛ս R. Wintemute, "Within the Ambient: How big is the gap in Article 14 European Convention on Human Rights? Part 1, *European Human Rights Law Review*, №4, 2004, pp. 366-382.

- 52 Տե՛ս *Nicholas Toonen-ն ընդդեմ Ավստրալիայի*, կետ 8.7:
- 53 Եվրամիության Հիմնարար ազատությունների խարտիայի հոդված 21-6-ը նախատեսում է, որ «Ցանկացած խտրականություն, որ բխում է այնպիսի հատկանիշներից, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, էթնիկական կամ սոցիալական ծագումը, գենետիկական առանձնահատկությունները, լեզուն, կրոնը, հավատալիքները, քաղաքական կամ այլ տեսակետները, ազգային փոքրամասնության պատկանելությունը, ունեցվածքը, ծագումը, հաշմանդամությունը, տարիքը կամ սեռական կողմնորոշումը, պետք է արգելվի»: [2000] C364/01, Կարելի է կարդալ http://www.europarl.eu.int/charter/pdf/text_en.pdf:
- 54 Մասամբ նման փաստարկ առաջ բերվեց *Baczowski and Others-ն ընդդեմ Lethausանի* (2006) գործում: Դիմողները նշում էին, որ նրանց նկատմամբ խտրականություն է կիրառվել, նախ՝ որովհետև 2005 թ. Վարչապալում կայացած հասարակական միջոցառման մասնակիցներից չէին պահանջել ներկայացնել «երթևեկության կազմակերպման պլան» և նաև որովհետև նրանց մերժել էին թույլ տալ կազմակերպել «հավասարության երթ» և այլ միջոցառումներ՝ կազմակերպիչների միասնական կողմնորոշման պատճառով:
- 55 *Tlimmenos-ն ընդդեմ Հունաստանի* (2000), կետ 44:
- 56 Անուղղակի խտրականություն է առաջանում այն դեպքերում, երբ օրենքի ակնհայտ ոչ խտրական դրույթը անհամաչափ ազդեցություն է ունենում որոշ խմբերի նկատմամբ:
- 57 *Nachova and Others-ն ընդդեմ Բուլղարիայի* (2005):
- 58 Տե՛ս, օրինակ՝ *Rassemblement Jurassien Unite-ն ընդդեմ Շվեյցարիայի* (1979), էջ 119, *Christians Against Racism and Fascism-ն (CARAF) ընդդեմ Միացյալ Թագավորության* (1980), էջ 148: Նմանապես մտքի, խղճի և կրոնի ազատությունը կարող է իրականացվել եկեղեցական մարմնի կամ դավանաբանական կամ փիլիսոփայական ուղղություն ունեցող կազմակերպության կողմից, ARM chappell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (1987), էջ 246:
- 59 Տե՛ս նաև Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի հոդված 17-ը. «(1) Կողմերը պարտավորվում են չմիջամտել ազգային փոքրամասնություն ներկայացնող անձանց իրավունքներին՝ ազատորեն ու խաղաղ կապեր հաստատելու սահմաններից այն կողմ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես՝ այն անձանց հետ, ում հետ նրանք ունեն էթնիկական, մշակութային, լեզվական և դավանանքի նույնություն կամ միևնույն մշակութային ժառանգություն»:
- 60 Հաստատված է Գլխավոր ասամբլեայի 1992 թ. դեկտեմբերի 18-ի 47/135 որոշմամբ:
- 61 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն 15, «Օտարների վիճակը ըստ դաշնագրի»:
- 62 Տե՛ս Donatella della Porta, Abby Peterson, Herbert Reiter, *The Policing of Transnational Protest* (Canada: Rowman & Littlefield Publishers, 2004):
- 63 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի հոդված 7(c)-ը նույնպես ապահովագրում է կանանց իրավունքը մասնակցելու երկրի հանրային ու քաղաքական կյանքի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների և միությունների աշխատանքին:
- 64 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 15:
- 65 Սկզբունք 1 (5), ՄԱԿ-ի սկզբունքները՝ Հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց պաշտպանության և հոգեկան առողջապահության բարելավման վերաբերյալ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշում 46/119:
- 66 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 1:
- 67 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա, հոդված 11 (2):

- 68 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Ahmed and Others-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1998) և *Rekvenyi-ն ընդդեմ Յունգարիայի* (1999):
- 69 ՄԱԿ-ի Անհատների, խմբերի և հասարակության մարմինների իրավունքներն ու պարտականությունները խթանելու և պաշտպանելու Մարդու համընդհանուր իրավունքների ու հիմնարար ազատությունների հռչակագրի հոդված 5-ը սահմանում է. «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով յուրաքանչյուր ոք իրավունք ունի միայնակ կամ այլ անձանց հետ համատեղ, ազգային կամ միջազգային մակարդակով անցկացնել խաղաղ հանդիպումներ կամ հավաքներ»:
- 70 *Brokdorf*-ի վերաբերյալ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի (1985) BVerfGE 69, 315 1 BvR 233, 341/81 որոշման մեջ, օրինակ՝ «հասարակական կարգը» հասկացվում էր որպես չգրված օրենքների ամբողջություն, որոնց ենթարկվելը համարվում էր անօտարելի նախապայման՝ սահմանված տարածքում մարդկանց օրինակելի համակեցության համար՝ ըստ ժամանակին գերիշխող սոցիալական ու էթիկական տեսակետների:
- 71 *Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի* (2001), կետ 94:
- 72 Տե՛ս *Ezelin-ն ընդդեմ Ֆրանսիայի* (1991) և *Zilibberger-ն ընդդեմ Մոլդովայի* (2004):
- 73 *Incal-ն ընդդեմ Թուրքիայի* (1998) գործի մեջ դիմողի դատապարտումը քրոպական ծագում ունեցող բնակչությանը միասնության և «մարդկանց սեփական ուժերով թաղային կոմիտեներ ստեղծելու կոչով թռուցիկներ պատրաստելու համար» եվրոպական դատարանը որոշեց, որ ոսնահարվել է հայցվորի արտահայտվելու իրավունքը, որ սահմանված է հոդված 10-ում: Իր ենթատեքստի մեջ ընթերցվելով՝ թռուցիկները չէին կարող դիտվել որպես բռնության կոչ, թշնամանքի կամ քաղաքացիների միջև ատելության սերմանում: Ավելին՝ դատարանը վճռեց, որ «թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են պետության նկատմամբ, քան մասնավոր անձանց նկատմամբ»: Պարբերություն 54:
- 74 Առողջության ամենաբարձր հնարավոր ստանդարտի իրավունք. 11/08/2000E/C.12/2000/4 (ընդհանուր մեկնաբանություններ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, քսաներկուերորդ նստաշրջան, ԺՆԱ, ապրիլի 25-մայիսի 12, 2000, օրակարգի հարց #3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացումից բխող մի քանի հարցեր (Ընդհանուր մեկնաբանություն #14 (2000)), «Առողջության ամենաբարձր հնարավոր ստանդարտի իրավունք» (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, հոդված 12):
- 75 Տե՛ս Լեհաստանի սահմանադրական տրիբունալի 2006 հունվարի 18-ի K21/05 որոշումը՝ *Չանրային ճանադարհի վրա հավաք անցկացնելու թույլտվություն սահմալու դաշնացիները*: Անգլերեն թարգմանությունը կարելի է կարդալ http://www.trybunal.gov.pl/eng/summaries/documents/K_21_05_GB.pdf:
- 76 Տե՛ս, օրինակ՝ *Hashman and Hurrup-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1999), որ վերաբերում է «contra bonos mores» վարքագծի օրենքին:
- 77 Վերջին օրենսդրական դրույթի քննադատության մասին կարելի է տեղեկանալ <http://www.bahrainrights.org/node/208>; <http://www.hrw.org/english/docs/2006/06/08/bahrai13529.htm>
- 78 *Norris-ն ընդդեմ Իռլանդիայի* (1988), կետ 44-46:
- 79 Տե՛ս, օրինակ՝ *Tania Groppi*, «Freedom of thought and expression, General Report», University of Sienna, 2003. Կարելի է կարդալ http://www.unis.it/ricerca/dip/dir_eco/COMPARTO/groppi4.doc կայքում:
- 80 ԱՄՆ-ում, *Schneider-ն ընդդեմ նահանգի* 308 US 147 (1939) գործում վճռվեց, որ գոյություն ունի թռուցիկներ տարածելու իրավունք, նույնիսկ եթե այդ թռուցիկները աղտոտում են շր-

ջակայքը: Collin-ն ընդդեմ Չիկագոյի Փարկ շրջանի 460F2d746 (7th Cir.1972) գործում վճռվեց, որ գոյություն ունի հավաքվելու իրավունք բաց տարածքում, որը պարկի տնօրինությունը նախատեսել էր պիկնիկների համար: Eugen Schidberger, Internationale Transporte und Planzuge-ն (2003) ընդդեմ Ավստրիայի Հանրապետության գործում եվրոպական արդարադատության դատարանը վճռեց, որ Գերմանիայի և Իտալիայի միջև Բրեններ խճուղում ցույցի թույլտվությունը, որը մոտ 30 ժամով խցանեց խճուղին, անհամաչափ սահմանափակում էր ԵՅ պայմանագրի հոդված 28-ով սահմանված ապրանքների ազատ տեղաշարժի վրա: Նշվեց երեք պատճառ. (1) խանգարումը կարճ տևեց և միայն առանձին դեպքում: (2) Միջոցներ ձեռնարկվեցին առաջացած խոչընդոտը սահմանափակելու համար: (3) Ցույցի նկատմամբ լայն սահմանափակումներ կիրառելը կհանգեցնեց ցուցարարների՝ հավաքներ անցկացնելու և արտահայտվելու իրավունքից զրկման և, հնարավոր է, առաջացներ ավելի մեծ խանգարումներ: Ավստրիայի իշխանությունները գտան, որ պետք է թույլատրեն ցույցի շարունակությունը, քանի որ ցուցարարներն իրականացնում էին արտահայտվելու ազատության և հավաքների ազատության իրենց հիմնարար իրավունքները, որը երաշխավորված է Ավստրիայի սահմանադրության մեջ: Տե՛ս նաև *Commission-ն ընդդեմ Ֆրանսիայի* (1997): Այս գործը վերաբերում էր ֆրանսիացի ֆերմերների բողոքներին՝ ուղղված ԵՄ անդամ մյուս երկրներից գյուղատնտեսական ապրանքների ներմուծման դեմ: Դատարանը գտավ, որ քանի որ Ֆրանսիայի կառավարությունը չկարողանալով ձեռնարկել անհրաժեշտ և համարժեք միջոցներ՝ մրգերի ու բանջարեղենի ազատ հոսքը անհատ անձանց գործողությունների պատճառով խանգարելը կանխելու համար, չի կատարել ԵՄ համաձայնագրի հոդված 30-ով ստանձնած պարտավորությունները՝ հոդված 5-ի հետ զուգակցված:

- 81 «Մասնավոր կյանքի» իրավունքը վերաբերում է անձի բարոյական և ֆիզիկական անբողջականությանը (*X and Y-ն ընդդեմ Նիդեռլանդների* (1985), և պետությունը պետք է ոչ միայն ձեռնպահ մնա անհատի կյանքի կամայական միջամտություններից, այլ պետք է նաև դրականորեն ապահովի անձնական կյանքի նկատմամբ հարգանքը: Սա կարող է նույնիսկ անձանց փոխհարաբերությունների վրա տարածվել: Այն դեպքերում, երբ պատճառաբանվում է, թե հավաքների իրավունքը խոչընդոտում է մասնավոր կյանքը, իշխանությունները պետք է ստուգեն այդ պնդումների՝ իրականությանը համապատասխանելը և որոշեն, թե որչափով պետք է հանդուրժել այդ ժամանակավոր անհարմարությունը: *Moreno Gomez-ն ընդդեմ Իսթանբուլի* (2004, վերջնականը՝ 2005) գործը որոշ տվյալներ կարող է պարունակել այն բարձր շեմի վերաբերյալ, որ նախ պետք է հաղթահարել, որպեսզի հիմնավորեն հոդված 8-ով սահմանափակումները:
- 82 Տե՛ս, օրինակ՝ *Chaussagnou and Others-ն ընդդեմ Ֆրանսիայի* (1999): Տե՛ս նաև *Gustafsson-ն ընդդեմ Շվեդիայի* (1996): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակորեն սահմանել է ունեցվածքը խաղաղ կերպով վայելելու իրավունքը՝ սեփականատիրական շահերը պաշտպանելու համար: Ավելին՝ որպեսզի համարվի, որ հանրային հավաքը խոչընդոտում է անձի ունեցվածքը վայելելը, առանձնակի բարձր շեմ պետք է հաղթահարվի: Օրինակ՝ բիզնեսները օգուտ են քաղում հասարակական վայրերում գտնվելուց և այդ առումով պետք է հանդուրժեն այդ տարածքի այլընտրանքային օգտագործումը: Ինչպես շեշտվել է նախկինում, հավաքի ազատությունը պետք է դիտվի որպես հասարակական կյանքի նորմալ և սպասելի ասպեկտ:
- 83 *Ollinger-ն ընդդեմ Ավստրիայի* (2006), կետ 46:
- 84 Յոհաննեսբերգյան սկզբունքներ՝ Ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ, UNDoc.E/CN.4/1996/39 (1996)
- 85 *Freedom and Democracy Party (Ozdep)-ն ընդդեմ Թուրքիայի* (1999):
- 86 Տե՛ս, օրինակ՝ Texas-ն ընդդեմ Johnson-ի, 491 US 297 (1989), որի դեպքում ԱՄՆ Գերագույն դատարանը գտավ, որ դրոշի իրկիզման գործողությունը պաշտպանված է ԱՄՆ սահմանադրության Առաջին ուղղումով, որով և իրավունակությունից զրկված է համարում 48 նահանգների օրենքները, որոնք արգելում են ամերիկյան դրոշի իրկիզումը:

- 87 *Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի* (2001):
- 88 Կարելի է կարդալ <http://www.icj.org> կայք: Նմանապես, ՄԱԿ-ի Գլխավոր հակահարձակչության ռազմավարությունը, որն ընդունվել է ամրամ երկրների կողմից 2006 թ. սեպտեմբերի 8-ին, Մաս 4-ում շեշտադրված է, որ «արդյունավետ հակահարձակչական միջոցները և մարդու իրավունքների պաշտպանությունը միմյանց հակասող նպատակներ չեն, այլ փոխլրացնող և միմյանց հզորացնող» և կան «Պետությունները պետք է երաշխավորեն, որ ահաբեկչության դեմ պայքարի ցանկացած միջոց համապատասխանում է իրենց կողմից վավերացված միջազգայնօրենքներով ստանձնած պարտավորություններին, մասնավորապես՝ մարդու իրավունքի գծով»:
- 89 Տե՛ս, օրինակ՝ զեկուցող Լուիս Մարիա դե Պուլիզի «Անդամ երկրներում անվտանգության սեկտորի ժողովրդավարական վերահսկողությունը» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի քաղաքական հարցերի կոմիտեի հաշվետվությունը (2 հունիսի 2005 Doc.10567), կետ 97:
- 90 Ամենաթի հիմքերնշնչի ցանկ POL 30/04/98, Միացյալ Թագավորություն (1998):
- 91 Տե՛ս նաև կետ 25, 1990 թ., ԵԱՀԽ Մարդկային զարգացման կոնֆերանսի կոպենհագենյան հանդիպում:
- 92 Տե՛ս Lawless-ն ընդդեմ Իռլանդիայի (1961), կետ 28: Questiaux Principles: Nicole Questiaux “Study of the implications for human rights of recent developments concerning situations known as states of siege or emergency” UN Doc.E/CN.4/Sub.2/1982/15, 27 July 1982. Ի հավելումն՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի ընդհանուր առաջարկություն թիվ 29 (օգոստոս, 2001) բերում է իրավունքի օրինակներ, այնպիսիք, որոնք չեն կարող անտեսվել:
- 93 Միակուգայի սկզբունքները, կետ 40-41: Հավելված, UN Doc./E/CN.4/1984/4 (1984)5
- 94 Տե՛ս ԲԲԻՄԴ-ի հոդված 4 (1) և Հունաստանն ընդդեմ Միացյալ Թագավորության (1958-1959):
- 95 Տե՛ս Philip Leach, *Taking a Case to the European Court of Human Rights* (Oxford: Oxford University Press, 2005) 2nd edition, p.333.
- 96 *Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի* (2001), կետ 97:
- 97 Նույն տեղում, կետ 94:
- 98 Օրինակ՝ *Patrick Coleman-ն ընդդեմ Ավստրալիայի* (2006), կետ 7.3 (Մարդու իրավունքների կոմիտեն համարեց, որ տուգանքն ու հնգօրյա ազատազրկումը անհամարժեք պատիժ են առանց թույլտվության ելույթ ունենալու համար): Տե՛ս նաև *Ezelin-ն ընդդեմ Ֆրանսիայի* (1991) (հավաք), *Incal-ն ընդդեմ Թուրքիայի* (1998) (արտահայտություն):
- 99 Նման պաշտպանության օրինակ է պարունակվում Հանրային երթերի (Հյուսիսային Իռլանդիայի) 1998 թ. ակտի 6(7) և 6(8) բաժիններում: Օրենքում «խելամիտ պատճառաբանության» պաշտպանության մի քանի ձևեր կարող են լինել, սակայն դրական գործելակերպը ենթադրում է, որ «առանց խելամիտ պատճառի» բառերը պետք է հստակորեն ակնհայտ լինեն որպես բռնության պաշտպանություն և ոչ թե որպես բռնության տարր, որը դեռ պետք է ապացուցվի կամ հերքվի հետաքննության ժամանակ: Տե՛ս “Preliminary Comments on the Draft Law “On Amendments to Some Legislative Acts of the Republic of Kazakhstan on National Security Issues”, OSCE/ODIHR Opinion Nr. GEN-KAZ/002/2005, 18 April 2005:
- 100 Էջ 363: *Zilibberger-ն ընդդեմ Սուդանի* (2004), էջ 10, նշվում է, որ «Անձը չի դադարում օգտվել խաղաղ հավաքի ազատության իրավունքից պատահական անկարգությունների կամ այլ դատապարտելի արարքների համար, որ կատարել են այլ անձինք ցույցի ժամանակ, քանի դեռ խնդրո առարկա անձը մնում է խաղաղ իր մտադրությունների և վարքագծի մեջ»:
- 101 Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համձնաժողով, *Kivenmaa-ն ընդդեմ Ֆինլանդիայի* (1994):
- 102 *Rassemblement Jurassien Unite-ն ընդդեմ Շվեյցարիայի* (1979), էջ 119:

- 103 Վրաստանի սահմանադրական դատարանը չեղյալ հայտարարեց օրենքի մի մասը (հոդված 8, կետ 5), որը թույլ էր տալիս տեղական ինքնակառավարման մարմնին մերժել իրազեկումնը (այսպիսով արդյունավետ կերպով ստեղծելով մի համակարգ՝ նախնական թույլտվության և ոչ թե նախնական իրազեկում) *Georgian Young Lawyers' association Zaal Tkeshelashvili, Lela Gurashvili and Others-ն ընդդեմ Վրաստանի խորհրդարանի* (5 նոյեմբերի, 2002), N2/2/180-183. *Mulundika and Others The People, Supreme Court of Zambia, 1BHRC 199 (10 January 1996)*. *All Nigeria Peoples' Party Inspector General of Police (Unreported, June 24, 2005) (Fed HC(Nig))*:
- 104 Տե՛ս *Oya Ataman-ն ընդդեմ Թուրքիայի* (2006), կետ 41, 43:
- 105 Տե՛ս *Ollinger-ն ընդդեմ Ավստրիայի* (2006), կետ 43- 51, որոնք ուղեցույց են հանդիսանում հակընդդեմ հավաքների նկատմամբ կիրառվող սահմանափակումների համաչափության զննահատման պոտենցիալ գործոնների համար: Սա ներառում է այն հանգամանքը, թե արդյո՞ք ժամանակի և վայրի համընկնումը էական նշանակություն ունի՞ հակընդդեմ հավաքների ասելիքի արտահայտման համար, արդյո՞ք հակընդդեմ հավաքը վերաբերո՞ւմ է հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցի մասին տեսակետներ արտահայտելուն, հակընդդեմ հավաքի չափը, արդյո՞ք այն խաղաղ նպատակներ ունի և բողոքի ի՞նչ ձևեր են առաջարկվում կիրառել (պաստառ, վանկարկում):
- 106 *Plattform "Arzte fur das Leben"-ն ընդդեմ Ավստրիայի* (1988), կետ 32:
- 107 *Axen-ն ընդդեմ Գերմանիայի* (1983) գործում, որը վերաբերում էր արդար դատավարության հարցին, ՄԻԵԴ-ը գտավ, որ «ըստ պատասխանող պետության օրենքի՝ «դատավարության» հասարակական իրազեկման ձևը պետք է գնահատվի խնդրո առարկա գործի բնույթից ելնելով և հոդված 6(1) առարկային և նպատակին դրա համապատասխանությունից»:
- 108 ՄԱԿ-ի «Անհատների, խմբերի և հասարակության մարմինների իրավունքներն ու պարտականությունները՝ համընդհանուր ճանաչում գտած մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները խթանելու ու պաշտպանելու մասին» հռչակագրի հոդված 14 (3), որը սահմանում է, որ «Պետությունը պետք է երաշխավորի և աջակցի, որտեղ անհրաժեշտ է, ազգային ինստիտուտների ստեղծմանը, զարգացմանն ու անկախությանը՝ իրենց իրավասության տակ գտնող ողջ տարածքում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման ու պաշտպանության նպատակով, լինի դա օմբուդսմանի, մարդու իրավունքների հանձնաժողովների կամ ազգային այլ հաստատության ձևով»:
- 109 Տե՛ս նաև, օրինակ՝ Եվրոպական խորհրդարանի 2006 թ. հունիսի 15-ին ընդունած «Ռասիզմի և մարդատյացության հողի վրա Եվրոպայում բռնությունների ավելացման վերաբերյալ որոշման» կետ L-ը, որն անդամ երկրներին հորդորում է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյո՞ք իրենց իրավապահ մարմիններում գոյություն չունի՞ ինստիտուցիոնալ ռասիզմ:
- 110 *Plattform "Arzte fur das Leben"-ն ընդդեմ Ավստրիայի* (1988), կետ 32:
- 111 Տե՛ս, օրինակ, Եվրոպայի խորհրդի Ոստիկանության վարքականոնները (2001) և դրա վերաբերյալ մեկնաբանությունները, որտեղ սահմանվում են պետությունների և անդամ երկրների համար այն սկզբունքները, որոնցով պետք է նրանք առաջնորդվեն իրենց ներքին օրենսդրությունները և ոստիկանության վարքականոնները մշակելիս:
- 112 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ընդգծում է, որ «Գործընկեր երկրները պետք է միջոցներ ձեռնարկեն ոչ միայն կանխելու և պատժելու քրեական գործողությունների հետևանքով կյանքից զրկելը, այլ նաև կանխելու անվտանգության սեփական ուժերի կողմից կամայական սպանությունները»: Ընդհանուր մեկնաբանություն թիվ 6, հոդված 6, 16-րդ նիստ (1982), կետ 3:
- 113 *Osman-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1998), կետ 116:
- 114 Տե՛ս, օրինակ՝ ՄԱԿ-ի «Մարդու հանրահռչակ իրավունքներն ու հիմնարար ազատություններ»

- որ խթանելու հասարակության մեջ անհատների, խմբերի և մարմինների իրավունքների ու պարտավորությունների հռչակագիրը», որը սահմանում է, որ «Պետությունը պատասխանատու է խթանելու և օժանդակելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ուսուցումը բոլոր կրթական մակարդակներում և ապահովելու, որ իրավաբանների, իրավապահ մարմինների աշխատակիցների, զինված ուժերի անձնակազմի և հանրային պաշտոնյաների ուսուցման պատասխանատուները ուսումնական ծրագրերում ներառեն մարդու իրավունքների հիմունքների ուսուցում»:
- 115 Ոստիկանության ուսուցման հետ կապված հարցերը կարող են էական լինել՝ զնահատելու համար, թե պետությունն արդյոք իրականացնո՞ւմ է ՄԻԵԿ-ի հողված 2-ով սահմանված դրական պարտավորությունները: Տե՛ս նաև, օրինակ՝ McCann-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (1995), կետ 151:
- 116 Օրինակ՝ Ամենաթի ինթերնեշնլ, Տասը հիմնարար ստանդարտներ իրավապահ մարմինների աշխատակիցների համար (Amnesty International Index:POL 30/04/98); Եվրոպայի խորհուրդ, Ոստիկանության եվրոպական էթիկայի վարքականոցներ (2001):
- 117 Կարելի է կարդալ http://www.acpo.police.uk/asp/policies/Data/keeping_the_peace.pdf.
- 118 Տե՛ս նաև «ACPO Manual of Guidance on keeping the Peace», p. 35:
- 119 Վարչական որոշ օրենսգրքեր «ակտիվ մասնակցությունը» համարում են վարչական խախտում: Տե՛ս նաև *Ziliberger-ն ընդդեմ Մոլդովայի* (2004), կետ 11:
- 120 *Ziliberger-ն ընդդեմ Մոլդովայի* (2004), էջ 10, մեջբերվել է *Ezelin-ն ընդդեմ Ֆրանսիայի* (1989), կետ 34:
- 121 ՔՔԻՄԴ-ի 9-րդ հողվածը և ՄԻԵԿ-ի 5-րդ հողվածը պաշտպանում են անձի ազատության և անվտանգության իրավունքը: Guenat-ն ընդդեմ Շվեյցարիայի (1995) մի գործ էր, որը վերաբերում էր անձին անազատության մեջ պահելուն՝ հարցաքննության նպատակով: Ոստիկանության գործողությունները զնահատվեցին ՄԻԵԿ-ի 5-րդ հողվածին չհակասող: Թեև անձի ազատության ամեն մի սահմանափակում պարտադիր չէ, որ մշանակի ՄԻԵԿ-ի 5-րդ հողվածով սահմանված ազատությունից զրկում, յուրաքանչյուր սահմանափակում պետք է կատարվի խստորեն անհրաժեշտությունից ելնելով և պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին: Տե՛ս, օրինակ, *Guzzardi-ն ընդդեմ Իտալիայի* (1980), կետ 92-93. «Ազատությունից զրկելու և սահմանափակման տարբերությունը ... պարզապես տարբերություն է աստիճանի կամ ուժգնության միջև և ոչ թե բնույթի կամ նյութի միջև»: Այս փաստարկը բերվեց հավաքների ազատությանը վերաբերող գործի ընթացքում Միացյալ Թագավորությունում: Տե՛ս *Gillan ընդդեմ Commissioner of Police for the Metropolis & Another* (2006), UKHL 12, կետ 21-24. Ավելին՝ ազատության սահմանափակումները կարող են դիտվել որպես տեղաշարժման ազատության ոտնահարում, ինչպես սահմանված է ՄԻԵԿ-ի Զորրորդ արձանագրության հողված 2-ում:
- 122 ՔՔԻՄԴ-ի հողված 12-ը և ՄԻԵԿ-ի Զորրորդ արձանագրության հողված 2-ը:
- 123 *Մամեդով-ը (Ջալալօղլու) ընդդեմ Ադրբեջանի* (2007):
- 124 Գաղտնիության խելամիտ ակնկալիքի գոյությունը կարևոր է, սակայն ոչ վճռորոշ գործոն՝ որոշելու համար, թե արդյոք անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանությունը ՄԻԵԿ-ի հողված 8-ով ազդեցություն կրե՞լ են, թե՞ ոչ: Տե՛ս *P.G. and J.H. v. The United Kingdom* (2001), պարբ. 57: Անձի մասնավոր կյանքը կարող է ազդեցություն կրել իրենց տնից կամ մասնավոր տարածքից դուրս: Տե՛ս, օրինակ՝ *Herbecq and Another v. Belgium* (1998). *Friedl v. Austria* գործում (1995) ոստիկանությունը լուսանկարել է հանրային վայրում տեղի ունեցած ցույցի մի մասնակցի, բացահայտել է նրա ինքնությունը և պահպանել է նրա անձնական տվյալների մանրամասները: Նրանք դա արել են ցուցարարներին ցրվելու հրահանգ տալուց հետո: Եվրոպական հանձնաժողովը որոշեց, որ լուսանկարելը հողված 8-ի խախտում չի ներկայացնում:

- 125 Տե՛ս, օրինակ՝ *Leander v. Sweden (1987)* դարբ. 48; *Rotaru v. Romania (2000)*, դարբ. 43-44; *Amann v. Switzerland (2000)*, դարբ. 65-67: Անվտանգության ծառայությունների կողմից անհատ անձանց վերաբերյալ տվյալների հավաքումը նույնիսկ առանց գաղտնիության մեթոդների, ներկայացնում է միջամտություն հայցվորների անձնական կյանքին: Տե՛ս նաև *Perry v. The United Kingdom (2003)*, դարբ. 38:
- 126 Այս ցուցակը ոչ անբողջական է, ոչ էլ հանձնարարական: Այն ստեղծված է՝ “Derbyshire Constabulary: Debriefing of Policing Operations”, p. 5, <http://www.derbyshire.police.uk/sei/s864/f10.pdf> .
- 127 *CDPP-ն ընդդեմ Մոլդովայի* (2006) գործում, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «չհամոզվեց, որ բավական մեղմ ուսանողական երգ երգելը կարող էր խելամտության սահմաններում մեկնաբանվել որպես հանրային բռնության հրահրում»:
- 128 Տե՛ս *Refah Partisi-ն և այլք ընդդեմ Թուրքիայի* (2003), պարբ. 98: Պետք է նկատի ունենալ, որ *Tsonev-ն ընդդեմ Բուլղարիայի* գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտավ, որ պարզապես «հեղափոխական» բառի օգտագործումը Բուլղարիայի հեղափոխական երիտասարդական կուսակցության կողմից չի ներկայացնում վտանգ Բուլղարիայի պետության կամ Բուլղարիայի հասարակության համար: Ինչպես նաև կուսակցության կանոնադրության մեջ չկար մի բան, որ ենթադրել տար, թե նպատակին հասնելու համար կուսակցությունը բռնության կդիմի:
- 129 Տե՛ս, օրինակ՝ Յոհաննեսբուրգյան սկզբունքների կետ 67, ծանոթագրություն 84:
- 130 *Cisse-ն ընդդեմ Ֆրանսիայի* գործում (2002) ՄԻԵԴ-ը սահմանում է (50-րդ կետում), որ «Ղատարանը չի կիսում Պետության տեսակետն այն մասին, որ այն փաստը, որ դիմողը ոչ օրինական ներգաղթյալ է, բավարար է արդարացնելու համար նրա՝ հավաքների ազատության իրավունքի ոտնահարումը, քանի որ ... (ի թիվս այլոց), ... խախտված օրենսդրության դեմ խաղաղ բողոքը չի պարունակում օրինական նպատակ ազատության սահմանափակման համար ըստ հոդված 11 (2)-ի»:
- 131 Առաջարկություն թիվ R (97) 20-ը ատելություն սերմանող ելույթը բնորոշում է որպես «արտահայտման բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, մարդատյացությունը, հակասեմականությունը և անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը, ներառյալ փոքրամասնությունների, միգրանտների կամ ներգաղթյալ ծագում ունեցողների նկատմամբ ագրեսիվ ազգայնականությամբ կամ ազգակենտրոնությամբ, խտրականությամբ կամ բռնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը»: Տե՛ս նաև ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան և Նախարարների կոմիտեի թիվ (68) 30 որոշումը՝ Ռասայական, ազգային և կրոնական ատելության դեմ միջոցների մասին: Տե՛ս նաև Գոլդբուստի ժխտման գործերը՝ *Ernest Zundel-ն ընդդեմ Կանադայի*, թիվ 953/2000, UN Doc.CCPR/C/78/D/953/2000 (2003), 5.5 կետ . «Սահմանափակումը ծառայում էր հրեական համայնքների՝ կրոնական ազատության, արտահայտման ազատության և խտրականությունից ազատ հասարակության մեջ ապրելու իրավունքի պաշտպանության նպատակին: Այն նաև բխում է դաշնագրի հոդված 20, կետ 2-ից»: Տե՛ս նաև *Robert Faurisson-ն ընդդեմ Ֆրանսիայի* (1996) 550/1993, UN Doc. CCPR/C/58/D/550/1993 պարբ. 9.6. «Քանի որ հայտարարություններն իրենց ենթատեքստում հակասեմական զգացումներ արթնացնող կամ ուժեղացնող բնույթ էին կրում, սահմանափակումը ծառայել է վախի և հակասեմականության մթնոլորտից ազատ ապրելու հրեա համայնքի իրավունքի հարգման նպատակին»:
- 132 Սակայն անհրաժեշտ է նշել, որ Հարավաֆրիկյան սահմանադրության իրավունքների հայտարարագրի գլխի 17-րդ բաժինը հստակորեն բացառում է պատերազմի (ներառյալ՝ անվերապահ բռնության և ատելության քարոզի դրոման) քարոզչությունը:
- 133 Տե՛ս *Stankov and the Macedonian Organization Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի* (1998):
- 134 Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1979-ին ընդունած Ոստիկանության

- մասին հռչակագրի վերաբերյալ որոշման կետ 13-ում նշված է. «Ոստիկանության աշխատակիցները պետք է հստակ և ճշգրիտ ցուցումներ ստանան, թե ինչ ձևով և հանգամանքներում իրենք կարող են զենք օգտագործել»: Նմանապես ՄԱԿ-ի «Իրավապահ մարմինների ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքների» կետ 1-ում նշվում է, որ իշխանությունները և իրավապահ մարմինները պետք է ընդունեն և կիրառեն կարգեր և նորմատիվային փաստաթղթեր՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից մարդկանց նկատմամբ ուժի ու հրազենի օգտագործման վերաբերյալ:
- 135 Տե՛ս *Simsek-ն ընդդեմ Թուրքիայի* (2005), կետ 91:
- 136 Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում Օսթինի գործն ընդդեմ Քաղաքային ոստիկանության կոմիսարի գործը (2005), կետ 510:
- 137 Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի օգտագործման հիմնական սկզբունքները, Սկզբունք 13:
- 138 Նույն տեղում, Սկզբունք 14:
- 139 Նման ուղեցույցի օրինակ է Հյուսիսային Իռլանդիայում ծառայող բանակի սպաների համար հրատարակվածը:
- 140 Հատուկ միջոցների օգտագործման վերաբերյալ լիարժեք հաշվետվություն ապահովելու համար պատկան մարմինները պետք է «ուժը» մեկնաբանեն լայն իմաստով: Տե՛ս, օրինակ՝ ԱՄՆ արդարադատության նախարարության պատրաստած «Ոստիկանության բարոյական հատկանիշների խորացման սկզբունքները» (2001), կետ 7, էջ 5-6: Տե՛ս նաև «Ուժի գործադրման վերաբերյալ հաշվետվություններ» <http://www.ncjrs.gov/pdffiles1/ojrp/186189.pdf> կայքում:
- 141 ՄԱԿ-ի Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի օգտագործման հիմնական սկզբունքները, կետ 1, *Simek and others-ն ընդդեմ Թուրքիայի*, կետ 91:
- 142 Ամենաթի ինթերնեշնլ, ցանկ POL 30/04/98: Այդ սկզբունքների լրիվ տեքստը (կարելի է կարդալ <http://www.web.amnesty.org/library/index/engpol3000419980>) պարունակում է կարևոր բացատրական տեղեկություններ դրանց կիրառման վերաբերյալ:
- 143 Մեջբերում. ցուցում 140, կետ 1 և 4:
- 144 *Simsek-ն ընդդեմ Թուրքիայի* (2005), կետ 91:
- 145 Տե՛ս *McCann-ն և այլք ընդդեմ Թուրքիայի* (1995), կետ 161; *Kaya-ն ընդդեմ Թուրքիայի* (1998), *Kelly and others-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2001), կետ 88, *Jordan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2001), կետ 105; *McKerr-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2001), կետ 111; *McShane-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2002), կետ 94:
- 146 *Kelly-ն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (2001), կետ 94, *Shanaghan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2001), *Jordan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2001), կետ 107, 115; *McShane-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (2002), կետ 94:
- 147 Տե՛ս *Stankov and the United Macedonian Organization Ilinden-ն ընդդեմ Բուլղարիայի*, (2001):
- 148 Օրենքը բխում է Գոլդսթոունի հանձնաժողովի «Հանուն Հարավային Աֆրիկայում խաղաղ բողոքների» հաշվետվության առաջարկություններից (Հարավային Աֆրիկա, Հեյմանն, 1992):
- 149 Օրինակ՝ Հավաքների մասին Վրաստանի օրենքի երրորդ հոդվածը, որը սահմանում է տարբեր դերեր, այսպես կոչված՝ «զխավորի», «վստահված անձի», «կազմակերպչի» և «լիազոր ներկայացուցչի»:
- 150 Տե՛ս կետ 3 “Ensuring protection – European Union Guidelines on Human Rights Defenders”: Հասցեն՝ <http://ue.eu.int/uedocs/cmsuplode/guidelinesDefeders.pdf>.

- 151 Տե՛ս օրինակ՝ Christina Loudes, Handbook on Observations of Pride Marches (Belgium:ILGA-Europe, 2006)
- 152 Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մոնիթորինգի ուսումնական ծեռնարկ, գլուխ 15. Հանրահավաքների և ցույցերի մոնիթորինգը, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ուսումնական նյութերի շարք թիվ 7 (2001): Կարելի է կարդալ http://www.ohchr.org/english/about/publications/docs/train7_a.pdf կայքում:
- 153 Տե՛ս Bryan and Jarman, *Independent Intervention: Monitoring the police, parades and public order* (Belfast: Democratic Dialogue, 1999): <http://www.democraticdialogue.org/r12pp.pdf>
- 154 Justice Berger, Բրիտանական Կոլումբիայի գերագույն դատարանի դատավոր (1980):
- 155 Տե՛ս օրինակ՝ ՔՔԻՄԴ-ի հոդված 19 և ՄԻԵԿ-ի հոդված 10: Տե՛ս նաև Տեսակետի և արտահայտության գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի և ԵԱՀԿ արտահայտման ազատության գծով հատուկ զեկուցողի «Համատեղ հայտարարություն ռասիզմի և լրատվամիջոցների վերաբերյալ» (2001): Այս Ուղեցույցի մշակման ընթացքում անցկացված կլոր սեղանների ընթացքում վկայություններ եղան, որ որոշ երկրներում իրավապահ մարմինները կոտրել են լրատվամիջոցների անձնակազմին պատկանող սեփականությունը: Այդպիսի գործողությունները անթույլատրելի են:
- 156 ՄԱԿ-ի Բնիկ ժողովուրդների իրավունքների հռչակագիրը ներառում է իրավունք՝ տեսակետ արտահայտելու այն որոշումների ու գործողությունների վերաբերյալ, որոնք առնչվում են բնիկների իրավունքներին ու ազատություններին:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի մասին

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՅՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որը կոչված է աջակցելու մասնակից երկրներին «երաշխավորելու հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, հետամուտ լինել օրենքի ուժին, խթանել ժողովրդավարական սկզբունքները և (...) կառուցել, ամրապնդել և պաշտպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև ամրապնդել հանդուրժողականությունն ամբողջ հասարակությունում» (1992 թ. ՅԵԼՍԻՆԿյան փաստաթուղթ):

ԺՅՄԻԳ-ը, որի կենտրոնակայանը գտնվում է Վարշավայում, Լեհաստան, ստեղծվել է 1990 թվականին Փարիզի գազաթնաժողովի ժամանակ՝ որպես Ազատ ընտրությունների գրասենյակ և սկսել է գործել 1991 թ. մայիսից: Մեկ տարի անց գրասենյակի անունը փոխվեց՝ արտացոլելու համար ընդլայնված առաքելությունը, որը ներառում է մարդու իրավունքներն ու ժողովրդավարացումը: Այսօր այն ունի ավելի քան 120 աշխատակից:

ԺՅՄԻԳ-ը **ընտրությունների դիստրիբյուցիոն** գծով Եվրոպայի առաջատար կազմակերպությունն է: Այն ամեն տարի համակարգում և կազմակերպում է հազարավոր դիտորդների ներգրավմամբ մի քանի դիտորդական առաքելությունների տեղաբաշխումը ԵԱՀԿ տարածքում՝ զննհատելու համար ընտրությունների անցկացումը ազգային օրենսդրությունների և միջազգային չափանիշների հիման վրա: ԺՅՄԻԳ-ի յուրաքանչյուր մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս խորքային պատկերացում ձևավորելու ընտրական գործընթացի բոլոր տարրերի մասին: Աջակցության ծրագրերի միջոցով ԺՅՄԻԳ-ը մասնակից երկրներին օգնում է բարելավելու իրենց ընտրական գործընթացը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** գործունեությունը ներառում է հետևյալ թեմատիկ ոլորտները. օրենքի զերակայություն, քաղաքացիական հասարակություն և ժողովր-

դավարական կառավարում, տեղաշարժման ազատություն, գենդերային հավասարություն և օրենսդրական աջակցություն: Ամեն տարի ԺՅՄԻԳ-ն իրականացնում է աջակցության ավելի քան 100 նպատակային ծրագրեր՝ նպատակ ունենալով ինչպես նպաստել և խթանել ԵԱՀԿ սկզբունքներին պետության համապատասխանությունը, այնպես էլ զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԺՅՄԻԳ-ը խրախուսում է **մարդու իրավունքների** պաշտպանությունը տեխնիկական աջակցության ծրագրերի և մարդկային չափման հարցերին նվիրված դասընթացների միջոցով: Այն կատարում է հետազոտական աշխատանք և պատրաստում է հաշվետվություններ մարդու իրավունքներին առնչվող թեմաներով: Բացի այդ, գրասենյակը կազմակերպում է ամենամյա հանդիպումներ՝ վերլուծելու մասնակից երկրների կողմից ԵԱՀԿ մարդկային չափման գծով ստանձնած հանձնառությունները: Իր հակահարձակչական գործունեության մեջ ԺՅՄԻԳ-ը փորձում է իրազեկություն ձևավորել մարդկային չափման հարցերի վերաբերյալ և իրականացնում է ծրագրեր ահաբեկչության վտանգ պարունակող գործոններին դիմակայելու նպատակով: ԺՅՄԻԳ-ը մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և զոհերի իրավունքների առաջնահերթ պաշտպանության քայլերի համակարգմանն ուղղված միջազգային ջանքերի առաջամարտիկներից է:

ԺՅՄԻԳ-ի **հանդուրժողականության և խսրականության** դեմ ուղղված ծրագրերն աջակցում են մասնակից երկրներին իրականացնելու ԵԱՀԿ առջև ստանձնած իրենց հանձնառությունները և հզորացնելու ատելության վրա հիմնված և բռնի դրսևորումներ ունեցող անհանդուրժողականությանն արձագանքելու և դրա դեմ պայքարելու ջանքերը: Ծրագրի նպատակներից է նաև հզորացնել քաղաքացիական հասարակության կարողությունները՝ արձագանքելու ատելության դրդապատճառներ ունեցող հանցանքներին և միջադեպերին:

ԺՅՄԻԳ-ը խորհրդատվություն է տրամադրում մասնակից երկրներին **զնչուների և սին-սինների** նկատմամբ քաղաքականության հարցում: Այն խթանում է կարողությունների զարգացումն ու ցանցերի ստեղծումը զնչու և սինտի համայնքների միջև և խրախուսում է զնչու և սինտի ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմինների աշխատանքին: Գրասենյակը նաև զնչու և սինտի բնակչության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման օղակ է միջազգային և ազգային դերակատարների շրջանում:

ԺՅՄԻԳ-ի բոլոր գործողություններն իրականացվում են ԵԱՀԿ հաստատությունների, ինչպես նաև միջազգային այլ կառույցների հետ սերտ համագործակցությամբ և համակարգմամբ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարելի է այցելել ԵԱՀԿ կայք (www.osce.org/odhir):

Հայաստանի Հանրապետության ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2004 թվականի ապրիլի 28-ին

ԺՈՂՈՎՆԵՐ, ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐ, ԵՐԹԵՐ ԵՎ ՑՈՒՅՑԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի նդասակը և կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակը Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) և իրավաբանական անձանց խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է: Այս իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները և հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելուն ոստիկանության և պետական մարմինների կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

2. Սույն օրենքը կարգավորում է խաղաղ ժողովներ, հանրահավաքներ, երթեր (շքերթներ) կամ ցույցեր (այդ թվում՝ նաև նստացույցեր), ինչպես նաև այլ միջոցառումներ անցկացնելու հետ կապված հարաբերությունները:

(1-ին հոդվածը փոփ. 04.10.05 ՀՕ-183-Ն)

Հոդված 2. Սույն օրենքի իմաստով գործածվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով գործածվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

հրադարակային միջոցառում՝ ընդհանուր օգտագործման տարածքներում տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր կամ այլ պահանջների, խնդիրների ու հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու, տեղեկություններ կամ գաղափարներ փնտրելու, ստանալու կամ տարածելու նպատակով անցկացվող խաղաղ և յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովող ժողովներ, հանրահավաքներ, երթեր (շքերթներ) կամ ցույցեր (այդ թվում՝ նաև նստացույցեր)։

ժողով, հանրահավաք, ցույց՝ մեկ վայրում անցկացվող միջոցառում։

Երթ՝ մեկ վայրից մյուսը շարժվելու միջոցով իրականացվող միջոցառում։ Երթը կարող է անցկացվել նաև տրանսպորտային միջոցներով։

ընդհանուր օգտագործման տարածք՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բաց տարածք (փողոց, հրապարակ, այգի, պուրակ, հողատարածք և այլն), որտեղ քաղաքացիների ազատ մուտք գործելը կամ գտնվելն արգելված և սահմանափակված չէ։

զանգվածային հրադարակային միջոցառում՝ հրապարակային միջոցառում, որին մասնակցում է 100 և ավելի քաղաքացի։

ոչ զանգվածային հրադարակային միջոցառում՝ հրապարակային միջոցառում, որին մասնակցում է 100-ից պակաս քաղաքացի։

հասուկ, կարևորագույն նշանակության օբյեկտ՝ պետական ու ռազմավարական նշանակության, բարձր վտանգավորություն ունեցող և բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտ։

ինժնաբույս հրադարակային միջոցառում՝ կոնկրետ երևույթի կամ իրադարձության կապակցությամբ անհապաղ արձագանքման անհրաժեշտություն ունեցող՝ մինչ այդ երևույթը կամ իրադարձությունը չհայտարարված խաղաղ հրապարակային միջոցառում։

այլ միջոցառում՝ տոնակատարություններ, ծիսակատարություններ, մշակութային կամ մարզական միջոցառումներ։

կազմակերպիչ՝ զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման համար իրազեկում տված կամ ոչ զանգվածային կամ այլ միջոցառումը փաստացի ղեկավարող քաղաքացի կամ իրավաբանական անձ։

հրադարակային միջոցառման մասնակից (այսուհետ՝ մասնակից)՝ քաղաքացի, որը հրապարակային միջոցառման անցկացման ժամանակ գտնվել է հրապարակային միջոցառման անցկացման վայրում՝ նպատակ ունենալով մասնակցել հրապարակային միջոցառմանը։ Հրապարակային միջոցառման մասնակից չեն հրապարակային միջոցառման անցկացման վայրում այդ միջոցառման անցկացման ժամանակ պաշտոնական կամ աշխատանքային կամ ստեղծագործական կամ օրենքով կամ պայմանագրով այլ գործունեություն իրականացնելու նպատակով գտնվող քաղաքացիները, ինչպես նաև այդ միջոցառման լուսաբանման նպատակով ներկա գտնվող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները։

լիազոր մարմին՝ զանգվածային հրապարակային միջոցառումներ անցկացնելու մասին իրազեկումը քննարկող մարմիններ՝ համայնքի ղեկավար, Երևանում՝ Երևանի քաղաքապետ։

(2-րդ հոդվածը լրաց. 11.06.08 ՅՕ-74-Ն)

**Յոդված 3. Ընդհանուր օգտագործման սարածիններում
այլ միջոցառումների անցկացումը**

(3-րդ հոդվածն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն)

**Յոդված 4. Ընդհանուր օգտագործման սարածի չհանդիսացող վայրերում
ժողովների, հանրահավաքների, ցույցերի և այլ միջոցառումների
անցկացումը**

(4-րդ հոդվածն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն)

Յոդված 5. Դատարակային միջոցառման կազմակերպումը և անցկացումը

1. Դրապարակային միջոցառում կազմակերպելու իրավունք ունի քաղաքացին (քաղաքացիները) կամ իրավաբանական անձը (իրավաբանական անձինք):
2. Դրապարակային միջոցառումը կարող է կազմակերպվել և անցկացվել սույն օրենքով սահմանված ձևերից մեկով կամ մի քանիսով:
3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն խոչընդոտելու սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող հրապարակային միջոցառումներին կամ միջամտելու դրանց:
4. Եթե հրապարակային միջոցառումը կազմակերպում է իրավաբանական անձը, ապա կազմակերպիչ է համարվում այն ներկայացնելու իրավունք ունեցողը կամ իրավաբանական անձի կողմից կազմակերպչի պարտականությունը կատարելու համար լիազորված անձը:
5. Մինչև զանգվածային հրապարակային միջոցառման սկիզբը կազմակերպչի փոխարինվելու դեպքում կազմակերպիչը ոչ ուշ, քան հրապարակային միջոցառումն սկսելուց երեք ժամ առաջ, պետք է գրավոր տեղեկացնի լիազորված մարմին կամ դրա ներկայացուցչին՝ կցելով նոր կազմակերպչի համար սույն օրենքով նախատեսվող տվյալները:
6. Չանգվածային հրապարակային միջոցառումը չի կարող սկսվել, եթե չի ներկայացել ոչ մի կազմակերպիչ:
7. Ընդհանուր օգտագործման տարածքներում այլ միջոցառումների, ինչպես նաև ոչ զանգվածային միջոցառումների կազմակերպիչներն իրավունք ունեն այդ միջոցառումներն անցկացնելու սույն օրենքով նախատեսված զանգվածային հրապարակային միջոցառումների համար նախատեսված կարգով:

(3-րդ հոդվածը խմբ., լրաց. 04.10.05 ՅՕ-183-Ն)

Յոդված 6. Դատարակային միջոցառման կազմակերպիչների իրավունքները և դատարականությունները

1. Կազմակերպիչն իրավունք ունի՝
 - 1) իր հայեցողությամբ ընտրելու հրապարակային միջոցառման անցկացման վայրը և ընթացակարգը.

2) ցանկացած պահի դադարեցնելու հրապարակային միջոցառումը.

3) դիմելու ոստիկանության ծառայողներին՝ հրապարակային միջոցառման անցկացման վայրից հարկադիր դուրս բերելու այն քաղաքացիներին, ովքեր կատարում են հակաօրինական արարք կամ խախտում են հասարակական կարգը.

4) ստեղծելու հատուկ տարբերանշաններ կրող չզինված խմբեր (այսուհետ՝ կամավորների խմբեր), որոնք պետք է աջակցեն հասարակական կարգի և օրինականության պահպանմանը.

5) հրապարակային միջոցառումներ անցկացնելուց առաջ և դրա ընթացքում հրապարակային միջոցառման ժամանակ հասարակական կարգի պահպանման կամ միջոցառման մասնակիցների անվտանգությունն ապահովելու հետ կապված հարցերով դիմելու ոստիկանություն.

6) զանգվածային լրատվության, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներով անձամբ կամ այլոց միջոցով տեղեկատվություն տարածելու հրապարակային միջոցառման օրվա, ժամի, վայրի, նպատակների, ընթացակարգի մասին, ինչպես նաև կոչ անելու այդ միջոցառմանը մասնակցելու համար.

7) իրականացնելու մասնակիցների համար սահմանված իրավունքները:

2. Կազմակերպիչը պարտավոր է՝

1) կրել մասնակիցների համար սահմանված պարտականությունները.

2) ապահովել, որ հրապարակային միջոցառումն սկսելուց առաջ հայտնվի իր անունը և ազգանունը, իսկ եթե հրապարակային միջոցառումը կազմակերպվել է իրավաբանական անձի կողմից, ապա նաև իրավաբանական անձի լրիվ անվանումը, միջոցառման նպատակը, հրապարակային միջոցառման ձևը, ինչպես նաև հրապարակային միջոցառման ավարտի մոտավոր ժամկետը: Եթե հրապարակային միջոցառման ընթացքում իրականացվելու է երթ, ապա պետք է հրապարակվեն երթի ուղին և ժամանակացույցը.

3) ձեռնարկել միջոցներ՝ հրապարակային միջոցառման մասնակիցների կողմից օրինականության և հասարակական կարգի պահանջների պահպանման ուղղությամբ.

4) հրապարակային միջոցառման մասնակիցներին հայտնել կամավորների խմբերի առկայության ու նրանց տարբերանշանների մասին.

5) հրապարակային միջոցառման մասնակիցներին անմիջապես տեղեկացնել հրապարակային միջոցառման ժամանակ հակաօրինական արարքները կամ հասարակական կարգի խախտումները վերացնելու մասին ոստիկանության ներկայացուցչի պահանջը.

6) *(6-րդ կետն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):*

3. (3-րդ մասն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):

(6-րդ հոդվածը փոփ. 04.10.05 ՅՕ-183-Ն)

Յոդված 7. Հրապարակային միջոցառման մասնակիցների իրավունքները և դատարանականությունները

1. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի մասնակցելու հրապարակային միջոցառումներին: Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի դադարեցնելու իր մասնակցությունը հրապարակային միջոցառումներին: Ոչ ոք իրավունք չունի պարտադրել քաղաքացուն մասնակցելու որևէ հրապարակային միջոցառման:
2. Հրապարակային միջոցառման մասնակիցները կարող են ունենալ կամ կրել պաստառներ և ցուցադրական այլ նյութեր, ինչպես նաև օգտագործել բարձրախոսներ:
3. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի լուսանկարելու, նկարահանելու կամ ձայնագրելու հրապարակային միջոցառումները:
4. Հրապարակային միջոցառումների մասնակիցներին արգելվում է հրապարակային միջոցառումների ընթացքում կրել, օգտագործել, գործադրել, կիրառել զենք, զինամթերք կամ պայթուցիկ, թունավոր, դյուրավառ կամ այնպիսի այլ առարկաներ կամ նյութեր, որոնք կարող են վնաս հասցնել անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին:
5. Մասնակիցներն իրավունք չունեն հրապարակային միջոցառումների ընթացքում բաժանելու կամ օգտագործելու ոգելից խմիչքներ:
6. *(6-րդ մասն ուժը կորցրել է 04.10.05 ՀՕ-183-Ն):*
7. Հրապարակային միջոցառումների մասնակիցները պարտավոր են՝
 - 1) պահպանել հասարակական կարգը.
 - 2) կատարել կազմակերպչի, կամավորների խմբերի, ոստիկանության ներկայացուցչի օրինական պահանջները և չխոչընդոտել նրանց և լիազոր մարմնի օրինական գործողություններին.
 - 3) հրապարակային միջոցառումը դադարեցվելու դեպքում անհապաղ հեռանալ հրապարակային միջոցառման անցկացման վայրից.
 - 4) չվնասել հրապարակային միջոցառման անցկացման վայրի գույքը, ծառերը, թփերը, կանաչապատ տարածքները.
 - 5) չխոչընդոտել հրապարակային միջոցառման անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը:

(7-րդ հոդվածը փոփ., խմբ. 04.10.05 ՀՕ-183-Ն)

Յոդված 8. Լիազոր մարմնի և ոստիկանության լիազորությունները

1. Լիազոր մարմինը պարտավոր է՝
 - 1) նշանակել իր ներկայացուցչին և այդ մասին անհապաղ հայտնել կազմակերպչին.
 - 2) զանգվածային հրապարակային միջոցառման և իր ներկայացուցչի

մասին հայտնել համապատասխան ոստիկանության մարմին և համապատասխան մարզպետին.

3) ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը զանգվածային հրապարակային միջոցառմանը՝ զանգվածային հրապարակային միջոցառման ամբողջ ընթացքում.

4) իր գործողություններում ղեկավարվել համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

2. Ոստիկանությունը՝

1) պարտավոր է զանգվածային հրապարակային միջոցառման մասին տեղեկատվություն ստանալուց հետո անմիջապես նշանակել իր ներկայացուցչին և այդ մասին հայտնել կազմակերպչին ու լիազոր մարմին.

2) պարտավոր է ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը զանգվածային հրապարակային միջոցառմանը՝ զանգվածային հրապարակային միջոցառման ամբողջ ընթացքում.

3) պարտավոր է ապահովել զանգվածային հրապարակային միջոցառման ընթացքում օրինականությունը և հասարակական կարգի պահպանումը.

4) պարտավոր է զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրից հարկադրաբար դուրս բերել այն անձանց, ովքեր կատարում են հակաօրինական արարք կամ խախտում են հասարակական կարգը.

5) պարտավոր է ապահովել հրապարակային միջոցառման անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը.

6) պարտավոր է իր գործողություններում ղեկավարվել համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

7) կարող է օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշում ընդունել դադարեցնելու սույն օրենքի պահանջների խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումը կամ այլ միջոցառումը և պահանջել կազմակերպիչից դադարեցնելու հրապարակային միջոցառումը.

8) կարող է օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարկադիր դադարեցնել հրապարակային կամ այլ միջոցառումը.

9) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառնություններ:

(8-րդ հոդվածը լրաց., խմբ. 04.10.05 ՅՕ-183-Ն)

Պոզված 9. Հրապարակային միջոցառման կազմակերպման և անցկացման սահմանափակումները

1. Հրապարակային միջոցառումներ կազմակերպելու իրավունք չունեն նախնական կալանքի կամ ազատազրկման վայրերում գտնվող քաղաքացիները,

դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները:

Մինչև 18 տարեկան այն քաղաքացիները, ովքեր օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել լրիվ գործունակ, իրավունք ունեն զանգվածային հրապարակային միջոցառումներ կազմակերպել միայն ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ:

2. Հրապարակային միջոցառումներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու իրավունք չունեն՝

- 1) ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

- 2) զինծառայողները, քրեակատարողական ծառայողները:

3. Արգելվում է հրապարակային միջոցառումների անցկացումը զորամասերի, պաշտպանական նշանակության օբյեկտների, քրեակատարողական հիմնարկների, նախնական կալանքի վայրերի տարածքներից 150 մետրից պակաս հեռավորության վրա:

4. Հրապարակային միջոցառումների անցկացումը լիազոր մարմնի կողմից կարող է արգելվել՝

- 1) կամուրջների վրա, թունելներում, ստորգետնյա տարածքներում, վթարային շենքերի տարածքներում ու շինհրապարակներում, եթե կարող է վտանգվել հասարակական անվտանգությունը, մասնակիցների կամ այլոց առողջությունը.

- 2) Հանրապետության Նախագահի նստավայրից, «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից, գազի ստորգետնյա պահեստարաններից և դրանց սպասարկման կառույցներից, «Օրբիտա 2» վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի հեռավորության վրա, որը ոստիկանությունն անհրաժեշտ կհամարի անվտանգության նկատառումներով.

- 3) եթե առկա են հավաստի տվյալներ, որ միջոցառման անցկացումն ստեղծում է բռնության անմիջական սպառնալիք կամ իրական վտանգ է սպառնում պետական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարոյականությանը, անձանց կյանքին և առողջությանը, այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին կամ անցկացվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական ատելություն բորբոքելու, բռնության, պատերազմ քարոզելու նպատակով կամ կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների կամ էական գույքային վնաս հասցնել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Այդ տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել է

պաշտոնական հիմնավորված եզրակացություն: Նույն կարգով այդ մարմինները եզրակացություն են տալիս այդ հիմքերի վերացման մասին.

4) ընդհանուր օգտագործման տարածք չհանդիսացող վայրերում, եթե խախտվում են այդ տարածքը տնօրինողի, տիրապետողի և օգտագործողի իրավունքները:

Ձանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարան: Դատարանը վճիռ է կայացնում 24 ժամվա ընթացքում: Ձանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշումն անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Մշակութային և մարզական համալիրների տարածքներում հրապարակային միջոցառումները լիազոր մարմնի կողմից կարող են սահմանափակվել դրանցում անցկացվող միջոցառման բնականոն ընթացքը չխաթարելու նպատակով:
6. *(6-րդ մասն ուժը կորցրել է 11.06.08 ՀՕ-74-Ն)*
- 6.1. Ինքնաբուխ զանգվածային հրապարակային միջոցառումը չի կարող տևել վեց ժամից ավելի: Նույն երևույթի կամ իրադարձության առնչությամբ անցկացվող ցանկացած հաջորդող զանգվածային միջոցառում չի կարող ինքնաբուխ համարվել և պետք է անցկացվի իրազեկման սահմանված ընթացակարգով:

(9-րդ հոդվածը խմբ., լրաց. 04.10.05 ՀՕ-183-Ն, 17.03.08 ՀՕ-1-Ն, խմբ., լրաց., փոփ. 11.06.08 ՀՕ-74-Ն)

Հոդված 10. Ընդհանուր օգտագործման սարածֆներում այլ միջոցառումների անցկացումը

1. Բացառությամբ ինքնաբուխ հրապարակային միջոցառումների, զանգվածային հրապարակային միջոցառումներ կարող են անցկացվել միայն լիազոր մարմնին գրավոր իրազեկելուց հետո:
2. Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրավունք ունեն առանց լիազոր մարմնին իրազեկման անցկացնելու այլ միջոցառումներ և ոչ զանգվածային հրապարակային միջոցառումներ՝ չխախտելով հասարակական կարգը: *(Նախադասությունը հանվել է 04.10.05 ՀՕ-183-Ն):*

Ոչ զանգվածային միջոցառման կազմակերպիչներն իրավունք ունեն այդ միջոցառումներն անցկացնելու այլ միջոցառումներ և սույն օրենքով զանգվածային հրապարակային միջոցառումների համար սահմանված կարգով:

3. *(3-րդ մասն ուժը կորցրել է 04.10.05 ՀՕ-183-Ն):*
4. Կազմակերպիչները զանգվածային հրապարակային միջոցառումներ անցկացնելու մասին գրավոր իրազեկում են զանգվածային հրապարակային մի-

ջոցառման անցկացման վայրի համայնքի ղեկավարին, Երևանում՝ Երևանի քաղաքապետին: Իրազեկումը համարվում է օրինական և քննարկման ենթակա, եթե ներկայացված է միջոցառումն անցկացնելու նախատեսված օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օր առաջ, և ոչ շուտ, քան քսան օր առաջ: Եթե զանգվածային հրապարակային միջոցառումն անցկացվելու է երթի ձևով, ապա պետք է իրազեկվեն երթի անցկացման բոլոր տարածքների լիազոր մարմինները:

(10-րդ հոդվածը փոփ., լրաց. 04.10.05 ՉՕ-183-Ն, խմբ., փոփ. 17.03.08 ՉՕ-1-Ն, լրաց.11.06.08 ՉՕ-74-Ն)

Չոդված 11. Զանգվածային հրադարակային միջոցառում անցկացնելու մասին իրազեկման բովանդակությունը և ներկայացնելու կարգը

1. Զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու մասին իրազեկումը, ստորագրված կազմակերպիչների կողմից, պետք է պարունակի՝

1) զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը, իսկ եթե նախատեսվում է նաև երթ, ապա երթի ուղին և մոտավոր ժամանակացույցը.

2) կազմակերպիչների անձնագրային կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները:

Իրավաբանական անձի կողմից զանգվածային հրապարակային միջոցառում կազմակերպվելու դեպքում իրազեկման հետ ներկայացվում է իրավասու մարմնի որոշումն այդ միջոցառումն անցկացնելու մասին:

2. (2-րդ մասն ուժը կորցրել է 04.10.05 ՉՕ-183-Ն):
3. (3-րդ մասն ուժը կորցրել է 04.10.05 ՉՕ-183-Ն):
4. (Նախադասությունն ուժը կորցրել է 04.10.05 ՉՕ-183-Ն)

Մինչև 18 տարեկան այն քաղաքացիները, ովքեր օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել լրիվ գործունակ, պետք է ներկայացնեն նաև ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների գրավոր համաձայնությունը:

Իրազեկումն անձամբ ներկայացնելու դեպքում կազմակերպիչի, ծնողների կամ օրինական այլ ներկայացուցիչների ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի իրազեկումն ընդունող պաշտոնատար անձի կողմից, հակառակ դեպքում պետք է վավերացված լինի մոտարական կարգով:

5. Լիազոր մարմիններ տրված զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացման իրազեկումները մուտքագրվում են այդ նպատակով վարվող հատուկ գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության, իսկ դրանց պատճենները փակցվում են լիազոր մարմնի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Լիազոր մարմինը իրազեկման պատճենը ուղարկում է ոստիկանության համապատասխան մարմիններին:

(11-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 04.10.05 ՉՕ-183-Ն)

Չոդված 12. Չանգվածային հրադարակային միջոցառման անցկացման իրագելման րննարկումը

1. Լիազոր մարմինն իրագելումը քննարկում է այն ստանալու պահից 72 ժամվա ընթացքում՝ ըստ իրագելումների ստացման հերթականության:
2. Իրագելումների քննարկումն իրականացնում և քննարկման արդյունքում լիազոր մարմնի անունից որոշում է ընդունում համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա լիազորած անձը:
3. Իրագելման քննարկումը բաց է: Իրագելման քննարկմանը մասնակցելու իրավունք ունեն կազմակերպիչները և նրանց ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչները:

Իրագելման քննարկումն իրականացվում է անկախ կազմակերպիչների ներկայությունից: Իրագելման քննարկմանը կարող են մասնակցել լիազոր մարմնի հրավիրած այլ անձինք:

4. Իրագելումների քննարկման ընթացակարգը սահմանում է լիազոր մարմինը, սակայն կազմակերպիչն պետք է լիարժեք իրավունք վերապահիվ ներկայացնելու իր տեսակետը: Յուրաքանչյուր իրագելման քննարկմանը մասնակցողները ելույթ ունենալու, հարցեր տալու, հարցերին պատասխանելու, առաջարկություններ կամ միջնորդություններ կատարելու, լրացուցիչ փաստաթղթեր, եզրակացություններ կամ այլ տեղեկատվություն ներկայացնելու իրավունք ունեն: Իրագելման քննարկումը չի կարող մեկ ժամից ավելի տևել: (Նախադասությունը հանվել է 17.03.08 ՅՕ-1-Ն)
5. Եթե կազմակերպիչներն իրագելումը ներկայացրել են թերություններով, ապա լիազոր մարմինը պարտավոր է իրագելման քննարկման ժամանակ բոլոր առկա թերությունների մասին հայտնել քննարկմանը ներկա կազմակերպիչներին կամ նրանց ներկայացուցիչներին՝ հստակ նշելով թերությունները: Յնարավորության դեպքում թերությունները շտկվում են անմիջապես, և իրագելման քննարկումը շարունակվում է:

Իրագելման քննարկումը կամ որոշման ընդունումը կարող է հետաձգվել միայն կազմակերպիչների խնդրանքով, եթե անհրաժեշտություն է առաջացել շտկելու իրագելման մեջ առկա թերությունները, կամ եթե անհրաժեշտ է ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր: Իրագելման քննարկման կամ որոշման ընդունման ժամկետը հետաձգվելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը չի գործում:

6. Իրագելման քննարկման արդյունքում, եթե բացակայում են 13-րդ հոդվածում նշված հանգամանքները, զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման մասին իրագելումն ընդունվում է ի գիտություն, և միջոցառումն անցկացվում է իրագելման մեջ նշված վայրում և ժամին: 13-րդ հոդվածում նշված հանգամանքների առկայության դեպքում որոշում է կայացվում զանգվածային հրապարակային միջոցառումն արգելելու մասին:

7. Լիազոր մարմինն իրազեկման քննարկման արդյունքում ընդունված իր որոշման մասին անմիջապես հայտնում է կազմակերպիչներին, ոստիկանություն, ինչպես նաև դա փակցնում է լիազոր մարմնի՝ դրա համար նախատեսված և բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Ընդ որում, լիազոր մարմնի որոշումը պետք է փակցված մնա համապատասխան տեղում մինչև իրազեկման մեջ նշված կամ լիազոր մարմնի հետ համաձայնեցված զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման օրվա ժամը 18-ը:
8. Եթե իրազեկումը ստանալու պահից 72 ժամվա ընթացքում լիազոր մարմնի որոշմամբ չի արգելվում զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը, ապա կազմակերպիչներն իրավունք ունեն տրված իրազեկման պայմաններով իրականացնելու զանգվածային հրապարակային միջոցառում:

(12-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 04.10.05 ՅՕ-183-Ն, խմբ., փոփ. 17.03.08 ՅՕ-1-Ն, լրաց.11.06.08 ՅՕ-74-Ն)

Հոդված 13. Չանգվածային հրադարակային միջոցառման անցկացման արգելումը

1. Իրազեկման քննարկման արդյունքում լիազոր մարմնի՝ 12-րդ հոդվածում սահմանված կարգով ընդունված որոշմամբ զանգվածային հրապարակային միջոցառումը կարող է արգելվել միայն այն դեպքերում, եթե՝
 - 1) թերությունների մասին զգուշացվելուց հետո իրազեկման հետ չեն ներկայացվել սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված բոլոր փաստաթղթերը, կամ բացակայում է պարտադիր որևէ տվյալ.
 - 2) նշված օրը, ժամին և նշված վայրում անցկացվելու է մեկ այլ զանգվածային հրապարակային միջոցառում, որը բացառում է տվյալ միջոցառման անցկացումը կամ նշված օրը, ժամին և նշված վայրում անցկացվելու է ոչ զանգվածային հրապարակային միջոցառում կամ այլ միջոցառում, որոնց վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով տրվել է իրազեկում, և որը բացառում է տվյալ միջոցառման անցկացումը.
 - 3) առկա են սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերը.
 - 4) *(4-րդ կետն ուժը կորցրել է 17.03.08 ՅՕ-1-Ն):*
 - 5) *(5-րդ կետն ուժը կորցրել է 17.03.08 ՅՕ-1-Ն):*
 - 6) *(6-րդ կետն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):*
 - 7) *(7-րդ կետն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):*
 - 8) *(8-րդ կետն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):*

Երբը կարող է արգելվել, եթե դրա տևողությունն այնքան մեծ է, որ կհանգեցնի այլ անձանց իրավունքների և ազատությունների ոչ ողջամիտ սահմանափակմանը:
2. Չանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելվելու մա-

սին որոշման մեջ պետք է հիմնավոր և հստակ շարադրվեն զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման արգելման պատճառները:

3. Ջանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարան: Դատարանը վճիռ է կայացնում 24 ժամվա ընթացքում: Ջանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին որոշումն անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
4. Եթե իրազեկման քննարկման ժամանակ լիազոր մարմինը գտնում է, որ առկա է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ վերջին պարբերությամբ նախատեսված զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու հիմք, ապա լիազոր մարմինը պարտավոր է կազմակերպչին առաջարկել զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման այլ օրեր (իրազեկման մեջ նշված վայրում և ժամին) և այլ ժամեր (իրազեկման մեջ նշված վայրում և օրը) կամ միջոցառման ձևին վերաբերող այլ պայմաններ (իրազեկման մեջ նշված վայրում և ժամին):

Լիազոր մարմնի կողմից առաջարկվող այլ օրը պետք է լինի կազմակերպիչների կողմից առաջարկվող օրվան հաջորդող երկու օրվա ընթացքում:

Լիազոր մարմնի կողմից առաջարկվող այլ օրվա ժամը պետք է համընկնի կազմակերպիչների առաջարկած ժամին կամ կարող է ունենալ մինչև երեք ժամվա տարբերություն:

5. Եթե իրազեկման քննարկման ժամանակ լիազոր մարմինը գտնում է, որ առկա է սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 4-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով և 5-րդ մասով նախատեսված զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու հիմք, ապա լիազոր մարմինը պարտավոր է կազմակերպչին առաջարկել զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման այլ վայր (իրազեկման մեջ նշված օրը և ժամին):

Լիազոր մարմնի կողմից առաջարկվող այլ վայրը պետք է բավարարի կազմակերպիչների ներկայացրած ողջամիտ պահանջները, մասնավորապես, պետք է ապահովի համապատասխան քանակի մասնակիցների մասնակցության հնարավորությունը, եթե մասնակիցների քանակի մասին իրազեկման մեջ առկա է տեղեկատվություն: Չպետք է առաջարկվեն կազմակերպիչների ընտրած համայնքի տարածքից դուրս, Երևանում՝ առաջարկված թաղային համայնքի տարածքից դուրս վայրեր: Առաջարկվող վայրը հնարավորինս պետք է մոտ լինի իրազեկման մեջ նշված վայրին:

6. Լիազոր մարմնի և կազմակերպիչների փոխադարձ համաձայնության դեպքում կարող է զանգվածային հրապարակային միջոցառման համար ընտրվել ցանկացած այլ օր, ժամ կամ վայր:
7. Սույն հոդվածի 4-6-րդ մասերով նախատեսված՝ լիազոր մարմնի առաջարկներից մեկը կազմակերպիչների կողմից ընդունվելու դեպքում այդ մասին լի-

ազոր մարմինը և կազմակերպիչները կազմում են արձանագրություն, որը կազմակերպիչներին հիմք է տալիս անցկացնելու զանգվածային հրապարակային միջոցառումը:

(13-րդ հոդվածը խմբ., լրաց. 04.10.05 ՅՕ-183-Ն, խմբ., փոփ. 17.03.08 ՅՕ-1-Ն)

Յոդված 14. Հրապարակային միջոցառման դադարեցման հիմքերը և կարգը

1. Ոստիկանության ներկայացուցիչն իրավունք ունի հրապարակային միջոցառման դադարեցման մասին որոշում ընդունելու և սահմանելով դադարեցման համար ողջամիտ ժամկետ՝ կազմակերպիչներից պահանջելու դադարեցնել միջոցառման անցկացումը միայն հետևյալ դեպքերում.

1) զանգվածային հրապարակային միջոցառումն անցկացվում է առանց իրազեկման.

1.1) ինքնաբուխ զանգվածային հրապարակային միջոցառումը շարունակվում է վեց ժամից ավելի.

2) զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելված է.

3) ոստիկանության ներկայացուցչի կողմից զգուշացվելուց հետո հրապարակային միջոցառումը կամ այլ միջոցառում մասամբ կամ ամբողջությամբ շարունակվում է անցկացվել սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում նշված վայրերում, կամ էապես խախտվում է երթի ուղին կամ ժամանակացույցը.

4) ոստիկանության ներկայացուցչի կողմից զգուշացվելուց հետո շարունակում է խախտվել հասարակական կարգը, օրենքի պահանջները, և դրա շարունակմամբ իրական վտանգ է առաջանալու անձանց կյանքին, առողջությանը, պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, ինչպես նաև կարող է եական գույքային վնաս հասցվել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց

5) (5-րդ կետն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):

2. Կազմակերպիչը, սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջը ստանալու դեպքում, պարտավոր է անհապաղ հայտարարել միջոցառումը դադարեցնելու մասին և միջոցներ ձեռնարկել ոստիկանության ներկայացուցչի կողմից սահմանված ժամկետում հրապարակային միջոցառումը դադարեցնելու ուղղությամբ:

3. Ոստիկանությունը հրապարակային միջոցառումը հարկադիր դադարեցնելու իրավունք ունի միայն հետևյալ դեպքերում, եթե՝

1) դադարեցնելու մասին սույն հոդվածով նախատեսված կարգով տրված պահանջը կազմակերպչի կողմից մասնակիցներին անհապաղ չի հայտարարվել.

2) սահմանված ժամկետում հրապարակային միջոցառման դադարեց-

ման պահանջը չի կատարվել և դրա հետագա շարունակումը իրական վտանգ է ներկայացնում անձանց կյանքին, առողջությանը, պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, ինչպես նաև կարող է էական գույքային վնաս հասցվել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

3) (3-րդ կետն ուժը կորցրել է 04.10.05 ՅՕ-183-Ն):

Ոստիկանության ներկայացուցիչը, մինչև հրապարակային միջոցառման հարկադիր դադարեցումը, հրապարակային միջոցառման դադարեցման պահանջի մասին պարտավոր է ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով տեղեկացնել մասնակիցներին՝ նշելով դադարեցման պահանջի իրավական հիմքը և սահմանելով դադարեցման ողջամիտ ժամկետ: Այդ ժամկետում հրապարակային միջոցառումը չդադարեցվելու դեպքում ոստիկանությունն իրավունք ունի հարկադիր դադարեցնելու միջոցառումը օրենքով սահմանված միջոցներով:

4. Հրապարակային միջոցառման դադարեցման կարգը չի կիրառվում, եթե հրապարակային միջոցառման անցկացման վայրում սկսվել են զանգվածային անկարգություններ, որոնք պահանջում են իրավիճակից բխող հրատապ միջոցառումների իրականացում:

(14-րդ հոդվածը խմբ., լրաց. 04.10.05 ՅՕ-183-Ն, փոփ. 17.03.08 ՅՕ-1-Ն, լրաց.11.06.08 ՅՕ-74-Ն)

Հոդված 15. Պատասխանատվությունն օրենքի լուսատվության համար

1. Պետությունը կամ համայնքը պարտավոր է փոխհատուցել իր մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից հրապարակային միջոցառման կամ այլ միջոցառման անցկացումն ոչ օրինական արգելելու և հրապարակային միջոցառման կամ այլ միջոցառման ոչ օրինական դադարեցման հետևանքով դրանց կազմակերպիչներին և մասնակիցներին հասցված իրական վնասը:

Հրապարակային միջոցառումն ոչ օրինական խոչընդոտելու, միջոցառմանը միջամտելու կամ միջոցառումը դադարեցնելու համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի պահանջների խախտմամբ անցկացված հրապարակային միջոցառման կամ այլ միջոցառման կազմակերպիչները կամ դա դադարեցնելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարած կազմակերպիչները և մասնակիցները կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:
3. Որպես կազմակերպիչ՝ պատասխանատվության կարող է ենթարկվել նաև այն քաղաքացին կամ իրավաբանական անձը, որը կազմակերպել և անցկացրել է սույն օրենքի պահանջների խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումը կամ այլ միջոցառում:

Չողված 16. Եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչելի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հուլիսի 29-ի «Ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման սահմանված կարգի խախտման համար պատասխանատվության մասին» N 1289-XI հրամանագրի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում չկիրառելի ՀՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1988 թվականի հուլիսի 28-ի «ՍՍՀՄ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման կարգի մասին» 9306-XI հրամանագիրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ

Ռ. Զոչարյան

2004 թ. մայիսի 4

Երևան

ՉՕ-63-Ն

Հայաստանի Հանրապետության ՕՐԵՆԸԸ

«Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Ընդունվել է 26.12.2008

- Հոդված 1.** «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 28-ի ՀՕ-63-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածից հանել «, Երևանում՝ Երևանի քաղաքապետ» բառերը:
- Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «, Երևանում՝ Երևանի քաղաքապետին» բառերը:
- Հոդված 3.** Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա լիազորած անձը» բառերը:
- Հոդված 4.** Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «թաղային համայնքի» բառերը:
- Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Երևանի ավագանու առաջին ընտրությունների արդյունքով Երևանի ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ հաջորդ երկուշաբթի օրը:

Հայաստանի Հանրապետության նախագահ՝

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. հունվարի 15
ՀՕ-20

